

ՊԱՔՈՒ, 20 (ԱՅՓ).- Արաբական Վրաստանի սեւ ծովեան Սուխաս նաւահանգիստը մղող քարիւղատար խողովակ մը Երկուշաբթի օր վերաբացուած է, շաբաթավերջին փակուելէն ետք, երբ անոր մէկ մասը ենթադրաբար իսպանաւարական գործողութեան մը ենթարկուած է, յայտնուած է «Պի. Փի.» քարիւղի ընկերութիւնը:

Պաքու - Սուխաս խողովակը, որ օրական 40 հազար տակառ քարիւղ կը փոխադրէ, Շաբաթ օր փակուած է, երբ իսպանաւարակներ հարուածած են Սվենէթի գիւղին մօտ՝ Թիֆլիսէն 60 քմ. դէպի արեւմուտք, ըսած են վրացի պաշտօնատարները:

Անոնք յայտնած են, թէ յարձակումը դիտումաւոր փորձ մըն էր վնասելու աւելի լայնածիր կարեւորութեամբ Պաքու - Թիֆլիս - ձէյխան խողովակը, որ երբ 2005ին աւարտի, Կասպից ծովու քարիւղը պիտի փոխադրէ Թուրքիա, անցնելով Վրաստանէն:

ԼԻԲԱՆԱՆ - ՄԱԼԵՉԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԳՏՆՈՒՄ ԼԱԻՎՈՅՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ՎՐԱՅ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ երեկոյեան ընդունեց Մալեպիոյ վարչապետ Մահաթիր Մոհամէտը, որ պաշտօնական երկօրեայ այցելութեամբ կը գտնուի Պէյրութ:

Նախագահ Լահուտի եւ վարչապետ Մոհամէտի հանդիպումին ներկայ էին խորհրդարանի նախագահ Նեպիի Պարրի, վարչապետ Ռաֆիք Հարիրի, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրայի եւ փոխ վարչապետ Իսամ Ֆարէս, ինչպէս նաեւ մալեպիացի նախարարներ եւ անոնց լիքանակի պաշտօնակիցները:

Հանդիպումին նախագահ Լահուտ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի տնտեսութեան օժանդակելու Մալեպիոյ պատրաս-

տակամութեան համար, որ ցուցաբերուեցաւ «Փարիզ-2» ժողովին:

Մալեպիոյ վարչապետը երէկ պաշտօնական երկօրեայ այցելութեամբ մը ժամանեց Պէյրութ՝ գլխաւորելով պետական պաշտօնատարներու պատկերասրահը:

Վարչապետ Մոհամէտը դիմաւորեց վարչապետ Ռաֆիք Հարիրի, ներկայութեամբ նախարարներ՝ Մահմուտ Համմուտի, Ֆուատ Սինիորայի, Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտունի, Նեպի Միքաթի, Կանաքան ղեսպաններու, Լիբանանի մէջ Մալեպիոյ հիւպատոս Օմար Ժունայի, նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սուհէլ Պուսի, Պէյրութի քաղաքապետ Ապտէլ Մենէմ

Արիսի:

Օղակայանէն վարչապետ Մոհամէտ փոխարտուեցաւ Քորայթիս, ուր վարչապետ Հարիրիի հետ քննարկեց Լիբանան - Մալեպիա երկկողմանի յարաբերութիւնները եւ վանոնք բարելաւելու ու ամրապնդելու հեռանկարները:

Հանդիպումին ետք վարչապետներ Մոհամէտ եւ Հարիրի տուին մամլոյ միացեալ ասուլիս մը, որուն ընթացքին շեշտեցին մալեպիական ներդրումներու անհրաժեշտութիւնը Լիբանանի մէջ յատկապէս բնական կապի մարպէն ներս:

Նշենք, որ «Փարիզ-2» ժողովին ետք Մալեպիա առաջին երկիրն է, որ իր խոստացած 300 միլիոն տոլարի գումարը յանձնեց Լիբանանի:

ՊԱՂՏԱՏ ԽՈՍՏԱՅԱԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՄԱԿԻ ԶԵՆՔԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒՆ

Իրաք եւ ՄԱԿ տար կէտերէ բաղկացած միացեալ յայտարարութիւն մը հրատարակեցին երէկ: Յայտարարութեան միջոցով Պաղտատ խոստացաւ թափ տալ գործակցութեան, որ կը պահանջուի ՄԱԿի քննիչներուն կողմէ՝ Ապահովութեան Խորհուրդին ներկայացուելիք տեղեկագրերէն մէկ շարքի առաջ:

Յայտարարութեան լոյսին տակ, քննիչներուն կանչ լոյս պիտի տրուի այցելելու եւ քննութեան ենթարկելու որեւէ վայր (նոյնիսկ սեփական բնակարաններ), ինչպէս նաեւ՝ իրաքի գիտնականները ազատութիւնը պիտի ունենան հարցազրոյցներ տալու, յայտնեց գլխաւոր քննիչ Հանս Պիլքս: Ան աւելցուց, որ ՄԱԿ կ'ուզէ ազդու եւ հաւաստի քննութիւններ, որոնց յառաջխաղացքը արգելափակող կարգ մը գոտարութիւններ լուծուեցան միացեալ յայտարարութեամբ: Պիլքս դիտել տուաւ սակայն որ տակալին գոյուցութիւն ունին հիմնական խոչընդոտներ, որոնք չեն յաղթահարուած: Պիլքս կ'ակնարկէր Անթրաքսի եւ «Սքուտ» հրթիռներուն:

Իրաքի բարձրաստիճան պաշտօնատար եւ նախագահական խորհրդատու Ամէր Սաատի ըսաւ, որ Պիլքսի եւ Մոհամէտ Պարատի հետ հանդիպումները յատկացուեցան քննութիւններուն եւ անոնց արգելիչներուն: Սաատի աւելցուց, որ իրաք պիտի բանայ քննիչներուն պահանջած բոլոր դոնորը: Յայտարարութեան կէտերէն մէկը կը նշէր նաեւ, որ իրաք անհրաժեշտ բացատրութիւններ տուած է գտնուած կարգ մը փաստաթուղթերու մասին: «Հանդիպումները չինիչ ու արդիւնաւէտ էին», աւելցուց Սաատի: Պարատի եւ Պիլքս երէկ Պաղտատէն Աթէնք մեկնեցան: Կը նախատեսուի, որ անոնք շուտով վերադառնան՝ ամբողջացնելու համար կատարուելիք արժեւորումը:



Պիլքս եւ Պարատի մամլոյ ասուլիսի ընթացքին

Միւս կողմէ, Իրաք կոչ ուղղեց ՄԱԿի սանձելու կարգ մը քննիչներուն հրահրիչ գործելակերպը, որ կը քաջալերուի Միացեալ Նահանգներու կողմէ: «Սաուտ» պաշտօնաթերթը կը գրէր, որ քննիչները ընդունելի գործելակերպով մը սկսան աշխատանքի, սակայն կարծ ժամանակ մը ետք, անոնք հետագան իրենց առաքելութեանն՝ լրտեսութեան հետ կապ ունեցող տեղեկութիւններ քաղելով: Օրաթերթը աւելցուց, որ

Շաբ.ը՝ էջ 10

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՅԵՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄԻՐ Կ'ԸՆԵ ՆԱԽԱԳԱՆ ԶՈՉԱՐԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան վերջերս Գերմանիա կատարած իր այցելութեան ընթացքին «Գերմանական Ալիք» ձայնասփիւռին տրուած հարցազրոյցի մը մէջ յայտարարած է, թէ Լեւոնային Ղարաբաղի տարածքային փոխանակում չեն նախատեսեր: Քոչարեան դիտել տուած է, թէ բանակցային գործընթացի աշխուժացում կարելի է ակնկալել Ազրայէյանի մէջ կայանալիք նախագահական ընտրութիւններէն ետք: «Մենք կը փորձենք զօրաշարժի ենթարկել բոլոր միջոցները եւ հաւանական է, որ աւելի աշխուժ ձեւով յառաջանանք», ընդգծած է նախագահ Քոչարեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆ Չ'ԸՆՉԵՈՒՄ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 19 Յունուարին «Ռոսիա» պատկերասփիւռի կայանի «Ջերբալո» յայտագիրին տրուած յատուկ հարցազրոյցի մը ընթացքին, պատասխանելով ակնդիրի մը հարցումին, յայտնեց, որ Հայաստանի սահմանադրութիւնը երկբաղաքացիութեան կարելիութիւն չ'ընձեռեք, սակայն աւելցուց, որ այս տարուան Մայիսին կը նախատեսուի սահմանադրական բարեփոխումներու շուրջ հանրաքուէ կատարել: «Բարեփոխումներու թղթածրարին մէջ չ'են ներառուած երկբաղաքացիութիւնը արգիւղ յօդուածը: Յուսանք, որ հանրաքուէն յաջող ձեւով կ'իրականացուի, որուն կը հետեւի երկբաղաքացիութեան մասին օրէնքի ընդունումը», դիտել տուաւ նախագահ Քոչարեան:

Նախագահ Քոչարեան ընդգծեց, որ երկբաղաքացիութեան օրէնքի լիարժեք կիրարկման համար անհրաժեշտ են երկկողմանի համաձայնագրեր:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՅԵԼԵՑ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲ



Հանդիպումի ընթացքին
(Լուսանկարներ՝ ՍԹԻՏՏՕ ԱՇԼԱԿԻ)

Ռուսահայոց Միութեան նախագահ Արա Աբրահամեան երէկ այցելեց Հ. Յ. Դ. «Սարգարապատ» ակումբ, ուր ընդունուեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ընկերներուն կողմէ:

Ա. Աբրահամեանի կ'ընկերանային Գրիգոր Վրդ. Զիֆթճեան, միութեան փոխ նախագահ Յարէթ Թոփալեան եւ միութեան Նիւ Եորքի գրասենեակի պատասխանատու Կարէն Կակոսեան:

Շաբ.ը՝ էջ 3

ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՔԻ ՀԸՁՊԱԼԼԱՅԻ

Լիբանանահայ կուսակցութիւններու եւ պաղեստինեան ուժերու համախմբումին կազմակերպութեամբ, երէկ ԵՆՆԵՍՄՔՕԻ սրահին մէջ տեղի ունեցաւ հաւաք մը, իրեն կարակցութիւն չ'ըզպալլայի, եւ իրեն բողոք Բանաստի արտաքին գործոց նախարարութեան կողմէ չ'ըզպալլայի անունը ահաբեկչութեան կազմակերպութիւններու ցանկին վրայ դրուելուն դէմ:

Հաւաքին խօսք առին Ղոզմի կուսակցութեան ղեկավար Ժւարան Արաբի, Պասա կուսակցութեան ղեկավար Երեսփոխան Ասէմ Բասսո, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միլիթարեան, չ'ըզպալլայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Բասէմ, Փաղանդաւոր կուսակցութեան փոխ կուսակցապետ Ռաշատ Սալամէ, նախարար Ղազի Արիտի եւ երեսփոխան Ուսամա Սաատ: Իր խօսքին մէջ Յ. Միլիթարեան նշեց, որ աշխարհ այսօր գիտէ ազատագրութեան պայքարին իմաստը, սակայն ամէն միջոցի կը դիմէ եւ կ'օգտագործէ իր բոլոր կարելիութիւնները, որպէսզի խեղաթիւրէ իրականութիւնը, եւ սուտերով խաբէ հանրային կարծիքը՝ ազատագրութեան պայքարը նոյնացնելով ահաբեկչութեան հետ: «Այս տրամաբանութիւնը կը մերժուի ազատագրական պայքար մղած ժողովուրդներուն կողմէ, որոնք անկախութեան տիրացած են անոր շնորհիւ: Անոնք նաեւ իրազեկ են, թէ իրենց ճակատագիրը որոշելու համար մարտնչող ժողովուրդներուն արդար պայքարը ինչպէս կը նենգափոխուի», ըսաւ ան:

ՀԱԿԱԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՁ

ԼՈՆՏՈՆ, 20 (ԱՅՓ).- Բրիտանիոյ ռադիկալները Երկուշաբթի օր ձեռնարկած մեծ գործողութեան մը ներխուժելով հիւսիսային Լոնտոնի մէկ մկկիթը, ուր յաճախակի օրէն կ'այցելէին իսլամական ծայրայեղականներ եւ ձեռնարկած 7 հոգի՝ համաձայն ահաբեկչութեան դէմ օրէնքին: Գործողութիւնը կապուած է Լոնտոնի ռադիկալներու վերջերս ձեռնարկած մէկ այլ գործողութեան ընթացքին, մահացու թոյնի մը յայտնաբերումին:

Սքոթլենտ Եարտի մէկ բանբերը յայտնած է, թէ Կիրակիէն Երկուշաբթի օր լուսնոյ գիշերը մկկիթին դէմ տեղի ունեցած գործողութիւնը «նախնայեալ ծրագրուած էր» եւ պայն գլխաւորած են գաղտնի սպասարկութիւնները: Ոստիկանութիւնը ըսած է, որ ներխուժումը կապուած է մահացու ռի-



Ոստիկան մը փաստաթուղթերը կը փոխադրէ մըզկիթէն

աւնկոչուած թոյնին յայտնաբերումին՝ այս ամ-

սուան սկիզբը Լոնտոնի մէջ տեղի ունեցած գործողութեան մը ընթացքին: Այդ յայտնաբերումը ապահովութեան իմաստով մեծ ահապանք ստեղծած էր: Երկուշաբթի օրուան

ճար եւ 120 վայրկեան
Շաբ.ը՝ էջ 10

Շաբ.ը՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՐՈՒՆ ՔԱՐՈՋԱՐՇԱԻԸ ՍԿՍԱԻ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Ցանկին մասին Զուլալար 20ի որոշումով երէկ սկսաւ Հայաստանի նախագահական ընտրութիւններու (19 Փետրուար) քարոզարշաւը: Ցանկին մասին ճշգրէց Հայաստանի հանրային պատկերասփիւռէն եւ ձայնասփիւռէն թեկնածուներուն կարգը:

Ինչ կը վերաբերի հանրային պատկերասփիւռին, թեկնածուները Յունուար 21էն Փետրուար 17 օրական 6էն 10 վայրկեան տեւողութեամբ կ'ընտրուին անվրձար կերպով: Կարծուի, որ օգտուելի պատկերասփիւռէն, քարոզական յայտագրերը տրուած համար: Նշենք, որ իրաքանչիւր թեկնածու ունի 60 վայրկեան անվր-

Շուկանաւորութեամբ՝
Խորհրդարանի փոխ նախագահ
ԷԼԻ ՖԵՐՉԼԻԻ
«ITALIA FILM» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
Ը. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՍԻՆԸ
Կը կազմակերպեն

ԱԹՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» ֆիլմի
ցուցադրութեան պաշտօնական բացումը Լիբանանի մէջ:
Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 21 Յունուար 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Planet Abraj սրահին մէջ, Center Abraj:
Մուտքը՝ հրաւիրատուով
Ծանօթ.- ԸՐԱԽԻՐԱՏՈՍՄԵՐԸ ՓՈՒՍԱՅԵԼԻ ՉԵՆ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԵՍՊՈՆԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. Կաթողիկոս երկ քննունդը Լիբանանի մեջ Գերմանիոյ դեսպան Քեմֆի Սիքորան: Խօսակցութեան նիւթ դարձան Լիբանանի ներքին կացութիւնը եւ Իրաքի այժմու իրավիճակը, որուն մասին դեսպանը վեհափառ հայրապետին ներկայացուց իր պետութեան տեսակետը եւ մտահոգութիւնները:

Կիրակի օր Անթիլիասի Մայր տաճարէն ներս տեղի ունեցած միջեկեղեցական արարողութեան անդրադառնալով՝ դեսպանը բարձր գնահատեց վեհափառ հայրապետին պատգամը:

Դեսպան Սիքորա Արամ Ա. Կաթողիկոսին հետ նաեւ խօսեցաւ յառաջիկայ օրերուն գերմանական եկեղեցիներու հոգեւոր պետին Անթիլիաս այցելութեան մասին:

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՅՑԵԼԵՑ ԸԱՅԿԱԶԵԱՆ ԸԱՄԱԼՍԱՐԱՆ



Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ալտայ Ռահիմ Մարտ երկ այցելեց Հայկական համալսարան, ուր հանդիպում մը ունեցաւ համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոյ Հայտնոսեանի եւ համալսարանի տարբեր բաժանումներու պատասխանատուներուն հետ:

Հանդիպումին քննարկուեցան գիտական եւ կրթական ծրագիրներ:

Հանդիպումին ետք Մարտ այցելեց համալսարանի տարբեր բաժնիները, ինչպէս համակարգիչի կեդրոնը, կենսաբանութեան, քիմիագիտութեան եւ բնագիտութեան տարրալուծարաններն ու դասարանները, ուր կրոյց ունեցաւ ուսանողներու հետ:

Վեր. Փոյ Հայտնոսեան շնորհակալութիւն յայտնեց նախարար Մարտի՝ կրթութեան մարզին նկատմամբ ցուցաբերած հոգատարութեան համար եւ շեշտեց, որ համալսարանականներու գոյութիւնը անհրաժեշտութիւն մըն է երկրին մէջ առողջ ընկերութեան մը ստեղծման իմաստով:

Վեր. Հայտնոսեան Հայկական պիւնտի միջոցով Մարտի հրէ բարեկամութեան եւ յարգանքի յուշանուէր:

Ընկերային գիտութիւններու բաժանումի վարիչ դոկտ. Արտա Էքմէզճի ներկայացուց 48ամեայ համալսարանին պատմութիւնը եւ անոր որդեգրած կրթական ուղին:

ՌՈՒՍԱԶԱՅՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն



Արահամեան ծանօթացուց միութեան կառուցը, նպատակն ու աշխատանքները: Ապա խորհրդակցութիւնները կեդրոնացան համահայկական տարրողութեամբ աշխատանքային ծրագիրներու վրայ:

Հանդիպումին ետք, պատուիրակութիւնը, ընկերակցութեամբ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ընկերներուն, այցելեց լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան ընթացքին կոհուած նահատակներուն յուշակոթող, ուր վետեղեց ծաղկեպսակ մը:

السفير
الخبز
الذير
الاستقبل
الانوار

20 Յունուարի տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակի տակ առած է նախագահ Լահուտի եւ վարչապետ Հարիրիի հանդիպումը, Իրաքի ապաքինման գործընթացին հսկող ՄԱԿի գլխաւոր քննիչներ Հանս Պիլքսի եւ Մոհամէտ Պարատի Պաղատաւ այցելութիւնը եւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի կողմէ «խաղաղութեան քարտէս»ի մերժումը:

«Լիուս» գրած է, թէ երկու նախագահները իրենց հանդիպումին ընթացքին փակեցին անհասկացողութեան էջը. Դամակոս ուժեղ կերպով յայտնեց իր կարգը: Վարչապետ Հարիրիի տեսակցեցաւ Լահուտին եւ Դաւակիի հետ, նշած է թերթը:

«Նահար»ի համաձայն, Լահուտ - Հարիրիի հանդիպումը կը բարձրացնէ «միասնականութեան» նշանաբանը: «Հանդիպումը յատկանշուեցաւ խոր անկեղծութեամբ, իրարու բացուելու ճիգով, ապա լռութեամբ: Բիջիւնիսը հանդիսացաւ տարակարծութիւնները ծածկելու առաջին փորձը», գրած է օրաթերթը:

«Անուար» գրած է. «Չիշատակուող պատճառներով, առաւօտեան հանդիպումը յետաձգուեցաւ երեկոյ-

եան: Հանգիստ շաբաթավերջ մը նախագահներուն համար անոր ընթացքին վարչապետը իջաւ «տարակարծութիւններու թատրոն»ի վրայ:

Ըստ «Սաֆիր»ի, Քրտահի կառչած կը մնայ բիջիւնիսը ղեկավարելու որոշումին, իսկ Սիւնիթա կ'ուզէ արագացնել սեփականաշնորհման գործընթացը: Լահուտ - Հարիրիի հանդիպումը կ'ուղղուի դէպի լրատուական պիւնտի միջոցով, նշած է թերթը:

«Երեսփոխան Քանուկ կը յայտարարէ, թէ սահմանադրութիւնը նախարարաց խորհուրդի իրաւարարն է: Պատասխանի հանդիպումին նշանաբանը եղաւ «Շարքերու միասնականութիւն», գրած է «Մուսթաքալ»:

«Քիֆահ Արապի»ի համաձայն, Քրտահի բիջիւնիսի երկու ընկերութիւններէն կը պահանջէ յատուկ սարք մը վետեղել, որ նախարարութեան մուտքերուն հսկէ: Լահուտ - Հարիրիի հանդիպումը կ'իրագործէ «լրտութեան համաձայնութիւնը»:

Ըստ «Պայրաք»ի, Պատասխանի հանդիպումով նոր էջ մը կը բացուի Լահուտի եւ Հարիրիի միջեւ: Պերի այցելեց Հարիրիի, որ Դամակոսէն իրեն հետ բերած էր հանդարտեցման խրատներ:

«Տէլի Սթար»ի համաձայն, հանդիպումին ընթացքին նախագահն ու վարչապետը փորձեցին յարմար լուծումներ գտնել սոկայ հարցերուն:

ՄԱԿի ապահովութեան քննիչներու խումբին պատասխանատուներուն Իրաք այցելութեան մասին «Պայրաք» գրած է, թէ Պիլքսի եւ Պարատի մէջ ունեցան դրական բանակցութիւններ: Ուաշինկթընի պիւնտի ուսումնասիրէ Սատտամի եւ իրաքցի ղեկավարութեան ներում շնորհելու կարելիութիւնը, եթէ անոնք ընդունին արտասահման մեկնելու ընտրանքը:

«Անուար» նշած է, թէ Ուաշինկթընի մէջ Պիլքսի ցուցեց իր շարունակուելու եւ կրօնական անձնաւորութիւնները վատիկանէն կը պահանջեն պատերապմը կասեցնել:

«Լիուս»ի համաձայն, Իրաքի դէմ պատերապմի կայացման դէմ բողոքող ցուցեր կը ծաւալին աշխարհի տարածքին... եւ կը պաշարեն Սպիտակ

չեռտապնդէ Սատտամը եթէ ան արտասահման մեկնի. Պիլքս եւ Պարատի յատուկ պատգամ մը փոխանցեցին Պաղատաի:

Պաղատաի նաեւ տագնապի մասին «Սաֆիր» նշած է, թէ Շարուն կը յայտարարէ, որ միջապագային քառակեր ոչինչ է եւ պետք չէ պայման լրջութեամբ նկատի ունենալ:

Ըստ «Լիուս»ի, Շարուն կը յայտարարէ, թէ խաղաղութեան քարտէսը «ոչինչ է»: Գահիրէի հանդիպումը՝ Չորեքշաբթի օր, իսկ «Համաս» կը մերժէ գործողութիւններու կասեցումը:

«Նահար» նշած է, թէ պաղատաիցիները, Սուրիան եւ Հրկալ-լան պզուշացնելով՝ Շարուն «խաղաղութեան քարտէսը» անիրական կը նկատէ, իսկ միջապագային քառակեր «ոչինչ» կ'որակէ:

«Քիֆահ Արապի»ի համաձայն, Շարէհ նախագահ Ասատին նամակներ փոխանցեց Խաթմիի եւ Ապտալ-լա իշխանին: Շարէհ շրջապատուի նպատակն է պատրաստել Դամակոսի շրջանային ժողովը, իսկ Սեւոտական Արաքի իր սկզբնական համաձայնութիւնը կու տայ Թուրքիոյ վեհաժողովին:

ԿՈՒՇՈՒԻ

• Computer Science BSh
վկայեալ մը: Ընդամայնէ 03-330888 առտուան ժամը 8:00 4:00ի միջեւ: Առաւելագոյնը մինչեւ 24 Յունուար 2003:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

• Սորայր Բակլայեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Կարապետ Բակլայեան 50 տոլար՝ ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան:

• Ներսես Չոլաքեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Քիւզնուր եւ Սեդա Մետրոպոլեան 20,000 Լ. ռ.՝ ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան:

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ - ՀԱՐԻՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ ԵՐԵՒՅԹ Է

Կ'ԸՍԵ Ս. ՅՐԵՆԺԻԷ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ քորայթմի մէջ ընդունեց հիւսիսի երեսփոխաններու պլոքի մէկ պատուիրակութիւնը, որուն ընկերակցեցան առողջապահութեան նախարար Սէյման Յրենժիք եւ հանրօգուտ շինութեանց եւ փոխարանի շրջաններու հարցերու նախարար Նեժիպ Միքաթի:

Հանդիպումին ետք երեսփոխան ժիհատ Սամատ ըսաւ, որ վարչապետ Հարիրիի հետ քննարկուած կեդրոնացած է Մընիքի - Տընիքի շրջանի կարիքներուն ինչպէս նաեւ Քուրայի եւ Պարթունի մէջ բարգաւաճման անհրաժեշտ ծրագիրներու գործադրութեան վրայ:

Միւս կողմէ, Յրենժիք լրագրողներուն հարցումներուն պատասխանելով ըսաւ, որ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Հարիրիի միջեւ հանդիպումը շատ լաւ երեւոյթ է երկրին համար եւ դրական մթնոլորտ ստեղծած է, իսկ բիջիւնիսի հեռաձայնի մարզի ապաւենականացման շուրջ բարձրացած աղմուկին ակնարկելով՝ Յրենժիք շեշտեց, որ համաձայնութիւն մը պետութեան գերագոյն շահերուն համար կ'ըլլայ, եւ նկատել տուաւ, որ ամէնէն կարելիոր հարցը իշխանութեան պետերուն միջեւ կասկածի չգոյութեան հարցն է:

ASHJIAN TOURS
Ս. Յարութեան եւ 24 Ապրիլի առիթներով առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ Տօրեայ շրջապատու - ուխտագնացութիւն 19ԵՆ 24 Ապրիլ, Հալեպ 2 գիշեր, Տէր Զօր 2 գիշեր, Տորակաոյց շքեղ հիւրանոցներ, այցելութիւններ Մարկաոտի մատուցող, Հասիք, Գամիշլի, Դամակոս քաղաքները Գաբ Թոմոր (Փայմորի) աներակները: Բացառիկ յայտագիր, յիշատակի Օուրներ, Եփրատի եզերքը ձաշկերոյթներ. Գաբ. Հալեպի մէջ:
Սակ մէկ անձի սկսեալ փոխան 210\$ի միայն 145\$ շատ սահմանափակ թիւով տեղեր:
Արձանագրութիւնները՝ կազմակերպիչ Աշճեան Թուրք: Հեռ. 01-240654, 03-233978, գիշերները 01-258887:
Սի մոռնաք դէպի Հայաստան 1-8 Մայիս բացառիկ շրջապատուող, սակ մէկ անձի 555\$ լծան պտոյտներով եւ պարահանդէսով եւ հաճելի անակցելովներով:

VISION CARE CENTER
Knajian Optical
Our answers to your questions on customised progressive lenses.

- Comprehensive eye care
- Specialized progressive lens services
- Doctor supervised contact lens fitting

Address: Autoroute Jdeideh, behind Almaza Beer factory facing McDonald's Restaurant, Yara Center, First Floor.
Tel: 01-877740. Fax: 01-375242. E-mail: knajian@hotmail.com

www.lemagan.com

NEW: ARMENIAN CAUSE (HAY TAD)

L.Y.A. History - Martyrs - Chapters - RAZMIG - Research - Monthly News - A.R.F. History - Armenian History - Armenian Genocide - Chavakhk - Artsakh - Lisbon 5 - Armenians in Lebanon - links - Icons & photos.

BARON TRAVEL & TOURISM AGENCY
(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)

ՓԵՏՐՈՒՐ ԱՍՍՈՒԱՆ ԾՐԱՎՊՏՈՅՑՆԵՐ

- 9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)
- 13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)
- DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$ԸՆ սկսեալ

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ BARON TRAVEL, Պորճ Համուտ, Մարաշ քաղ, հեռ. 01-263624, 01-241344 եւ 03-275657 թիւերուն:

IGOL MOTOR OIL
FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶՐՈՅՑ ՄԸ

Տարբեր առիթներով խօսած եմ տարրական կենցաղավարության մասին: Վերջին շրջանին ակնհայտ է ահազանքը վկայող անհասարակ վարուցանքերի և արտասովոր արարածների: Երբեք, երբեք և անկիրք:

Զարմանքով կը հաստատեմ, որ պատանիներ, հագրի, համալսարանի դասախօսը կը կոչեն ահազանքի անուցով, ժողով կամ Մարի, յարգելի անձին հետ կը խօսին՝ ըսելով Պետրոսի կամ ժամ-ժառ, իսկ հայերս երեւոյթը հասցուցած ենք ծաղրանկարի: քահանային, վարդապետին, եպիսկոպոսին պարզապէս անուցը կու տանք, Մարկոս կամ Կիրակոս, առանց ըսելու տէր հայր, հայր սուրբ, սրբազան: Ոմանք, ի վերուստ տրուած ո՞ր իրաւունքով, նոյնիսկ կաթողիկոսը կը բարեւեն՝ ըսելով *դու...* Երբ յարգանքի անտեսում կը կատարուի, յանուց անանուց ո՞ր արդի եւ մանաւանդ կարգի, ո՞ր արդիականութեան կը դադարինք մենք մեզ յարգելէ: Կան մարդիկ, որոնք, այս կամ այն դժգոհութեան պատճառով, տեղ մակիրներով կը փոխարինեն եկեղեցականի կամ դեկավարի անուցը: Անարգանքը երգիծածանք է, որ դրական է: Ի՞նչ կը շահին, ի՞նչ կը շահի ազգը, անտեղի մտերմութեան եւ փոփոխութեան յատուկ վերաբերումէ: Ոմանք պիտի ուզէին, որ յատուկ անուցներ տայինք: Հարցը բացառիկ պարագաներու է ի վերաբերի, այլ՝ վարուցանքի վերաբերումի ապականման, նեխածութեան, եւ ոմանք, իրենք թէ մարդ սիրաշահելու թեթեւութիւններով, կը քաջալերեն մեզ կացութիւններ: Անկարեւորութեան գոյութիւնը տեղին ոմանք մը:

Յանախ կը յիշեմ, հիասթափով, «Լը Մոնտ» ֆրանսական թերթի նախկին խմբագիրներէն տաղանդաւոր հրապարակագիր Վիանտոն-Փրոնթէն, որուն մէկ յոդուածէն մինչեւ այսօր կը պահեմ վառ տպագրութիւն: Խորագիր մը՝ Ան, ի տես մեր հագուստ-կապուստի գարգացող արդիականութեամբ բնորոշուող փնտռուած թափափածութեան, կը գրէր՝ *La muflerie vestimentaire...*, այսինքն՝ հագուստ-կապուստի կոպտութիւն, անգործիքութիւն: Այս բացատրութիւնը ընդհանրացնելով՝ կրնանք խօսիլ *լեզուական կոպտութեան եւ անշնորհքութեան մասին*, *muflerie linguistique...* Ի՞նչ բան աւելի համով է, աղբի զամբիւղը նետուած եւ հանուած ձմերուկի շէրտը, թէ նաշակով կտրուած եւ հրամցուած նոյն ձմերուկը: Սխալ չհասկցուի՞նք: Ֆրանսական ժ.Ձ. եւ ժ.Է. դարերու կեղծ նրբանշակ-ներուն մասին չէ խօսքը, որոնք արդէն այն ատեն կը կոչուէին *Les précieuses ridicules*, այլ մարդոց մեծագոյն իրականացումներէն մեկուն՝ լեզուին, եւ նոյնիքն մարդոց նկատմամբ յարգանքին: Յարգել չի նշանակեր ստրուկ ըլլալ, այլ ըլլալ հուսար, ազնուանալ: Զարմանալի կերպով ժամանակակիցներս, դպրոցական գրասեղաններէն մինչեւ կեանքի ասպարեզ, կը քաջալերենք կոպտութեան եւ անշնորհքութեան գարգացումը:

Մէկ առ մէկ պիտի չիշեմ ֆրանսերէնի կամ անգլերէնի կրկնողութեամբ, յանախ նոյն բաներով, մեր խօսակցական լեզուին ողողումը: Ճշդ ենք. անտեղի լրջութեան եւ խոժոռութեան մասին չէ խօսքը:

Հայաստանի վերակախարհման առաջին օրերուն, երբ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ժողովրդական կը դառնային, գարմանքով կը լսէի որ մարդիկ, կարծեք քիչ մը աւելի կարեւորութիւն տալու համար իրենց անձին, կը խօսէին *Լեռնի, Բարիկի, Գազիկի* մասին... Կը յիշեմ, որ Սիմոն Սիմոնեան, ուսուցիչ, գրագետ, հրապարակագիր, որ դասընկեր եղած էր կաթողիկոսներու եւ մնացած էր բարեկամ, երբ կը հանդիպէր անոց, խօսք կ'ուղղէր ըսելով՝ *Վեհափառ, Դուք, չէր ըսեր դուն*, եւ ինք չէր պատկանար: Մեծանուն ուսուցիչը, յարգուած եւ սիրուած, Բիւզանդի յիշատակ, առաջնորդ սրբազանին կամ կաթողիկոսին հետ նոյնիսկ մտերիմ գրոյցի ընթացքին, չէր խախտեր յարգանքի կարգը եւ կ'ըսէր՝ *Դուք*: Ի՞նչ բան խզած է այդ յարգանքներու սերունդի եւ ժամանակակիցներու մարդկային յարաբերութիւններու կերպը: Արժեզրկումի եւ կոպտութեան վրայ հիմնուած նոր քաղաքակրթութիւն կը ստեղծենք: *Muflerie vestimentaire*, *muflerie linguistique* եւ փոխադրելով հայկական միջավայր՝ *muflerie de conduite*: Նորերուն, նորեկներուն եւ իրենք իրենց ամէն ինչ ներելու հակամէտ նորահարուստներուն ա՛յս նշմարութիւնը պիտի ըսենք, որպէսզի արժեքներու խախտումով ընկերային-ազգային հաւաքակցութիւնը, բառին ազնիւ իմաստով՝ *համայնքը*, չվերածուի ամբոխի:

Զարմացնող է, որ յարգելի եւ յարգարժան անձեր կը ներառուին ապաշնորհ այս խաղին մէջ, իրենք թէ քայլ պահելու համար ժամանակին հետ:

Հարց տանք մենք մեզի, թէ Վիանտոն-Փրոնթէի նշանակած *muflerie*-ն ի՞նչ դրական նկատութեամբ է ընկերութեան եւ անոր արժեքներու գարգացման:

Շիշի մէջ դրուած եւ ովկիանոս նետուած նաւաբեկեակի կանչի կը նմանին այս մտածումները: *Une bouteille à la mer...*

3. ՊԱՆԵԱՆ

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԳԼԱՁՈՐ»

(ՏԱՐԵԳԻՐԸ ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆԵԻ)

Հայրենական մեր վանքերէն մէկուն՝ Գլաձորի անուցով մկրտուած Կիրիլոս Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տարեգիրքը լոյս տեսաւ վերջերս, ներկայացնելով 2001-2002 տարեշրջաններու դպրեվանքի ներքին ուսումնական, հոգեմտաւոր աշխատանքները, ստեղծագործական կեանքը:

«Գլաձոր» տարեգիրքը յստակ պատկերն է Դպրեվանքին, որուն տեսուչին՝ Պարթեւ վրդ. Կիւրիւմեանի հսկողութեամբ ու խմբագրական կազմին ջանքերով հանրութեան կը ներկայացուի, վկայելու համար այն աւանդութիւնը, որ սերունդէ սերունդ փոխանցուեցաւ ու մինչեւ օրս կ'արտայայտուի Դպրեվանքի Ընծայարանի ու ժառանգաւորներուն շնորհալի սաներուն կողմէ: Տարեգիրքին խմբագրութեան մաս կը կազմեն Յովհաննէս սրկ. Պետրոսեան, Գէորգ սրկ. Փաշայեան, Անդրանիկ կիս. սրկ. Գոնանեան, Միհրան կիս. սրկ. Շեքոնեան, Հրայր Պետրոսեան, Կարապետ Քէչիշեան: Կողմի գեղանկարչական գործն է իրանահայ հայ գեղանկարիչ Նահապետ Քէչիշեանի:

«Գլաձոր» տարեգիրքին առաջին յոդուածը ստորագրած է տեսուչ Վրդ. Պարթեւ վրդ. Կիւրիւմեանը:

243 էջերէ բաղկացած տարեգիրքին նիւթերը ունին կրօնական - հոգեւոր թեմայով, կրօնաբարոյական - քարապետական բաժիններ, ուսումնասիրական, գրական ու թարգմանական գրութիւններ (արարեղծ, անգլերէնէն եւ ֆրանսերէնէն): Նկատի առնուած են նաեւ կարգ մը գիրքերու ներկայացման համար գրախօսական փորձեր:

Հայ գրականութեան

եւ լեզուի դպրեվանքի ուսուցիչ Արարատ Ալիբեանի ցուցմունքով անշուշտ նկատուի է, գրական փորձերու լեզուական բծախնդրութեան եւ գրեւծելի առնչութեամբ: Մաքուր արեւմտահայերէնով տարտայարուած են բոլոր ուսանողները: Անոնք ունին մտածելու եւ հարցերը քննարկելու մտային եւ հոգեկան գարգացում, բարոյական բարձր ու հայադրոյմ ըմբռնում, որով կը հասնին ընթերցողին գնահատանքին: Ուսանողական առաջին քայլերն են, որոնք պիտի ստեղծուին զէպի հաստատ գնացքի, անշեղ ճանապարհներէ: Կարեւորը հայ դպրութեան հետ շնչելու հարողորդելն է, հայ մշակոյթով յագենալու շարունակելու Գլաձորեան դպրութեան հարուստ ժառանգութիւնը, որ կտակուած է մեզի սուրբ հայրերու կողմէ: Նոր ծիր են, դայար ու թարմ, որոնք պիտի ծաղկին տարիներու գնացքին հետ:

Ստորագրուած արձակ թէ բանաստեղծութիւն բաժիններուն մէջ մեր ուշադրութիւնը գրաւեց Երզնիական փորձ մը «Դասընկերոջ երգիծանկարի փորձ» խորագրուած, Տիգրան Աւետիսեան ստորագրուած ազգեցուցիչ մը ակնբեր է այս գրութեան մէջ: Ա. Ընծայարանի այս ուսանողը ունի տեսելու, դիտելու կարողութիւնը, եւ՝ քաղցրութիւնը թերեւեւ նկատելու եւ անոնց մասին համարձակ արտայայտուելու: Եթէ գարգանքն այս գրական սեռը, կարելի է յոյս կապել իրեն...

ՇԱՀԱՆԳՈՒԹՅՈՒՆ



Տարեգիրքը ունի նաեւ «Քրոնիկ» եւ «Նամակներ» թիւեր: Վերջին էջերուն մէջ արձանագրուած է: Այս բաժինով կը տեղեկանանք Դպրեվանքի ներքին կեանքին՝ հոգեւոր, մշակութային թէ ընկերային մարզերու մէջ:

Ընդհանուր ակնարկով կարելի է հաստատել թէ շնորհալի տղոց նոր սերունդ մը կը ծաղկի Կիրիլոս Կաթողիկոսութեան Դպրեվանքին մէջ: Այս առիթով կ'աթօն շնչելու եւ 2002 թուականին Կիրիլոս Կաթողիկոսութեան կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ «Կիրիլոս» թանգարանի սրահին մէջ իրագործուած մշակութային բարձրորակ ձեռնարկները, որոնց ընթացքին Դպրեվանքի սրահները հանդէս եկան խմբագրութեան ու խմբական արտասանութիւններով, հոգեթով մեկնաբանութեամբ:

Մեր վանքերը մեր հոգեւոր կեանքին պահպաններն են, մեր դպրութեան ու մշակոյթին քաղաքացիական եւ ներքին հետ կը մաղթենք նոր ծաղկում, վերելք, անահանջ բարի երթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՕԹԱՆԱՅ ԹՈՒՐԳԻՈՅ ՓՈՐՁԻՆ

Դէն 10 Յունուարին թուրքիա այցելեցին Հայաստանի ընկերային ներդրումներու հիմնադրամի գործադիր տնօրէն Աշոտ Կիրակոսեան եւ հիմնադրամի հաստատութիւններու օժանդակութեան վարչութեան պետ Արամ Գրիգորեան:

Այցելութեան նպատակը ծանօթանալն էր թուրքիոյ նոյնատիպ կառոյցին՝ «Ընկերային արհեստներու ծրագիր»-ի գործունէութեան: Ծրագիրին իրականացումը թուրքիոյ մէջ սկսած է 2001 թուականէն: Նոյն տարին, ի նպաստ երկրի տնտեսական ճգնաժամէն դուրս գալուն, Համաշխարհային Դրամատուներ թուրքիոյ յատկացուցած է 500 միլիոն տոլարի վարկ, որ միաժամանակ ուղղուած էր պետութեան ընկերային խնդիրներու լուծման:

Թուրքիա այցելած խումբին մէջ Հայաստանի ներկայացուցիչներէն զատ ընդգրկուած էին նաեւ երկուսական պատուիրակ՝ Վրաստանէն, Մոլտաւիայէն, Ուրբանիայէն եւ Տաճիկիստանէն խումբը հանդիպումներ ունեցած է թուրքիոյ նախարարներու եւ տեղական իշխանութիւններու ղեկավարներուն հետ, այցելած է տասնեակ մը ընկերակազմեր, ուր Համաշխարհային Դրամատուներ տրամադրած վարկով կ'իրականացուին ընկերային ծրագրերը:


1,410 ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ներկայիս Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ կը յաճախեն 1,410 սփիւռքահայ ուսանողներ, որոնց 10 առ հարիւրը ԱՊՀ-ի անդամ երկրներէն է: Վրաստանէն՝ 772, Ռուսիայէն՝ 172, Թուրքմենիստանէն՝ 31: Ուսանողներ կան նաեւ Աբխազիայէն, Ուրբանիայէն, Ղազախստանէն, Ուկրաինայէն եւ Տաճիկիստանէն:

Հայաստանի մէջ կ'ուսանին 195 իրանահայեր, 115 սուրիահայեր, 29 լիբանանահայեր եւ 15 ամերիկահայ երիտասարդներ: Հայաստանի մէջ կ'ուսանին աշխարհի տարբեր 27 երկրներէ սփիւռքահայ ուսանողներ, որոնց շարքին՝ Թուրքիայէն, Հնդկաստանէն, Կիպրոսէն, Հոլանտայէն, եւ այլն:

Սփիւռքահայ ուսանողներուն մեծամասնութիւնը կը յաճախէ Երեւանի Պետական համալսարան՝ 280 հոգի, Մ. Հերացիի անուան Երեւանի Պետական բժշկական համալսարան՝ 200 հոգի, Մանկավարժական համալսարան՝ 320, Սլաւոնական համալսարան՝ 130, իսկ մնացեալ բարձրագոյն հաստատութիւններուն մէջ սփիւռքահայ ուսանողներուն թիւը կը տատանի 10էն 70 հոգիի միջեւ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱԳԻՆ (ԱՄԱՌ, 3 - 2002)



- ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ**
- 1.- ՎԱՐԱՆԴ..... Բանաստեղծութիւններ
 - 8.- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ..... Օրագիր
 - 23.- Պ. ՍԻՄՈՆԵԱՆ Բանաստեղծութիւններ
 - 27.- Պ. ՆԱՍԻՊԵԱՆ..... Օղակներ
 - 46.- Ս. ԲԻՆԻՍԵԱՆ..... Խոստովանանք
 - 48.- ***..... «Անճրեկ»-ի սկիզբ...
 - 49.- Ս. ՉԷՔԻՃԵԱՆ..... Ամառային անճրեկ
 - 63.- Ս. ԲԻՆԵՃԵԱՆ..... Կարօտ
 - 64.- ***..... Ժան Փոլ Սարգսի «Դոնիսկա»
 - 65.- Ժ. Փ. ՍԱՐԹԸՐ..... Դոնիսկա
 - 85.- ***..... Ուղղափառական
 - 87.- Ռ. ՀԱՄԱՐՉՈՒՄԵԱՆ.....
 - Միասնական ուղղափառութիւն գոյացնելու առաջին քայլը պիտի կատարի հայրենիքը
 - 91.- Վ. ՄԱՍԹԵՆՅԱՆ - Ս. ՏԷՅԻՐՄԵՆՅԱՆ.....
 - Կոստան Զարեան եւ Անդրանիկ Ծառուկեան
 - 111.- Կ. ԱՌԱՔԵՆԵԱՆ..... Բարի անուանողական եւ գնահատողական արժեքը Մ. Մեծարեցի քնարերգութեան մէջ
 - 124.- ***..... Նշմարներ
 - 133.- ***..... Սշակութային լուրեր

G. AYANIAN & SONS

Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmaye, (01) 447000-445396 - (03) 627728/9
 Fax: (01) 265187-562357; E-Mail: gasons@dm.net.lb
 www.ayanian.com

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԱԿՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ - ՆԻԻ ԵՈՐՔ - ՓԱՐԻԶ ԱՌԱՆՅՔ

Վերջին քանի մը օրերուն հայ - թուրք յարաբերութիւններուն վերաբերող երկու յայտարարութիւններ գրաւեցին հանրութեան ուշադրութիւնը: 12 Յունուարին հանրապետութեան, որ Ֆրանսայի մէջ տարեկան կազմուած է հայ - թուրք «մերձեցում» մը բիրտ ունեցող 11 հոգիներ մարմին մը՝ «Հայերու եւ թուրքերու միջեւ մերձեցում» ֆորում»։ 16 Յունուարին հանրապետութեան, որ իր գործունէութիւնը դարբնուցած «Հայ - թրքական հաշտութեան յանձնարարութեամբ»ը նիստ մը պիտի գումարէ Նիւ Եորքի մէջ:

Բնականաբար բազմաթիւ գուզահեռներ կարելի է գծել յանձնարարութիւն եւ ֆորումին միջեւ, որոնք ամենէն եականը այն է, որ երկուսն ալ ի սկզբանէ ստեղծուած են ծառայելու շրջանին անհնար մեծապետական շահերուն եւ, իբրեւ այդպիսին, կոչուած են գործելու, հակառակ որոշ անդամներու «հրաժարումներուն», վերակենդանացու հակառակ «ստեղծում»ներուն կամ «դադրեցումներուն»: Նկատելի է, որ երկու ցախածնունդներուն պարագային ալ թուական տեսակետէն հայ «հաշտարարները» կը զիջին իրենց թուրք գործընկերներուն, ինչ որ պարզ արտայայտութիւնն է այն իրողութեան, թէ հաշտութեան «յղացքը» ենթահող չունի հայ ժողովրդային շարքերուն մէջ. սակայն իր նրամներ տակաւին կարելի է գատորոշել անարտ ցորեկէն:

Այսուհանդերձ իրողութեան չզիջելու համար պետք է նշել, որ հայ - թուրք «հաշտարարական» նկատմանը չեն սահմանափակուի «հաշտութեան յանձնարարութեամբ»ով եւ «մերձեցում» ֆորումով: Նոյն շայ շրջանին օղակները կը հասնին մինչեւ Հայաստան: «Անցեալ տարուան ընթացքին հասարակական կառոյցներն էին, որ կը շարունակէին աշխուժութիւն բերել հայ - թրքական երկխօսութեան մէջ»։ մէջբերումը կը պատկանէ Հայաստանի արտաքին գործեր նախարար Վարդան Օսկանեանին: 10 Յունուարին, Հայաստանի անցնող տարուան արտաքին քաղաքականութեան ամփոփիչ մամուլի ատուլսիին ընթացքին Վ. Օսկանեան կարեւոր նկատեց հայ - թուրք «երկխօսութեան» մէջ հասարակական. առեւտրական, լրագրողական եւ ակադեմիական շրջանակներուն դերը: Հասարակական այդ քայլերուն պետական հովանաւորչութեան ակնարկող Հայաստանի արտաքին գործեր նախարարին յայտարարութիւնը պահ մը կը յուշէ այն իրողութիւնը, որ Հայաստանի իշխանութիւնները նախապէս տեղեակ էին «Հայ - թրքական հաշտութեան յանձնարարութեամբ»ին կազմութեան:

Ամենայնդեպս, ուր ալ գումարուին հայ - թուրք «հաշտարարական» ժողովները՝ Նիւ Եորք, Փարիզ թէ Պոտրում, մասնակիցները ըլլան ինքնակոչ «հաշտարարները» թէ Հայաստանի արտաքին գործեր նախարարին ակնկալած «հասարակական շրջանակները», ինքզինք պարտադրող իրողութիւնը այն է, որ մինչեւ այն ատեն որ այս փորձերը կը յաւակնին անտեսել պատմական իրողութիւններ եւ աչք կը խփեն հայ ժողովուրդի պատմական թշնամիին ցարդ շարունակուող հակահայ քաղաքականութեան, կրնան նպաստել միայն «բերդի ներսէն գրաման»:

L. Ա.

ՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՒԵՐՈՒՄԻ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ

Թրքական «Ժուճուրիյէթ» թերթի 16 Յունուարի թիւին մէջ լրագրող Եուսուֆ Ջիյա ծանուցէր անդրադարձած է վանի թանգարանի այժմուս պարզած իրավիճակին: Լրագրողը գրած է, թէ վանի թանգարանը, որ աշխարհի կարեւորագոյն ուրարտական հնութիւնները կը բովանդակէ, 58 տարի է ի վեր նիւթական տաղանայի պատճառով որեւէ նորոգութեան չէ ենթարկուած եւ անձրեւներու ու խոնավութեան պատճառով քանդուած է: Անձնակազմի խիստ անբաւարարական եւ ջեռուցման բացակայութեան պատճառով թանգարանին մետաղեայ հնութիւնները սկսած են փոխի:

Լրագրողին համաձայն, վանի թանգարանի փոխ տնօրէն Ա. Մեթէ թողութեամբ այս մասին խօսելով՝ յայտնած է, թէ թանգարանը կառուցուած է 1945ին եւ հիմնուած օրէն որեւէ նորոգութեան չէ ենթարկուած: Հին եւ անինամ չհնքին տանիքը մասամբ կքած է եւ այդ պատճառով անձրեւի ու ձիւնի ջուրերը ներս կը թափանցեն՝ մեծ վնաս պատճառելով հնութիւններուն: Թողութեամբ տեղեկացուցած է, թէ կարգ մը հնութիւններ փոխադրուած են տարբեր վայրեր, որ հնութիւններ փոխադրուած են տարբեր վայրեր, որ պէտք չէ փնտրուին ձեռքունէն թափանցող ջուրերէն, սակայն կարելի չէ եղած հնութիւնները փրկել փճացումէ:

ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՄԱՆՄՐՈՒՄ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՅԱՌԱՋ ՏԱՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Նախապէս հաղորդած էինք Փարիզի մէջ 31 Յունուար-1 Փետրուար 2003ին Ծերակոյտի դահլիճներէն մէկուն մէջ՝ «Սալ Քլեմանսօ տիւ Սենա, Փայլ տիւ Լիւքսամպուրգ» Հայ Դատի Եւրոպայի զբասենեակին կողմէ կազմակերպուած Հայ Դատի Համախմբումի մասին, բնաբան ունենալով «Հայաստանն ու հայ ժողովուրդը 21րդ դարուն» եւ նպատակ ունենալով քաղաքական այս պատգամին շուրջ համախմբել ընդհանրապէս հայկական կարողականները, հաստատելու հայութեան քաղաքական ներուժը, իր բոլոր կարելիութիւնները առաւելագոյն չափով կեդրոնացրելու, հայութեան դատարարական շրջանակներու մէջ առաւելագոյն չափով ծանօթացնելու իմաստով:

Գրեթէ ամբողջացած է այս համախմբումին տարբեր ցամաքամասերէ մասնակցող Հայ Դատի օտարազգի բարեկամներու՝ երկիրներու օրէնագիր, գործադիր եւ դատական իշխանութեանց՝ զաշխակցային, նահանգային թէ քաղաքապետական բարձր մակարդակի մասնակցողներուն ցանկը, ինչպէս նաեւ հայագի հանրածանօթ քաղաքական անձնակազմի թիւններու, որոնք համախմբումի ճամբով եւ իրենց գործնական ներ-

կայ ու պազգայ աշխատանքով կապի մէջ պիտի ըլլան կազմակերպիչ յանձնախումբին, իրենց երկիրներու Հայ Դատի յանձնախումբերուն հետ, հայութեան առաջադրանքները գարգացրելու իմաստով:

Համախմբումին պաշտօնական բացումը պիտի կատարուի Շաբաթ, 1 Փետրուարին, որու ընթացքին պիտի ներկայանան արդիւնները ուղերձներ. ուղերձներէն ետք տեղի պիտի ունենայ հետեւեայ օրական կարգի ազատ քննարկում:

Ստորեւ կը ներկայացրենք համախմբումին ընթացքին օրակարգի վրայ գտնուող երեք հիմնական նիւթերը.

- 1.- Հայաստան եւ հայ ժողովուրդը 21րդ դարուն
 - 2.- Տնտեսական համարկումը կողմակառնող մէջ եւ համաշխարհայնացում
 - 3.- Հայ Դատ, Հայկական Յեղափոխութիւն եւ 21րդ դարը:
- Մասնակցող հրաւիրուեալները ներկայացուած նիւթերու մասին կրնան ելույթներ ունենալ համախմբումին ընթացքին:
- Նախատեսուած է որ համախմբումը փակուի համատեղ եզրափակիչ յայտարարութեան մը որդեգրումով, որ նոյն օրն իսկ պիտի յանձնուի լրատուական միջոցներուն:
- Նոյն օրը, երեկոյեան

տեղի պիտի ունենայ ներկայներու եւ հրաւիրեալներու պաշտօնական ընթրիքը:

Իր նախընթացը չունեցող եւ քարոզչական մեծ կարեւորութիւն ներկայացնող այս ձեռնարկին հետապնդման եւ լաւագոյնս արդիւնաւորման համար քարոզչական աշխատանք կը կատարուի ոչ միայն Ֆրանսայի, այլ քաղաքային երկիրներու Հայ Դատի յանձնախումբերուն կողմէ, ակնաւոր անձնակազմի մասնակցութիւնը ապահովելու նպատակով:

Յունաստանի Հայ Դատի յանձնախումբին նախաձեռնութեամբ եւս ապահովուած է յոյն կուսակցութիւններու քաղաքական պետական ու Հայ Դատի բարեկամ դէմքերու ներկայութիւնը, որոնք համազուտակին մասնակցելով իրենց ներդրումը պիտի բերեն ու անգամ մը եւս պիտի արտայայտեն իրենց անկեղծ գոհացումները Հայ Դատի աշխատանքներուն իրաւացիութեան, արդարութեան եւ Հայկական Հարցին ակնկալելի լուծման առաջադրանքով:

Փարիզի համախմբումը Հայ Դատի գործնական հետապնդման լաւագոյն փաստերէն մէկը կը հանդիսանայ, որուն աշխատանքներուն օրինակ պիտի անդամադրուին:

ԻՏԱԿԱՆ ՍԱՍՈՒԼ

«ՔՈՐՐԻԻԷՐԷ ՏԵԼԼԱ ՍԵՐԱ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Իտալիոյ հեղինակաւոր «Քորրիէր Ելլա Սերա» օրաթերթը 5 Յունուարի իր խմբագրականը նուիրած է Հայկական Յեղափոխութեան: «Սոսցուած Յեղափոխութիւնը» խորագիրով խմբագրականը կը կրէ ճանփառու Ռոմանաթոյի ստորագրութիւնը: Յայտնապէս Իտալիոյ մէջ Հայկական Յեղափոխութեան առնչութեամբ պատմական իրողութիւններու համահունչ դիրքորոշում որդեգրողներուն թիւ օրէ կ'աճի, իտալական Ընդուն պայ Հայաստան այցելութենէն ետք, որուն ընթացքին ան Ծիծեռնակաբերդի մէջ յարգանքի տուրք մատուցած էր Հայկական Յեղափոխութեան զոհերուն:

Ստորեւ «Քորրիէր Ելլա Սերա»ի խմբագրականը՝ յայտարարուած:

Թուրքիա աւելի ընդարձակ է քան Ֆրանսա, Գերմանիոյ հաւասար բնակչութիւն ունի, որ երկու անգամ աւելի ծնունդի աճ կ'արձանագրէ, քան Սպանիա. 1952-էն ի վեր Միացեալ Նահանգներու հաւասարիմ դաշնակիցն է եւ Ատլանտեան Ուլտի անդամ. Պաղ պատերազմի տարիներուն ունեցած է կարեւոր դեր, բայց եւ այնպէս իր մուտքը Եւրոպայական մտայնութեան հարցերու առջեւ կը դնէ զինք, որ կարելի չէ զոհել քաղաքագէտներուն եւ Միացեալ Նահանգներու քաղաքական շահերու խորանին:

1919ին դաշնակիցներու յաղթական մուտքը Պոլիս առիթ ընծայեց, որ կոտորածի պատասխանատուները դատուին, բայց 1923ին քեմալական թուրքիան մտայնութեան տուած ամէն ինչ եւ այդ էջը փորձեց վերջնականապէս փակել:

Հայերունը պատահական կոտորած մը չէ. իսկական ցեղասպանութիւն մըն է, որ ամէն կէտերով կը համապատաս-

խանէ 1948ի Միացեալ Ազգերու կազմակերպութեան Ցեղապաշտութիւնի բառի սահմանումին:

Հակառակ բազմաթիւ պետութիւններու կողմէ ճանչցուած ըլլալուն, այսօր հասկնալի է մեզի համար Միացեալ Նահանգներուն բռնած մերժողական դիրքը, որ արդարութեան սկզբունքները կը զոհէ ցեղասպան երկրին հետ իր ունեցած գանապան շահերու խորանին:

Արդեօք Եւրոպայի ինչ նպատակները բերել թուրքիան Եւրոպայի մէջ ընդունելով, այնքան ստեն որ Հայկական Ցեղասպանութեան ողբերգական էջը բաց կը մնայ...:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պետք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականը անոնուց օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՀԱՏ ԱԶԵՐԻ ՊԱՅՏՈՒՄՆԵՐԻՆ

ՔՈԶԱՐԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ

Ազգայնականի նախագահ Հայտար Ալիեւի վարչակազմի միջազգային կապերու բաժանմունքի վարիչ Նովրուզ Մահմետով «Իթար - Թասս» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին, անդրադառնալով Ռուսիոյ մէջ նախագահ Ռուպլիթ Բոչարեանի այն յայտարարութեան, թէ Հայաստան պատասխանատու է Լեռնային Ղարաբաղի բնակչութեան, յայտնած է, որ Քոչարեան պատասխանատու է միայն իր երկրին բնակչութեան համար:

«Լեռնային Ղարաբաղը Ազգայնականի տարածքին մաս կը կազմէ: Այստեղ հայերու հետ հին ժամանակներէ ի վեր ապրած են նաեւ ազերիներ», ըսած է Ն. Մահմետով: Ան դիտել տուած է, որ Լեռնային Ղարաբաղ կրնայ ինքնուրոյն դառնալ միայն Ազգայնականի «հողային ամբողջականութեան» ծիրին մէջ: Ան աւելցուցած է, թէ Ազգայնական միշտ աշխատած է Լեռնային Ղարաբաղի տաղանայի խաղաղ լուծման օգտին:

ԳԵՐԻ ԲՈՆՈՒԱԾ ԱԶԵՐԻ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Ազգայնականի պատերազմի գերիներու, պատանդներու եւ անյայտ կորած անձերու հարցերով զբաղող պետական յանձնախումբը դիմած է Պաքուի մէջ Միջազգային կարմիր խաչի ներկայացուցչութեան՝ պաշտօնապէս պահանջելով ապահովել յանձնախումբի ներկայացուցչներուն այցելութիւնը էլիմտտին Ապիլեի, որ վերջերս գերի բռնուած էր Ղարաբաղի հայկական ուժերուն կողմէ: Ազգայնականական հետախուզական ջոկատ մը 8 Յունուարին Աղտամի մէջ փորձած էր խախտել Լեռնային Ղարաբաղի ապահովական սահմանները եւ թափանցել հայկական շրջաններ. հայկական ուժերը արգելք հանդիսացած էին: Սպաննուած էր ազերի զինուոր մը, իսկ երկրորդ մը՝ էլիմտտին Ապիլե վիրաւորուած էր գերի բռնուած էր: Ան փոխադրուած էր հիւանդանոց՝ ստանալու համար անհրաժեշտ բուժումը:

Միջազգային կարմիր խաչի պատուիրակներ այցելած էին ազգայնականի գիւնուորին եւ հաստատած էին, որ անոր վիճակը կայուն է 10 Յունուարին կատարուած վիրաբուժութենէն ետք: Ապիլեի այցելեց նաեւ ԵԱՀԿի գործող նախագահի Լեռնային Ղարաբաղի գծով ներկայացուցիչ Անճէյ Քասպրիք:

ՀԱՅԱՍՏԱՆ «ՎՏԱՆԳ» ԿԸ ՀԱՆԴԻՄԱՆԱՅ ՊԱՔՈՒՆԵՅՀԱՆԹԻՖԼԻՍ ԲԱՐԻՂԱՍԱՐԻՆ

Ազգայնականական մամուլը կը հաղորդէ, թէ Յունուար 14ին Ազգայնականի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիլե տեսակցութիւն մը ունեցած է Ազգայնականի մէջ Անգլիոյ դեսպան Նորի թաքրի եւ ղեսպանատան գիւնուորական Նոր կցորդ զօր-Քրիսթոֆըր ձոն-Նանի հետ: Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկած են գիւնուորական մարզին մէջ երկու երկիրներուն միջեւ համագործակցութիւնը: Երջանային անվտանգութեան մասին խօսելով՝ Ապիլե ըսած է, թէ Հայաստանի «յարձակողապաշտ» քաղաքականութիւնը մեծ վտանգ կը ներկայացնէ միջազգային համայնքը պէտք է ի վերջոյ այդ գծով յարմար գնահատականներ տալ: Ան դիտել տուած է, թէ Հայաստանի գէնքերը «լուրջ վտանգ» կը հանդիսանան Պաքու-Թիֆլիս-ձէյհան քարիւղատարին:

Դեսպան թաքրի իր կարգին յայտնած է, թէ Արեւմուտքի երկիրները կը գնահատեն Լեռնային Ղարաբաղի տաղանայի խաղաղութեամբ լուծելու Ալիլեի մտադրութիւնը:

ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋ ՀԱՅԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Կիպրոսի Լառնաքա քաղաքի քաղաքապետարանը վերջերս որոշած է 1920ին Կիպրոս հաստատուած առաջին հայերուն յիշատակին նուիրուած յուշարձան մը գետեղել քաղաքին մէջ: Թրքական լրատու գործակալութիւնները բնականաբար գրական ձեռք չեն անդրադարձած նշեալ երեւոյթին: Արդարեւ, հանրածանօթ «Սթար» թերթը վերջերս գրած է, թէ «Թշնամիի թշնամիի բարեկամն է» սկզբունքի հիման վրայ Կիպրոսն ու Հայաստանը «իրենց կարելին կ'ընեն թուրքիոյ փոս փորձուած համար»: Թերթը մեծ վրդովմունքով գրած է, թէ «Հայաստանի հետ զինվորական եւ արհեստագիտական համագործակցութեան շուրջ համաձայնագիր վաւերացուցած Կիպրոսը այս անգամ ալ որոշած է յուշարձան կանգնեցընել հայերու յիշատակին»:

Միջապալին Քաղաքական Կեանք

ՈՒՆԱՍ ԱՆԻԷ
ՇՆՈՐԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԸ ԱՍԱՆԱՅ

«ԳԱՀԱԺԱՌԱՆԳ»ԻՆ ՏԱՐԵԴԱՐՉԸ ՆՇՈՒԵՑԱԻ ՊԱՔՈՒԻ ՄԷՉ

Դեկտեմբերի վերջադրույթն անսպասելի կերպով փոխեց իր իմաստը: Տոնակատարությունները սկսվեցին խորհրդարանում: Իշխող կուսակցության անդամ երեսփոխան մը՝ Վաքիֆ Ապտիլլայան այդ կարևոր իրադարձության առիթով արտասանեց իր խոսքը սկսած՝ ըսելով, թե «այսօր պատմական օր մըն է, այսօր տարեդարձն է Իլհամ Ալիևին»: Այս ան անդրադարձաւ այդ «ականաւոր քաղաքական դեմքին» բոլոր արժանիքներուն:

Միևի Մեծլիսի նախագահ Մուրթուզ Ալեսքերով նշեց, թէ իմը համամիտ էր բոլոր ըսուածներուն եւ աւելցուց կարգ մը ուրիշ գովասանքներ: Իլհամի տարեդարձը նաեւ նշուեցաւ մամուլին կողմէ, որովհետեւ ան ո՛չ միայն նախագահին տղան է, «եմի Ազրպէյճան» կառավարական կուսակցութեան առաջին փոխ նախագահը, Եւրոպական Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի մէջ քաղաքականական պատուիրակութեան նախագահը... այլ գլխաւոր պաշտօնով ան «գահաժառանգը» է Ազրպէյճանի նախագահական քառուսյան ան այս պաշտօնը ամենէն շատ կը սիրէ:

Ինչպէս միւս բոլոր ամբողջատիրական երկիրներուն մէջ, Ազրպէյճանի մէջ եւս ոչ ոք կը նեղանայ տիրող միապետական համակարգէն: Իշխող խմբակին ղեկավարները չեն ծածկեր ճշմարտիւ, որ կ'աշխատին անհրաժեշտ պայմանները ստեղծել իշխանութիւնը հօրմէն գաւկիցի փոխանցելու: «Եմի Ազրպէյճան»ի վերջին հաւաքի մասնակիցները կը գոչէին «Կեցցէ՛ Իլհամ Ալիևը! Ազրպէյճանի ապագան»:

Պարուի մէջ արդէն գրքեր կը գրեն եւ երգեր կ'երգեն Ազրպէյճանի ապագայ նախագահին մասին: Երեք գիրքեր՝ «Իլհամ Ալիև մեծ քաղաքականութեան մէջ. իրականութիւններ եւ հեռանկարներ», «Իլհամ Ալիև. Երկրայի եւ ապագայի յաջողութիւններու գործուն մըն է» եւ «Իլհամ Ալիև. պատրաստ եմ որեւէ ճակատամարտի եւ որեւէ մակարդակի» հրատարակուեցան 2002 Մայիսին: Գիրքերու ներկայացումներուն ներկայ եղան խորհրդարանի եւ կառավարութեան անդամներ: Միևի Մեծլիսի նախագահը նշեց, թէ Իլհամ Ալիևը «ապագայի ղեկավարն է» եւ նշեց, թէ անոր գործունեութիւնները «նաչնչուած էին ժողովուրդին կողմէ»:

Պաշտօնական քարոզչութիւնը անոր կը շնորհէ հանրային յարաբերութիւններու ամենը անոր քարոզչութիւնը: «Քաղաքագետներ ոչ մէկ առիթ կը փակցնեն շեշտելու, թէ ան կը յաջողցնէ իրեն յանձնուած գործերը»:

Ան մոլի է թղթախաղի մէջ. քանի մը տարի առաջ ան 1,5 միլիոն տոլար կորսնցուց «Քաղաքներ»ի մը մէջ, եւ Հայաստան Ալիև ստիպուած եղաւ վճարել գումարը անոր փոխարէն: Եւ որպէսզի գրկէ իր տղան այդ հաճոյքէն, ան ստիպուած եղաւ երկրին ամբողջ տարածքին արգիլել «Քաղաքներ» գործունեութիւնը:

«ՓՆԱ ԱՐՄԵՆԻԸՆ ՆՈՒԲՁ»

ԳԻՐՔ՝ ԹՐԳԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ «ՑԱԻՈՏ ԿԷՏԵՐՈՒ» ՄԱՍԻՆ

Պարուի «Եւրոպա» պանդոկին մէջ 14 Յունուարին տեղի ունեցած է «Թուրքիան անընդհատ պայքարը» գիրքին շնորհահանդէսը, որուն հեղինակն է լրագրող Մալախան Ռազաբալը: Գիրքը կը նկարագրէ թուրքերու կողմէ կիպրոսի բնակեցման եւ «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութեան» ստեղծման պատմութիւնը: Ռազաբալը շնորհակալութիւն յայտնած է կնոջ Կնոջական թուրքագրութեան միտման նախագահ Թանգիլ Ռուստամխանլիին, որուն ներթափանցած օժանդակութեամբ հրատարակուած է գիրքը, Ազրպէյճանի մէջ Թուրքիոյ դեսպան Ունալ Չեքեզդինն եւ «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութեան» ներկայացուցչութեան ղեկավար Սուսթաֆա Էրվանին: Միևի Մեծլիսի ներկայ գտնուած են նաեւ Ազրպէյճանի խորհրդարանի անդամներ: Թուրք դեսպանին, Սուսթաֆա Էրվանի եւ խորհրդարանական Սուպի Ռուստամխանլիի կարծիքով, որոնք ելոյթ ունեցած են գիրքի շնորհահանդէսին ընթացքին, «Կիպրոսը, ինչպէս նաեւ Հեռնային Հարաբար թրքական աշխարհի ցաւուտ կէտերն են»:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԻՐԱՆ ԿԸ ՆՊԱՏԱԿԱԴՐԷ ԻՆՔՆԱԲԱԻ ԲԱՆԱԿ ՄԸ ՈՒՆԵՆԱԼ

Յունուարի սկիզբը իրանեան բանակը յայտարարեց, թէ արդէն արտադրած եւ գործադրութեան դրած է քանի մը արդիական ռազմատեխնիկական նմուշներ, ինչպէս նաեւ՝ թէ՛ զինուորական եւ թէ՛ քաղաքային ուղղութիւններ: Յայտարարութիւնը կարեւոր էր, բայց անակնկալ մը չէր:

Մինչ իրան ինքզինք հետզհետէ աւելի շրջապատուած կը զգայ թշնամի (Իրաքի), անվստահելի (Փաքիստանն ու Ռուսիան) եւ բացայայտօրէն ամերիկամէտ (Ազրպէյճան, Թուրքիա եւ Աֆղանիստան) դրաճիչներով, իր նպատակը եղած է Զանալ աւելի մեծ գէնքի արտադրութիւնն ունենալ եւ ինքնաբաւ ըլլալ: Այս ընկողմ ան կ'ուզէ վստահ ըլլալ, որ ունի կարողութիւնը որեւէ նկատուելի մարտահրէժէր դիմադրուելու, ներառեալ՝ Միացեալ Նահանգներէն:

Հակառակ իր ունեցած թերութիւններուն՝ իրան շրջանային ուժ կը նկատուի, կապ ունենալով քանի մը ռազմավարականօրէն կարեւոր շրջաններու հետ: Բացի Պարսից ծոցէն, որուն հետ ան ունի 2500 քիլոմետր սահման, եւ որուն միջոցով է, որ ան կ'արտածէ զրեթէ իր արտոլջ քարիւղը եւ այլ արտադրութիւններ, ան սահմանակից է քարիւղով հարուստ Կեդրոնական Ասիայի, Կովկասի, Միջին Արեւելքի եւ Հնդկական ովկիանոսին: Տնտեսական, քաղաքական, աշխարհագրական պատմական, ցեղային, կրօնական եւ ապահովական գործօններ պատճառ կը դառնան, որ իրան հետաքրքրուած ըլլայ այն շրջաններով եւ խոցելի ըլլալ անոնց զարգացումներուն դիմաց:

Մտտիկ անցեալի պատմութեան լոյսին տակ, ինչպէս նաեւ շրջանին մէջ շահեր հետապնդող շրջանային (Չինաստան, Ռուսիա, Հնդկաստան, Փաքիստան եւ Թուրքիա) եւ ոչ շրջանային ուժերու գոյութեամբ, իրան ամէն պատճառ ունի մտահոգուելու իր շահերն ու ազգային ապահովութիւնը վտանգող սպառնալիքներով: 1980-էն 1988 իրան-իրաքեան պատերազմին դառն յիշատակը տակաւին վառ է իրանցիներուն յիշողութեան մէջ եւ չեն մոռնար իրենց ուժին նկատմամբ անհոգ ըլլալու իրենց դասը: Պատերազմին գոհ գացին եւ վիրաւորուեցան 1,5 միլիոն իրանցիներ, իսկ երկիրը կրեց 100 միլիարտ տոլարի հասնող վնասներ՝ ենթակառուցիչ, ճարտարապետութիւն եւ կենսոլորտի մարքեցումներ:

1980ական թուականներուն կարգ մը գործօններ, ինչպէս՝ բանակային ուժերը նուազեցնելու որոշումը, փորձառութեան կայիններու լայնածիր մարքագործումը, ինչպէս նաեւ՝ իր գլխաւոր մատակարարներէն (Միացեալ Նահանգներ եւ Արեւմտեան Եւրոպա) զինամթերքի եւ փոխ-

նորդ մասերու մատակարարման յանկարծակի կրճատումը, որուն յաջորդեց 1979ի իրանեան յեղափոխութիւնը, երկիրը չափազանց տկարացուցին անկարող դարձրին: Իր ներքին զինուորական ճարտարաբանութեամբ անկարող էր իր արդիական գէնքերուն պահանջները գոհացնել: Մինչ իր միակ մատակարարները (Չինաստան եւ Հիւսիսային Քորէա) չուստահելի (Փաքիստանն ու Ռուսիան) եւ բացայայտօրէն ամերիկամէտ (Ազրպէյճան, Թուրքիա եւ Աֆղանիստան) դրաճիչներով, իր նպատակը եղած է Զանալ աւելի մեծ գէնքի արտադրութիւնն ունենալ եւ ինքնաբաւ ըլլալ: Այս ընկողմ ան կ'ուզէ վստահ ըլլալ, որ ունի կարողութիւնը որեւէ նկատուելի մարտահրէժէր դիմադրուելու, ներառեալ՝ Միացեալ Նահանգներէն:

Յետ խորհրդային ժամանակաշրջանին քաղաքական, տնտեսական, զինուորական եւ ապահովական դրոյթներ իրաւ մտացուցիչ իրանն ու Ռուսիան, որ այսպիսով դարձաւ իրանի գէնքի մեծագոյն մատակարարը:

Սակայն, ինչպէս իրան-իրաքեան պատերազմը սորվեցուց օտար մատակարարներէ մեծապէս կախեալ ըլլալու, առանց նկատելու առնչող փոփոխութիւնը, կրնայ մահացու ըլլալ, երբ անոնք իրենց շահերը հետապնդելու համար կողմ փոխեն: Այսպէս, հետեւաբար 1980ականներու սկիզբէն ի վեր իրան փորձած է ինքնաբաւ ըլլալ իր զինուորական գլխաւոր պահանջները բաւարարելով եւ շատ անհրաժեշտ պէտքերու պարարտային դիմելով իր միակ մատակարար Ռուսիայի (եւ աւելի քիչ չափով՝ Ուրալիցիոյ), Պիլճուտի, Չինաստանի եւ Հարավարեւելյան Աֆրիկէի:

Թեթեւ գէնքերու, զինամթերքի եւ կարգ մը ելեկտրոնիք գործիքներու պարագային, ներառեալ՝ հաղորդակցութեան սարքերը, ինքնաբաւ ըլլալէն բացի իրանի Ազրպէյճանի Պաշտպանութեան ճարտարապետութիւնը կազմակերպութիւնը եւս ինքնաբաւ է՝ արտադրելով «Ջոլֆալիար» հրասայլեր, կարճ եւ միջակ հասողութեամբ հրթիռներ («Իրան - 30» եւ «Մահապ») 1,2,3), օդանաւեր («Ազարախար») եւ փոքր «Սի Հորս» սուզանաւեր: 2002ին իրան գէնք արտածեց առիական եւ փոքրիկ 11 երկիրներու:

2003ի առաջին շաբաթը իրանի Ազրպէյճանի Պաշտպանութեան ճարտարապետութիւնը կազմակերպութիւնը ներկայացուց իր նոր արտադրութիւնները, ներառեալ՝ 200 քիլոմետր հասողութիւն ունեցող ծովային միջցամաքամասային հրթիռները («Նուր») եւ 2003ի Մարտին գործածուած իրանեան յանձնուելիք «Սիլմա» ռազմատար: Ըստ ծովուծի հրամանատար զեր ծովակալ Ապկալ նաեւ սուզանաւերու արտադրութեան:

Նոյն ժամանակաշրջանին իրանի պաշտպանութեան նախարար յայտարարեց «Մապալի» բեռնատար ուղղաթիւներու արտադրութեան մասին՝ իրեն «սկիզբ (անոր) գանգուածային արտադրութեան»:

Ըստ օդային պաշտպանութեան ճարտարապետութեան պատասխանատու զօրավար Հիւսէյն Ալայիի, իրան նաեւ ամբողջացուցած է 4 բազմանպատակ ուղղաթիւներու ծրագիրը:

Անկախ վերոնշեալ յայտարարութիւններէն, իրանի նախագահ Մոհամէտ Ռաթթեմի 18 Դեկտեմբերին յայտարարեց, թէ իր կառավարութիւնը որոշած է անորոշ համապատասխան բարձրացրել նախ տարուան (21 Մարտ 2003էն սկսեալ) զինուորական պիւտճէն՝ այսպիսով բացայայտելով զինուորական պատրաստուածութեան զարկ տալու իր կառավարութեան մտադրութիւնը: Երկիրը ներկայիս հետզհետէ աւելի լուրջ ապահովական վտանգներ կը դիմագրաւէ յատկապէս անկայուն Աֆղանիստանէն եւ անորոշ ապագայ ունեցող Իրաքէն:

Հակառակ անհրաժեշտ ըլլալուն, զինուորական պիւտճէին բարձրացման կարեւորութիւնը պէտք չէ չափազանցուի, նկատելու է, որ ընդհանուր պիւտճէին գումարը (107 միլիարտ տոլար) բաւական փոքր է 70 միլիոն հաշուող երկիրի մը համար: Նոյնիսկ պիւտճէի այս տարուան յաւելումը, որ երկու միլիարտ տոլար է, աննշան է՝ բազմաթիւ ամերիկեան բանակին տարեկան միլիոն ծախսին, որ 200 միլիարտ է: Ամերիկեան ներկայութիւնը օրէ օր աւելի կը զարգանայ իրանի շրջապատին մէջ:

Առաւել, պէտք է նկատելու, որ իրանի հսկայական վնասները 1980ականներուն եւ իր արդիական գէնքերու (օդանաւեր եւ ռազմանաւեր) գնումի փոքր քանակը՝ բազմաթիւ իր զրացիներուն, ներառեալ՝ Թուրքիան եւ Մեքսիկոն Արաբիան (30 միլիարտ տոլար արժողութեամբ՝ 1990ականներուն): Իրանական բանակը տակաւին ետ կը մնայ անոնցմէ արդիական օդանաւերու տեսակէտէն, օրինակ՝ իրան գոնէ 15էն 20 տարի ժամանակի պէտք ունի լուծելու համար 1979ի յեղափոխութեան, իրաքի հետ իր պատերազմին եւ 1979էն ի վեր տնտեսութեան վերիվայրումներուն պատճառով տնտեսական հարցերը: Այսպիսի կացութեան մը մէջ արդիական գէնքերու եւ սարքերու արտադրութիւնը, իր զրացիներուն ապահովութեան սպառնացող վտանգ ըլլալէ աւելի, նշան է շատ խառնակ շրջանի մը մէջ իր ապահովութեան հաստատելու իր հաստատորոշումին: Երջանին մէջ կրնան շատ դիւրաւ պատերազմ կամ պատերազմներ պայթիլ, նկատելու է իրաքի անորոշ ապագան եւ Հեռնային Հարաբարի չլուծուած տագնապը:

ՀՈՒՄԸՆ
ՓԵՅՄԱՆԻ

«Էժիպ Թալմը»

ՇՐՋԱՆԱՅԻՆ

ԱԶՐՊԷՅՃԱՆ՝ ԿԵՂՉ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐԸ

Ազրպէյճանի «էլսո» թերթը կը տեղեկացնէ, թէ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը վերջերս հրատարակած է «Ազրպէյճանի շահերն մեկնած» արտասահմանեան օժանդակութիւն, աշխատակցութեան անվտանգութեան եւ զարգացման կարելիութեան» խորագրով տեղեկագիր մը, որուն համաձայն, Ազրպէյճանի եւ շաբաթը մը այլ նախկին խորհրդային երկիրներ «կեղծ ժողովրդավարական վարչակարգ» կամ «ընտրական մենատիրութիւն ունեցող երկիրներ են»: «Այլեւս կարելի չէ ըսել, որ Ազրպէյճանի, Քամպուտիոյ, Քամբոճիայի, Երիթրէայի, Հայիթիի, Ղազախստանի, Քենիոյ եւ նման երկիրներ կը գտնուին ժողովրդավարութեան անցումի շրջանին մէջ: Անոնք տակաւին միայն դուրս կու գան մենատիրական կառավարութիւններէն», գրուած է տեղեկագիրին մէջ: Ըստ նախարարութեան կազմէն Վրայ գետեղուած տեղեկագիրին, նշեալ երկիրներէն ոմանք չեն արգելած երկրին մէջ քաղաքական կարծիքներու զանազանութիւնը եւ կուսակցութիւններուն կ'արտօնեն ընտրութիւններուն մասնակցելը, սակայն ընդդիմադիր թեկնածուներուն եւ կուսակցութիւններուն առիթ չեն տար ազատօրէն ընտրաշաւ վարելու եւ յաջողելու: «Բազմակուսակցական համակարգի եւ խորհրդարաններու նման ձեւակաւ ժողովրդավարական հաստատութիւններ գոյութիւն ունին» պարզապէս քողարկելու մենատիրական կառավարութիւններուն իրողութիւնները» նշուած է տեղեկագիրին մէջ:

Միւս կողմէ, սակայն, տեղեկագիրին համաձայն, նախկին խորհրդային երկիրներէն ժողովրդավարական են միայն չորս երկիրներ, որոնցմէ երեքը՝ Հայաստան, Ուրալիցիոյ եւ յատկապէս Վրաստան կարելի է նկատել ժողովրդավարական, սակայն՝ որոշ վերապահութեամբ:

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՉ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻՆ 9 ԱԶԵՐԻՆԵՐ

«Թուրան» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ օտար երկիրներու մէջ բնակող ազգերիներու հետ համագործակցութեան պետական յանձնարումը բանքեր Միւսամէտ ժաֆարով վերջերս յայտնուած է, թէ 2003ի առաջին շաբաթը Պաքու ստացած է Ռուսիոյ մէջ սպաննուած 9 ազգերիներու մարմինները: Ժաֆարով րսած է, թէ նշեալ ազգերիներէն ութն սպաննուած են Մոսկուայի մէջ, իսկ մէկ հոգին՝ Սֆեթերսպոլիկի մէջ: Ան դիտել տուած է, թէ յանձնարումը կը քննէ ռեժիմներու պատճառները եւ ցարդ ունեցած տեղեկութիւններուն հիման վրայ չի կրնար հաստատել, որ ազգերիները սպաննուած են իրենց ազգային պատկանելիութեան պատճառով:

Լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ ըստ ոչ պաշտօնական տուեալներու, Ռուսիոյ մէջ սպաննուած ազգերիներուն թիւը յիշեալ պատկերին կրկնապատիկը կը կազմէ եւ կ'աւելցնէ, որ Պաքու տակաւին պաշտօնական կեցածք չէ որդեգրած այս դէպքերուն նկատմամբ:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ԿԸ ՔՆՆԷ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի «էլ. էն. էս» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ ըստ Պաքուի մէջ Միջազգային Դրամատան ներկայացուցիչներու ղեկավար Աբպար Նոմանի, դրամատունը վերջերս ուսումնասիրութիւն մը կատարած է՝ բացայայտելու Ազրպէյճանի մէջ փտածութեան տարողութիւնը: Ան դիտել տուած է, թէ նախնական տուեալներու համաձայն, Ազրպէյճանի մէջ փտածութիւնը նուազած է: Նոման նշած է, որ մինչ 1999ին Ազրպէյճանի հաստատութիւններուն 59,9 առ հարիւր կաշառակերութեամբ կը զբաղէին, 2002ին այդ թիւը նուազած է 27,5 առ հարիւր: Ան միեւնոյն ժամանակ դիտել տուած է, թէ Ազրպէյճանի պետութիւնը պէտք է աշխատի երկրին մէջ փտածութիւնը կասեցնելու: Ան նշած է, թէ Միջազգային Դրամատունը մտադիր է Ազրպէյճանի մէջ կրթական եւ ուսումնական ծրագրերու մշակելը:

Ինչ կը վերաբերի Ազրպէյճանի եւ Դրամական Միջազգային Ֆոնտին միջեւ յարաբերութիւններու վատթարացման, Նոման յայտնած է, թէ Դրամատունը պիտի շարունակէ Ազրպէյճանի հետ իր գործակցութիւնը: Ան աւելցուցած է, թէ Հակառակ ֆոնտին կողմէ Ազրպէյճանի օժանդակութեան կասեցումին, Պաքու - Թիֆլիս - ձէյհան քարիւղատարին ֆինանսաւորումը պիտի շարունակուի:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազրպէյճանի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ըզբեռնել գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթ վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազրպէյճանի» ծանուցումներու գրասենեակը:

ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

ՄՏԱՅԻՆ «ԱԷՐՈՊԻՔՍ», ՄՆՆԳԱԿԱՆՈՆ՝ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ՏԱՐԵՑ ՊԱՀԵՐ»

Եթէ «տարեց պահե-
րը», երբ չէք կրնար լինել,
թէ ինչու սառնարանին
դուռը բացած էք կամ
նոր դրած էք ձեր բանա-
լիները, հետզհետեւ աւելի
յաճախակի կը դառնան,
մտային «աերոպիքս»ը եւ
ուղեղի յատուկ առողջ
սննդականոն մը կրնան
օգտակար ըլլալ:

Ճիշդ այնպէս՝ ինչպէս
մարմինը յաւելեալ հոգա-
տարութեան կը կարօտի
տարիներուն ընթացքին,
ուղեղը նոյնպէս յաւել-
եալ հոգատարութեան
պէտք ունի:

Գիտնականներու հա-
մաձայն, ուղեղը ծերու-
թեան նշաններ ցոյց տա-
լու կը սկսի շատ կանխա-
կանորէն: 20 կամ 30 տա-
րեկանի շուրջ:

«Ուղեղային ծերու-
թիւնը կը սկսի շատ երի-
տասնի երիտասարդ, քան
մենք կ'երեւակայենք եւ
այս գործընթացը կը շա-
րունակուի աստիճանա-
բար տարիներու ընթաց-
քին», կ'ըսէ Քալիֆորնիա
համալսարանին ծերու-
թեան կեղերոնին տնօրէ-
նը՝ տոքթ. Կէրի Սմոլ:

Գործընթացը կրնայ
փոքր համեմատութեամբ
արագանալ ժառանգա-
կան պատճառներով եւ
աւելի եւս արագանալ՝
ապրելաձեւի վատառողջ
ընտանիքներով:

Այսպէս իհարկեւ հիւան-
դութիւնը ուղեղային ծե-
րացումի այս գործընթա-
ցին վերջնական ար-
դիւնքն է, կը յայտնէ
Սմոլ:

Աշխարհի տարածքին
շուրջ 12 միլիոն անձ Այ-
ցաժմբրի հիւանդութենէ
կը տառապի: Անրոժեղի,
աստիճանաբար յառաջա-
ցող հիւանդութիւնը, որ
մարդիկ յիշողութենէ եւ
մտային կարողութենէ կը
զրկէ, շատ աւելի մեծ թիւ
պիտի արձանագրէ մօտ
ատենէն, նկատի ունե-
նալով, որ հետզհետեւ
աւելի մեծ թիւով անձեր
65 տարեկանէն աւելի
կ'ապրին:

2050ին հիւանդութե-
ան տառապողներուն
թիւը 45 միլիոնի կրնայ
հասնիլ:
Գիտնականներ ներ-
կայիս կարելիութիւնը
ունին մարդոց ուղեղնե-
րուն մէջ հիւանդութեան
նախնական նշանները
զիւկ, որոնք իրենց
40ական կամ 50ական
տարիքին մտային առու-



Ներկայիս անբուժելի Այցաժմբրի հիւանդութեան
կարգ մը ախտաճանճերը կարելի է տարիներ
առաջ նկատել եւ կանխարգիւման միջոցառու-
մներու դիմել, կ'ըսեն մասնագէտներ:
Սոյնիսկ առանց նկատելու ախտաճանճեր, կա-
րելի է կարգ մը միջոցառումներով ուղեղային,
ֆիզիքական մարզանքներով եւ յատուկ սննդա-
կանոնով, խուսափիլ հիւանդութենէ:

աւելի առաջ: Իսկ դեղա-
չինութեան ընկերու-
թիւնները միլիոնաւոր
տոլարներ կը ծախսեն
բուժումի համար դեղե-
րու փնտրումներէ մէջ:
Սակայն Սմոլի կարծի-
քով, ճիշդ սրտի հիւան-
դութեան եւ քաղցկեղի
նման, մարդիկ կրնան
կանխարգիւման միջոցա-
ռումներու դիմել իրենց
ուղեղը առողջ եւ ար-
թիւնը պահելու համար՝
հիւանդութեան վնասնե-
րը հեռու պահելու նպա-
տակով:

ՈՒՂԵՂԱՅԻՆ ՐԶԻՋՆԵՐԸ ԱՌՈՂՋ ՊԱՀԵԼՈՒ ՄԵՉՈՅԵՐ

«Յիշողութեան Աստ-
ւածաշունչը» խորագի-
րով իր գիրքին մէջ 52
տարեկան ջրարանը կը
նշէ ուղեղը երիտասարդ
պահելու միջոցները:
Անոնց շարքին են՝ յիշո-
ղութեան մարզումը,
հմտութեան ձեռքբերու-
մը սրբելը նուազագոյնի
միջոցով, մտային «աերո-
պիքս»ը, ուղեղային ու-
տեսնողէն եւ առողջ
ապրելաձեւ մը:

Սմոլ համոզուած է,
որ յիշողութեան կորուս-
տը ծերութեան անխու-
սափելի մէկ հետեւանքը
չէ: «Մեր ուղեղները
կրնան հակազդել», կ'ըսէ
ան:

Մասնագէտը իսկա-
կան յարձակողանի մը
զէնքերը կը հայթայթէ:
Յիշողութեան պարզ
քննութիւններ ցոյց կու
տան, թէ ի՞նչ վիճակի
դէմ պէտք է պայքարիլ:
Հետազոտութիւններ
ցոյց տուած են, թէ մար-
դիկ, որոնք իրենց
40ական կամ 50ական
տարիքին մտային առու-

համար, նկատի ունենա-
լով, որ ինչ որ մարմինն
համար լաւ է, նոյնպէս
օգտակար է ուղեղին:

Մասնագէտը համոզ-
ուած է, որ յառաջիկայ
5էն 10 տարիներուն կա-
րելու նուազումներ պի-
տի արձանագրուին Այ-
ցաժմբրի հիւանդութեան
շուրջ հետազոտութեանց
մէջ, եւ թէ ուղեղը նկա-
րելու միջոցներուն բա-
րելաւուժը հիւանդու-

կան միջոցներու օգտա-
գործումով գիտնական-
ներ անընկալան երեւոյթ-
ներ նկատած են Այցաժ-
մբրի հիւանդութեան ծի-
նային վտանգը դիմա-
գրաւող երիտասարդնե-
րու ուղեղներուն մէջ,
ախտանշաններու հաւա-
նական յայտնումէն
տասնամեակներ առաջ:
Ֆիզիքսի (Արիզոնա)
կուս Սամարիթըն
Իժվակիտական կեղր-

ՉԻՓԻ ՄԸ ՎՐԱՅ ՈՒՂԵՂԻ ԱՐՃԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ամերիկեան «Թեքսըր Պայոսայընսը»
կենսաարհեստագիտութեան ընկերութիւնը
մշակած է միջոց մը՝ ամբողջ շարքեր ու-
ղեղային հիւսկէնը ողջ պահելու, ինչ որ առիթ
պիտի տայ գիտնականներուն, որ նոր դեղերու
փորձարկումին ձեռնարկեն ուղեղի կապուած
շարք մը հիւանդութիւններու համար, ինչպէս՝
Այցաժմբրի հիւանդութիւնը եւ հերթաճնութիւնը
(Սքիզոֆրենի):

Սուկերու են առեւտուներու ուղեղներուն օգ-
տագործումով գիտնականներ մշակած են չի-
փի մը վրայ ուղեղի արհեստագիտութիւնը, որ
կրնայ թափ տալ նոր դարձանումներու մշա-
կումին:

Այսպէս կոչուած «միլի» ուղեղը, որ կրնայ
շարքեր գոյատեւել, առիթ պիտի տայ գիտ-
նականներուն՝ հսկելու ուղեղային ցանցերուն
վրայ դեղերու ազդեցութեան, փոխանակ հե-
տեւելու անհատական բջիջներու վրայ անոնց
ազդեցութեան:

Ապակայ չիփերը կը պարունակեն իրարու
կապուած անասուներու ուղեղային հագաթա-
ւոր բջիջներ՝ գետնիցում ուղեղային արուես-
տական հեղուկի մէջ:

Չիփի մակընթացին վրայ գտնուող 64
էլեկտրոններ կը հսկեն ուղեղային հիւսկէնի
էլեկտրական ընդհանուր գործունէութեան,
նիշդ էլեքթրոնաֆալոկրամի մը նման, ցոյց
տալով հիւսկէնի վրայ դեղերուն ազդեցու-
թիւնը:

Թեան ախտաճանաչումը
պիտի բարելաւէ:

Անոր ենթադրու-
թեամբ, պիտի մշակուին
նոր դեղեր, որոնք «պատ-
ուաստներ պիտի չըլլան»:
«Պիտի կարենանք գա-
նոնք գործածել մարդոց
մէջ, որոնք տակաւին Այ-
ցաժմբրէ չեն տառապի-
ր, սակայն որոնք նշան ու-
նին իրենց ուղեղին մէջ:
Պիտի կարենանք հետեւել
առաւելագոյն աշխատը-
նող խաղերով, պահելու
բառերով, օտար լեզու մը
կամ նուագել (սորվելով):
«Մտային «աերո-
պիքս»ը կրնայ խաչբառ
լուծել, ձախ ձեռքով
գրել, երբ անձը աջիկ է,
կամ նոր լեզու մը սորվիլ
ըլլալ: Անիկ կրնայ ըլլալ
որեւէ բան, զոր մարդիկ
հաճոյք կ'առնեն ընելէ»:
Կ'ըսէ ան:

Մակայն ուղեղային
վնասուած բջիջներու
«նորոգութիւնը» տակա-
ւին երկար ճամբայ ունի
կարելիք: Գիտնականնե-
րու կարծիքով, աւելի
դիւրին պիտի ըլլայ ուղե-
ղը պաշտպանել, քան՝
«նորոգել»:

Ան կ'երեւակայէ
ապագայ մը, ուր արեան
քննութիւնը մը կամ մագ
մը ուղեղին կենսաբանա-
կան յատկութիւնները
պիտի հայթայթեն, եւ հա-
մակարգիչ մը պիտի տպէ
ուղեղին յատուկ առողջ
սննդականոն մը եւ անհը-
րեթեշտ դեղերու անուս-
կան արգելափակումներ
կարենան անհատին յա-
տուկ կանխարգելիչ մի-
ջոցառումներու դիմել:
«Յիշողութեան Աստ-
ւածաշունչը» կը շեշտէ,
որ կան բաներ, զորս
կրնանք հիմա իսկ ընել
մեր յիշողութիւնը բարե-
լաւելու եւ ուղեղային
առողջութիւնը առաւե-
կան անդրադարձ ունին
ուղեղին յիշողութեան
կեղերոններուն վրայ,
կ'ըսէ ան:

Չուզազիպութիւն չէ,
որ ուտեստեղէնի եւ մար-
զանքի կապուած թելադ-
րանքը նման է այն թե-
լադրանքներուն, որոնք
կը տրուին սրտի հիւան-
դութեան եւ քաղցկեղի
վտանգը նուազեցնելու

ՈՒՂԵՂԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՍԱՆՇԱՆՆԵՐԸ ՀԱՏ ԱՒԵԼԻ ԱՌՈՂՋ

Սքեյնիկի գերարդիա-
նի հետազոտողներ փո-
փոխութիւններ նկատած
են ApoE-4 ծինը ունեցող
մարդոց ուղեղներուն
մէջ: Այդ ծինը կապուած
է թղթաթերթի բարձր հա-
մեմատութիւններու եւ
Այցաժմբրի հիւանդու-
թեան:

Այդ ծինը ունեցող ան-
ձերը յաւելեալ վտանգ կը
գիտարարեն հիւանդու-
թեան տառապելու, սա-
կայն ասիկա ստոյգ չէ,
կ'ըսեն գիտնականները:
Թէ եւ Այցաժմբրի
հիւանդութիւնը բուժում
չունի, սակայն գիտնա-
կաններու կարծիքով,
ֆէթ՝ ԱՖԷՆՆԵՐ կարելի է
գործածել ստուգելու հա-
մար դարձանումներու
օգտակարութիւնը՝ կան-
խարգիլելու կամ անոր
յայտնումը ուղեղներու
նպատակով:

ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՎԱՅՐԱԳ ՄԱՀԵՐՈՒՆ 50 ԱՌ ՀԱՐԻՐԸ ԱՆՉՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է

Կ'ԸՍԵ Ա. Շ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Վարչագութիւնը իր բոլոր տեսակներով տարեկան
աշխարհի տարածքին 1,6 միլիոն գոհ կը խլէ, եւ մա-
հերուն շուրջ 50 առ հարիւրը անձնասպանութիւն-
ներ են, կ'ըսէ Հոկտեմբերին հրատարակուած Ա. Շ.
Կազմակերպութեան մէկ տեղեկագիրը:

Անիկա կը յայտնէ, որ վարչագութիւնը, պատա-
նեկութեան մինչեւ միջին տարիք մահերու գլխաւոր
պատճառներէն մէկն է:

Ըլլալ անիկա պատերազմ, սպանութիւն, անձնա-
պանութիւն, բնտանեկան, սեռային կամ համայնքա-
յին բռնարարումներ, վարչագութիւնը ընկերութեան
բոլոր խաւերուն կը վերաբերի եւ տարեկան միլիա-
նաւոր տոլարներ կ'արժէ առողջապահութեան եւ
օրէնքներու ամրապնդումին վերաբերող մարզերուն,
ինչպէս նաեւ՝ կիսուած արտադրողականութեան
իմաստով:

«Ամենէն ցնցիչը այն է, թէ հարցը որքան մեծ է՝
անկախ երկրէն, շրջանէն կամ կրօնէն: Վարչագու-
թիւնը անընդունելի կերպով բարձր համեմատու-
թիւններ կ'արձանագրէ բոլոր երկրներուն մէջ»,
կ'ըսէ տոքթ. Էթիէն Քրուկ, որ պատրաստած է վար-
չագութեան կազմակերպութեան առաջին տեղեկա-
գիրը:

Տեղեկագիրը, որուն պատրաստութիւնը երեք տա-
րի տեւած է, եւ որ աշխարհի տարածքին 160 մասնա-
զէտներէ տեղեկութիւններ օգտագործած է, ցարդ
պատրաստուած ամենէն համապարփակ գեկուցումն
է մարդոց ուրիշներու եւ իրենք իրենց պատճառած
միտ արարքներուն մասին:

Ա. Շ. Կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Կրո-
Հարլէմ Պրունթլանտ կը նշէ թմբեցուցիչներու, ոգե-
լից ըմպելիներու չափազանցուած կերպով գործածու-
թիւնը, ամուսնական կեանքի մէջ տագնապներ, գէն-
քերու տրամադրելի ըլլալը, եկամուտի եւ սեւերու մի-
ջեւ անհաւասարութիւնը իրբեւ կարգ մը պատճառ-
ներ՝ վարչագութեանց:

Տեղեկագիրին համաձայն, տարեկան 1,6 միլիոն
վարչագ մահերուն 50 առ հարիւրը անձնասպանու-
թեան, մէկ երրորդը սպանութեան եւ 20 առ հարիւ-
րը պատերազմներու կապուած են:

2000ին անձնասպանութեան մահերու թիւը 815 հա-
զար եղած է՝ զայն դարձնելով աշխարհի տարածքին
մահուան 13րդ գլխաւոր պատճառը:

Արեւելեան Ասիայու կ'արձանագրէ անձնասպա-
նութեան ամենէն բարձր համեմատութիւնները, իսկ
Լատին Ամերիկայի մէջ երկիրներ են Ասիոյ մէջ քանի
մը երկիր ամենէն ցած համեմատութիւններ ունին:
Նոյն տարուան ընթացքին շուրջ 520 հազար հոգի
մահացած է իրբեւ հետեւանք բնտանեկան, երիտա-
սարդներու կամ հիմնարկութիւններու մէջ վարչա-
գութեանց, որոնց կարգին՝ բռնարարումներ, խոչ-
տանգումներ:

Տեղեկագիրը կ'ըսէ, որ 20րդ դարը պատմութեան
ամենէն վարչագ մահերէն մէկը եղած է: Շուրջ 191 մի-
լիոն մարդ՝ 50 առ հարիւրը քաղաքային, իրենց կեան-
քը կորսնցուցած են զինեալ հակամարտութեանց
պատճառով:

Տեղեկագիրը կ'առաջարկէ վարչագութեանց մա-
սին յաւելեալ տեղեկութիւններ հաւաքել, դիմել կան-
խարգիլման եւ զոհերուն աւելի լաւ հոգատարու-
թեան միջոցներու:

Անիկա կը պահանջէ նաեւ դաստիարակչական քա-
ղաքականութեան մշակումը՝ քաղաքներու համար
սեռային եւ ընկերային հաւասարութիւնը, մարդկա-
յին իրաւունքները պաշտպանող միջազգային համա-
ձայնագիրներուն գործադրութիւնը եւ յաւելեալ ճի-
շգրտ՝ հակադրութեան համար վարչագութեանց, որոնք
կապուած են գէնքերու եւ թմբեցուցիչներու ընդհան-
րական առեւտուրին:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՈՂՅՈՐԶ», «ԱՍՇՈՒՆ ՏԵՅԻՆ ՆՈՒՂՋ», ԵՒ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»)

**ՎԱՃԱՍՏԱՆՍ
ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ**

42 ԱՄԵԱԿ (1961 – 2003)

Երկար տարիներու փորձառութեամբ

**ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ
ՍԱՐԳԻՍ**

Կը պատրաստ ամէն տեսակ համեղ

- ԱՐԵՎԵԱՆ ԱՆՈՒՇԱՆՆԵՐ
- ԱՄԵՆ ԱՌԱՌՑ ԵՆՅԵ ԺՊՆԵ
- ՆԱՆԱՃԱՃ՝ ԲՐՈՒԱՍԱՆ ԵՒ ԵՒԵՆԻ
ԿԱՐԿԱՆԱԿ
- ՅԵՆՅԻ ԽՍՈՐ ԵՒ ԱՅԱՅԵՑ
- Ս. ԱՌԱՎԱՍՏ ՏՕՆԻՆ ԱՌՈՒՅՈՎ ԴԵԿԱ

Պուրճ Համուտ, Արագ փողոց
Հեռ.՝ 01-261475

**ԱՆՈՒՇԱՎԱՃԱՆՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ
ՄԱՆՈՒՇԱՆՆԵՐԻ ՄԸ ԿԸ ԹՈՒԻ ԱՆՇՈՐԸ
ՎԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՕԺՎԱԿԱՆԵԼ**

Նորագոյն ուսումնասիրութիւններէն եր-
կուրը գործիք կը կանգնին այն տեսութիւն-
ներուն, թէ պտուղներով, բանջարեղէններով
եւ ամբողջական հատիկներով հարուստ
սննդականոն մը կրնայ օգտակար ըլլալ Այցաժ-
մբրի հիւանդութեան կանխարգիւման:

Գիտնականներ երկար տեսնել ի վեր կը փո-
ձեն գտնել Սե. Ե. Ե. կենսամիջոցներու օգտա-
կար ազդեցութեան պատճառը: Անոնք անթի-
օքսիտաններ են, որոնք կը միանան եւ ոչ գոր-
ծօն կը դարձնեն վնասակար ազոտ «առտի-
քը»ները:


Երկու ուսումնասիրութիւնները յանգած են
այն եզրակացութեան, թէ Ե. կենսամիջոցը, որ
կը գտնուի կանաչ տերեւներով բանջարեղէն-
ներու, ամբողջական հատիկներու, ընկոյզի,
բուսական ձեթերու եւ յատկապէս ձիթի մէջ,
կը նուազեցնէ Այցաժմբրի հիւանդութեան
հաւանականութիւնը:

Իսկ անոնցմէ մէկը գտած է Սե. կենսամի-
ջոցի իմաստով օգտակարութիւնը:

Միւս կողմէ, ֆրանսացի գիտնականներ
Հոկտեմբերի վերջերուն յայտնած են, թէ շա-
բար անգամ մը ձուկ ուտելը կրնայ օժանդակ
կել Այցաժմբրի եւ խեղճութեան այլ տեսակնե-
րու յայտնումը նուազեցնելու:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻՐԱՆԱԽԱՆԱԿԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՆԱԺԺԱՐ ՌԻԱՏԻ - Հ. Մ. Ը. Մ. 79-60

Լիբանանի պասքեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան դարձի 2րդ հանգրուանին իր կատարած մրցումին, Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական խումբը անցեալ շաբաթավերջին 79-60 արդիւնքով պարտութիւն մը կրեց պարագլուխի դիրքը զբաղող Նաթթար Ռիատիէն: Ա. կիսախաղին մրցակից կազմը 51-30 (առաջին քորթըր՝ 28-10, երկրորդ քորթըր՝ 23-20) յառաջացած էր: Թէեւ երրորդ քորթըրը Հ. Մ. Ը. Մ. ինք յառաջացաւ (17-7), սակայն չորրորդ եւ վերջին քորթըրն ալ վերջ գտաւ Նաթթարի յաղթանակով (24-13):

ՍԱՃԵՍ ԸՆԴԴՍԱՅԱԲ ԵՐԹԻ ԱՆՈՅԵԱՆ

Լիբանանի պասքեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան երթի 9րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, Սաժէս 105-102 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռիատին, հանդիսացաւ երթի ախոյեան՝ 25 կէտով: Անիկա ցարդ կրած է միայն մէկ պարտութիւն:

Դարձի մրցումները կը սկսին այսօր՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաժէս - Քահրապա	6:00ից	Ֆուատ Եեհապ
Ռիատի - Ղազիր	8:30ից	Ռիատի
Սատարք - Անդրանիկ	9:45ից	Սատարք
ՎԱՂԸ		
Պլու Սքարք - Անիպալ	6:00ից	Մըրի դաշտ
Շանվիլ - Սանքրալ	6:00ից	Շանվիլ

ՍՏՈՐԵԻ՝ երթի վերջնական դասաւորումը (տասը խումբերը կատարած են 9ակում մրցում).

ԿԷՏ	Յ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.
1.- Սաժէս	25	8	1	850 706
2.- Շանվիլ	23	7	2	723 627
3.- Անիպալ	21	6	3	754 706
4.- Ռիատի	21	6	3	808 714
5.- Անդրանիկ	19	5	4	756 755
6.- Պլու Սքարք	19	5	4	772 740
7.- Սատարք	15	3	6	700 758
8.- Սանքրալ	15	3	6	678 775
9.- Ղազիր	11	1	8	624 750
10.- Քահրապա	11	1	8	672 781

ԵՐՐՈՎԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՌԷԱԼ ՍՈՍԻԵՏԱՏ՝ ՅԱՐԴԱՆ ՊԱՐՏԵԼԻ

- Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ԱՌԱՋԻՆ՝ ԵՐԹԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԱԻԱՐՏԻՆ

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 18րդ եւ երրորդ նախափուլերին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը զբաղող Ռեալ Սոսիետատ կը շարունակէ հանդիսանալ ցարդ անպարտելի միակ խումբը:

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 17րդ եւ երրորդ փուլերին հանգրուանի մրցումներուն, Ա. ՍԷ. Միլան դարձի մրցումները պիտի սկսի պարագլուխի դիրքին վրայ, որովհետեւ անիկա հանդիսացաւ աշխան ախոյեան:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները.

ՍՄԱԼԱՆԻ	ԿԷՏ
Սելիյա - Մալախ	0-0
Սլաւէս - Օսասունա	1-1
Տեփ. Քորունա - Արթիքո Պիլպաս	2-1
Մայորքա - Ռ. Հուելվա	1-1
Ռասինկ Սանթանտեր - Ռեալ Պեթիս	0-1
Ռայօ Վալբրանս - Ռեալ Վալադոլիտ	0-0
Վիարէալ - Էսփանիոլ	0-0
Ռեալ Մատրիտ - Արթիքո Մատրիտ	2-2
Ռեալ Սոսիետատ - Մելքա Վիկո	1-0
Պարսելունա - Վալենսիա	2-4

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Ռեալ Սոսիետատ	40 (34-20)
2.- Ռեալ Մատրիտ	37 (39-18)
3.- Վալենսիա	32 (31-16)
4.- Տեփորթիօ Քորունա	32 (26-21)
5.- Ռեալ Պեթիս	30 (29-21)
6.- Սելթա Վիկո	27 (20-18)
7.- Մայորքա	27 (24-31)
8.- Արթիքո Մատրիտ	25 (28-24)
9.- Ռեալ Վալադոլիտ	24 (18-19)
10.- Պարսելունա	23 (27-23)
11.- Սելիյա	22 (15-14)
12.- Վիարէալ	22 (19-21)
13.- Մալախ	21 (22-24)
14.- Սլաւէս	21 (22-29)
15.- Արթիքո Պիլպաս	21 (26-34)
16.- Ռասինկ Սանթանտեր	20 (20-24)
17.- Օսասունա	20 (19-24)
18.- Ռայօ Վալբրանս	18 (18-26)
19.- Էսփանիոլ	17 (19-28)
20.- Ռեթրեանթիօ Հուելվա	11 (14-35)

ՔԱՄԵՐՈ	ԿԷՏ
Ա. ՍԷ. Միլան - Փիլաշենցա	2-1
Արալանթա - Ա. Լու. Ռոնա	2-1
Քիլո - Եուվենթուս	1-4
Լացիօ Ռոնա - Ուտինէպէ	2-1
Մոտենա - Պրեշիա	0-0
Փերուճիա - Ինթեր Միլան	4-1
Թորինո - Քոնո	0-0
Փարմա - Էմիլիո	2-0
Ռեճինա - Պոլոնիա	1-0

ԳԱՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Ա. ՍԷ. Միլան	39 (34-11)
2.- Լացիօ Ռոնա	36 (33-16)
3.- Ինթեր Միլան	36 (34-20)
4.- Եուվենթուս	35 (32-13)
5.- Քիլո	32 (28-17)
6.- Պոլոնիա	32 (19-14)
7.- Փարմա	26 (29-19)
8.- Ուտինէպէ	26 (16-16)
9.- Ա. Լու. Ռոնա	23 (28-25)
10.- Էմիլիո	22 (24-24)
11.- Փերուճիա	22 (22-24)
12.- Մոտենա	20 (12-24)
13.- Պրեշիա	18 (19-26)
14.- Արալանթա	14 (17-29)
15.- Փիլաշենցա	13 (14-26)
16.- Ռեճինա	10 (9-30)
17.- Թորինո	10 (9-30)
18.- Քոնո	7 (9-27)

ԱՄՍՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

- ԴԱԻԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԸԱՍԱԲ ԸԱՌՈՐԴ ԱԲԱՐՏԱԿԱՆԻՆ - ԹԻԻ ՄԵԿ ԴԱՍՈՒԱԾ ԼԵՅԹԸՆ ՇՈՒԹ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարքին ութերորդ օրուան մրցումներուն, երէկ տեղի ունեցան տղոց եւ աղջկանց Դ. հանգրուանի մնացեալ ճակատումները, որոնցմէ ետք յստակացան քառորդ աւարտական հանգրուանին իրենց տուժը ապահովող մարզիկներուն անունները:

Երէկուան կարեւորագոյն մրցումն էր արժանութիւնահայ Դաւիթ Նալպանտեանի (դասուած՝ 10րդ) եւ գուլիցերիացի Ռոմէ Ֆետերէրի (դասուած՝ 6րդ) միջեւ, նկատի ունենալով անոնց դասուած զիրքերը:

Նալպանտեան տպաւորիչ մրցում մը կատարելէ ետք եւ շուրջ երեք ժամ ճակատելէ ետք Ֆետերէրի դէմ, տարաւ վերջնական յաղթանակը, արձանագրելով 6 - 4, 3 - 6, 6 - 1, 1 - 6 եւ 6 - 3 արդիւնք մը:

Անցեալ տարի Ուիմպլերի թենիսի մրցաշարքին աւարտականին Լէյթըն Հուիթլէն պարտուած Նալպանտեան, այժմ քառորդ աւարտականին վարդ պիտի ճակատի 31րդ դասուած գերմանացի Ռայնըր Շիուլթրիի հետ, որ 6 - 3, 6 - 4, 1 - 6 եւ 6 - 3 արդիւնքով



Դաւիթ Նալպանտեան կը տօնէ իր արձանագրած յաղթանակը

աւարտականի մրցումները եւ անշուշտ մրցաշարքը պիտի շարունակուին առանց աւստրալիացի մարզիկներուն:

Երեք անգամ այս մրցաշարքին տիրացած ամերիկացի Անտոն Ակաբի (դասուած՝ 2րդ) քառորդ աւարտականին պի-

տ. - 25.- Միխայիլ Եուսի (Ռուսիա) 6 - 7, 3 - 6, 7 - 5, 6 - 3 եւ 6 - 2

18.- Եուսի Այնաուի (Մարոք) - 1.- Լէյթըն Հուիթլէն (Աւստրալիա) 6 - 7, 7 - 6, 7 - 6 եւ 6 - 4

ՕՂՋԻԿՆԵՐ

25.- Մեկիան Շոկնեւի (Մ. Ն.) - 20.- Էլենա Պոլինա (Ռուսիա) 5 - 7, 6 - 2 եւ 6 - 4

1.- Սերենա Ուիլիլմս (Մ. Ն.) - 18.- Էլենա Տանիլիտու (Յունաստան) 6 - 4 եւ 6 - 1

8.- Անասթասիա Միսքինա (Ռուսիա) - 10.- Չանտա Ռուպին (Մ. Ն.) 4 - 6, 6 - 4 եւ 6 - 1

4.- Քիմ Բիլպըրդ (Պելճիքա) - 19.- Ամանտա Քեթթըր (Հարաւայի Ափրիկէ) 6 - 3 եւ 6 - 1

Ստորեւ՝ քառորդ աւարտականի մրցումներուն յայտագիրը (նշենք, թէ աստղանիշով նշանակուած մրցումները տեղի կ'ունենան այսօր).

ՕՂՋԵ

18.- Եուսի Այնաուի (Մարոք) - 9.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.)

31.- Ռայնըր Շիուլթրի (Գերմանիա) - 10.- Դաւիթ Նալպանտեան (Արժանթին)

* Ուլիյն Ֆերէյրա (Հարաւայի Ափրիկէ) - 4.- Խուան Քարլոս Ֆերէրօ (Սպանիա)

* 12.- Սեպասթիան Կրոման (Յրանսա) - 2.- Անտոն Ակաբի (Մ. Ն.)

ՕՂՋԻԿՆԵՐ

1.- Սերենա Ուիլիլմս (Մ. Ն.) - 25.- Մեկիան Շոկնեւի (Մ. Ն.)

4.- Քիմ Բիլպըրդ (Պելճիքա) - 8.- Անասթասիա Միսքինա (Ռուսիա)

* 5.- Ճասթին Հենին - Հարտեն (Պելճիքա) - 6.- Վիլմինիա Ռուանօ Փաքուալ (Սպանիա)

* 7.- Տանիլա Հանթլոյ (Մոլդովա) - 2.- Վիլլըս Ուիլիլմս (Մ. Ն.)

9.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.)

ՕՂՋԵ

10.- Դաւիթ Նալպանտեան (Արժանթին) - 6.- Ռոմէ Ֆետերէր (Չուիլցերիա) 6 - 4, 3 - 6, 6 - 1, 1 - 6 եւ 6 - 3

Կրան շրջմի մրցաշարքը: 31.- Ռայնըր Շիուլթրի (Գերմանիա) - 23.- Ճեյմս Պլէյք (Մ. Ն.) 6 - 3, 6 - 4, 1 - 6 եւ 6 - 3

9.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.)

ԿՈՓԱՄԱՐՏ

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Հետէն քաղաքին մէջ (Գերմանիա) տեղի ունեցող կոփամարտի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, Արթուր Պետրոսեան (Ուզպէքիստան) պարտութեան մատնելէ ետք իր լեճ մրցակիցը՝ Չեմանը, 11րդ անգամ ըլլալով տիրացաւ աշխարհի ախոյեանութեան տիտղոսին:

Իր կատարած 36 միջազգային մրցումներուն ըրորին ալ Պետրոսեան յաղթանակէ բացի ոչինչ արձանագրած է:

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

●ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ (Ռուսիա) տեղի ունեցող ԱՊՀի անգամ եւ Պալմեան երկիրներուն միջեւ ֆուլպոլի մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Հայաստանի ախոյեան Փիլիպիկ Երեւան արդէն իսկ դուրս մնացած է մրցաշարքէն, որովհետեւ անիկա իր կատարած երկու մրցումներուն ալ պարտութիւն կրած է: Առաջինին անիկա 2 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սթոնթոյն (Լաթվիա), իսկ երկրորդին, 3 - 1 արդիւնքով պարտուեցաւ Տարաք - Ռեքարէն (Տաիլիստան):

Հակառակ անոր որ Փիլիպիկ Երեւան այսօր կը ճակատի Փատէի դէմ (Պիլիպոսիա) սակայն արդիւնքը բան մը չի փոխեր, որովհետեւ Բ. խմբակին մաս կազմող հայկական խումբը արդէն իսկ դուրս մնացած է մրցաշարքէն:

●ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՐՐՈՒՄ 25ին, Պլէտ քաղաքին մէջ (Սլովենիա) տեղի ունեցող ձմեռային Ողիմպիականին երկուստորակի փառատունին երեք մարզիկներ պիտի մասնակցին հոն տեղի ունեցող մրցումներուն: Անոնք են՝ Ստեփան Մոսիկեան (դասուակարգաւ), Արսէն Ներսիսեան (լեռնադահուկարգաւ) եւ Գեղամ Վարդանեան (զեղասահորդ, ֆիլիպր - սքեյթինգ):

●ԱՆՅԵԱԼ շաբաթավերջին Գիւմրիի մէջ աւարտեցաւ Հայաստանի յունահունական ոճի ըմբշամարտի ախոյեանութիւնը:

Ըստ դասակարգերու Հայաստանի ախոյեան հանդիսացան՝ Արմէն Յակոբեան (55 քկ., էլմիածին), Կարէն Մնացականեան (60 քկ., Երեւան), Վաղինակ Գալստեան (66 քկ., Երեւան), Արա Գրիգորեան (74 քկ., Գիւմրի), Լեւոն Գեղամեան (84 քկ., Ախուրեան), Արման Գեղամեան (96 քկ., Ախուրեան) եւ Խորէն Պապոյեան (96 քկ.էն վեր, Գիւմրի):

ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՕՔՍԷՌ - ՄԱՐՍԷՅ

Յրանսայի ֆուլպոլի ախոյեանութեան 23րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի կ'ունենայ հետաքրքրական եւ բաւական տաք ճակատում մը, երբ Օքսէն իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Մարսէյը:

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած յետաձգուած մրցումի մը, Օքսէն ձախողեցաւ Մարսէյի եւ պարագլուխի դիրքը գրաւող Նիսի մնան 38 կէտ ունենալ, երբ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց նախափուլին դիրքը զբաղող Մոնփելիէի հետ (անոր դաշտին վրայ):

Այսօրուան այս մրցումին յաղթականը 24 ժամուան համար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, սպասելով վարդ տեղի ունենալիք Նիս - Փարիզ Մէյն ժերմէն մրցումին:

Մարսէյի յետապահ Սեպասթիան Փրեթք, որ անցեալ շաբաթավերջին Գրեթէյի դէմ (Յրանսայի լիկայի բաժակ) տեղի ունեցած մրցումին վիրաւորուեցաւ, պիտի բացակայի այսօրուան մրցումին: Շատ հաւանաբար Մարսէյին բացակայի նաեւ յառաջապահ Իպրահիմ Պաքուալը (վիրաւոր):

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան նաեւ ախոյեանութեան զօմով յետաձգուած երկու այլ մրցումներ ալ, որոնց առաջինին Լանս 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Սըտանը, մինչ երկրորդին, Լը Հաւըրը 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Սթրազպուրկի հետ:

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած է անոնց գրաւած դիրքերը):

ՄՅՍՕՐ

Օքսէն (4) - Մարսէյ (2)

Լիոն (3) - Սոչո (6)

Նիս (1) - Փարիզ Ս. փ. (8)

Պորսո (10) - Կեկկան (7)

Մոնպո (5) - Լանց (9)

Նանք (11) - Սըտան (16)

Լիլ (13) - Սթրազպուրկ (14)

Ռեկ (15) - Պարիս (12

ԻՍՐԱԵԼԻ ԻՈՐԶՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐՈՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՐՉՐԱՆԱՅ

Ընտրութիւններէն մէկ շաբաթ առաջ, Իսրայէլի Աշխատաւորական Կուսակցութիւնը տարողնուած վիճակ մը կը ներկայացնէ, այն պահուն, երբ բոլոր հարցախոյզերը կը նախատեսեն Լիքոնտի ղեկավար Արիէլ Շարոնի յաղթանակը:

Աշխատաւորականներուն ընտրաշաբաթ հարուած մը ստացաւ, երբ «Մաարիվ»-ի կողմէ կազմակերպուած հարցախոյզի մը արդիւնքները առաջարկեցին, որ կուսակցութիւնը յաղթանակի առիթ կրնար ունենալ, եթէ Ամրամ Միցնայի փոխարէն անոր ղեկավարը Ըլլայ Շիմոն Փերէս: Ըստ հարցախոյզին, Փերէսի ղեկավարութեամբ՝ Աշխատաւորական Կուսակցութիւնը առնուազն տասը աթոռ աւելի պիտի ունենար Քնեսէթի մէջ: «Ետիտիվ Ահրոնոթի» մէկ հարցազրոյցին համաձայն, Աշխատաւորականները 19-20 աթոռ պիտի ապահովեն, իսկ Լիքոնտ՝ 32-33 աթոռ:

Միւս կողմէ, Աշխատաւորական Կուսակցութեան բանբերը շեշտեց, որ կուսակցութեան բոլոր անդամներն ու համակիրները իբրեւ մէկ մարդ կանգնած են Միցնայի ետին: Բանբերը հերքեց այն լուրերը, որոնք ներքին հարուած մը կը նախատեսեն Միցնայի դէմ:

Շարոնի յաղթանակը կը մտահոգէ իսրայէլացի արաբները: Անոնք կ'ըսեն, որ եթէ Շարոն կազմէ փոքրամասնութիւններու կառավարութիւն մը, կացութիւնը այնքան մտահոգիչ պիտի չըլլայ, որովհետեւ խաղաղութեան զօրավիճ կանգնող ճակատը նոյնքան զօրաւոր պիտի ըլլայ: Սակայն մտահոգիչ պիտի ըլլայ պարագան, եթէ Շարոն յաջողի համոզել ու ազգային միութեան կառավարական ընկերակցութեան մը մէջ սիրաշահիլ Աշխատաւորական Կուսակցութիւնը:

Իսրայէլացի արաբները կը կազմեն իսրայէլացի բուհարկողներուն 15 առ հարիւրը, իսկ բնակչութեան՝ 18 առ հարիւրը: Նախորդ ընտրութիւններուն արաբները տասը ներկայացուցիչ ունէին Քնեսէթի մէջ:

(ԱՅՓ)

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԱՇՆԱՊԱՏ.— Թուրքմենիստանի խորհրդարանը 2003 տարին հռչակած է բռնատէր նախագահ Սափարմարով Նիյազովի մօտ Կուրպանսոյլթանի անունով «անմահացնելու համար անոր սուրբ պատկերը եւ օրհնեալ իշատակը»:

● ՃՈՂԱՆԵՍՊԸՐԿ.— Հարաւային Կիպրոսի 19 տարեկան կից մը խեղդամահ ըրած է պայամ մը, երբ անկիւ շաբաթավերջին իր վրայ յարձակած է Քէյփ Թաունի մէկ ազարակից մէջ:

● ՃՈՂԻՆԿ Կ'ԸՆԵՒ ԵՒ ԵՐԵ ԿԱԳ ԱՌԻ, ջայլամը դեպի ինձի վագեց եւ երկու անգամ յարձակեցաւ վրաս: Երրորդ յարձակումին, Քորլիզ Սթայն որոշած է գայն սպանել եւ բռնած է անոր վիզը ու խեղդած...:

● ՊԻԹՃԱՌԻԼԻ (ՀՆԴԿԱՍՏԱՆ).— Հիւսիսային Հնդկաստանը հարուածող ցուրտի ալիքը կը սպաննէ օձերը, որոնք ընդհանրապէս կը ձմեռեն, ահ ու սարսափի մատնելով գիւղացիները, որոնց համար երեւոյթը պարագայ վատ երեւոյթներու նախատեսութիւն կը նշանակէ: Առնուազն 2 տասնեակ պարագաներ արձանագրուած են անցնող շաբթուան ընթացքին՝ օձերու, որոնք իրենց ձմեռնային բունի ստորերկրային վայրերուն մէջ կ'արթնան եւ հողին մակերեսը կը սողան ու կը սատկին...:

(ԱՅՓ)

ՃԱՄԱՅՈՅՅԻ ԴԵՍ ՄՐՅՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԹԵԼՈՒ ԸԱՍԱՐ

ՆԻԿՈՍԻԱ, 20 (ԱՅՓ).— Կիպրոսի յոյն եւ թուրք համայնքներուն ղեկավարները Երկուշաբթի օր ժողովներու նոր ռաունտի մը սկսան մինչեւ Փետրուար 28 համաձայնութիւն մը գոյացնելու նպատակով ՄԱԿի վերամիացման ծրագրին շուրջ, ապահովելու համար, որ վերամիացած Կիպրոսը Մայիս 2004ի Ե.Միութեան պիտի անդամակցի:

Նախագահ Կլաֆթոս Քլերիտէս եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ Նիկոսիոյ ՄԱԿի համայնքին մէջ ժողով մը գումարած են՝ իրենց խորհրդատուներու ամբողջական կազմերով:

Ղեկավարները որոշած են շաբաթ 3 անգամ ժողով մը գումարել Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն, թափ տայու համար բանակցութեան ընթացքին:

ՄԱԿի պատուիրակ Ալվարո ալ Սոթո առանձինն ժողովներ գումարած է Երկուշաբթի առաւոտուն Քլերիտէսի եւ Տենքթաշի հետ: Ան լաւատեսութեամբ արտայայտուած է, ըսելով, որ թիրախ թուականը կարելի է իրականացնել, սակայն ան դիտել տուած է նաեւ, որ ՄԱԿ իր ուշադրութիւնը գումարած պիտի չպահանջ կղզիին 28 տարուան տագնապին լուծման վրայ, եթէ Փետրուար 28 ամառուի առաջ համաձայնութեան մը գոյացման:

Ղեկավարները դարձեալ շեշտեցին, թէ յանձնառու են բանակցելու ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի վերատեսութեան ենթարկուած ծրագրին հիման վրայ, այն յոյսով, որ կարելի պիտի ըլլայ մինչեւ թափ տայու համար բանակցութեան ընթացքին:

ՈՒԱՇԻՆԿՈՅՆ ԿՈՂՄԵ ՆԻԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ «ԽԱՅԾ»

Տենքթաշ յայտնած է, որ Մ. Նահանգներու կողմէ նիւթական օժանդակութեան առաջարկ ստացած է, օգնելու համար այն թուրք կիպրացիներուն, որոնք կրնան տեսնուելու կղզիին 28 տարուան տագնապին լուծման վրայ, եթէ Փետրուար 28 ամառուի առաջ համաձայնութեան մը գոյացման:

«Պատրաստ էք դրամ տալու, սակայն աւելի ուշ այն հարցերը, թէ Քնեսէթի հաւանութիւն պիտի տայ թէ ոչ, կամ արդեօք այդ գումարը ուղղակիօրէն մեզի պիտի տրուի, կրնան տարիներ քաշքշուրի», ըսած է ան:

Տենքթաշ աւելցուցած է նաեւ, թէ «սակիւ միայն բառերով չըլլար», հարց տալով, թէ ուր պիտի երթան «անոնք» որոնք զաղթականներու պիտի վերածուին:

ՌՈՒՍԻԱ - ՊԻԵԼՈՒՌՈՒՍԻԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՐԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐ

ՄԻՆԱՍԻ, 20 (ԱՅՓ).— Ռուսիոյ եւ Պիելոուսիոյ ղեկավարները Երկուշաբթի օր որոշած են թափ տայու նպատակով համարկու մի, յայտարարելով, որ Պիելոուսիա 1 Յունուար 2005ին ռուսական ռուբլին պիտի որդեգրէ իբրեւ իր սպային դրամահիշ: Յարաբերութեանց մէջ նոր փոփոխումները ցուցանելով՝ անցեալ տարուան բանակցութեան ետք միացման ծրագրին երկու կողմը, Ռուսիոյ նախագահ վլադիմիր Փութին յայտնած է, որ երկու երկիրները հետպիտէտէ աւելի խորացող յարաբերութիւններու մշակումը պիտի շարունակեն:

Միւս կողմէ երկկողմանի վեհաժողովէ մը ետք, Փութին միացեալ ամսոյ աւուրի մը ընթացքին յայտնած է, թէ «սակիւ շատ դժուար պատրաստութիւններ կ'ենթարդէ»:

Պիելոուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուրշչենքօ յայտնած է, որ ինք նախատես է, թէ դրամական միութիւնը տեղի պիտի ունենայ: Յարը Մուկուս կը շեշտէր, որ դրամական միութիւնը 2004ին պիտի իրագործուի, մինչ Մինսք պատրաստութեան համար աւելի երկարատեւ մը կը պահանջէ:

մար աւելի երկարատեւ ժամանակամիջոց մը կը պահանջէ:

Երկու ղեկավարները յայտարարած են նաեւ, թէ միացեալ գործառնութիւն մը ռուսական կապը Պիելոուսիոյ ճամբով արեւմտեան Եւրոպայի խաղաղելու համար, այս տարուան Յունիսին ընթացքի մէջ պիտի դրուի:

ԺԻՐԻՆՈՎՍԻԻ ԻՍՐԱՅԷԼ Կ'ԱՅՅԵԼԷ

ԵՐՈՒՍՏՂԵՄ, 20 (ԱՅՓ).— Ռուս ծայրայեղ ազգայնական ղեկավար վլադիմիր ժիրինովսքի, որ ծանօթ է իր հակասեմական տեսակէտներով, Երկուշաբթի օր Իսրայէլ ժամանեց ոչ պաշտօնական այցելութեան մը համար, հաղորդեց բանակին ռատիոկայանը:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Միխայիլ Պրոտսքի ըսաւ, որ ժիրինովսքի մուտքի արտօնագիր տրուած է: Պրոտսքի աւելցուց, որ ռուս ղեկավարը Իսրայէլ կ'այցելէ ընդառաջելով ռուս հրեայ ներգաղթողներու շարժումի մը հրահրին: Քանքերը ըսաւ նաեւ, որ նկատի ունենալով ժիրինովսքի ծայրայեղական տեսակէտները եւ հակասեմական կեցողութիւնը, արտաքին գործոց նախարարութիւնը քաղաքական անձնաւորութիւններուն կը թելադրէ որեւէ հանդիպում չունենալ անոր հետ:

ՊԱՂՏԱՏ ԽՈՍՏԱՅԱՒ ԱՄԲՈՋԱԿԱՆ...

Ծարուակուած Ա. ԷջԳ

Քննիչները սկսան պատրաստել գիտնականներու ցանկեր, պահանջելով գանձու հարցաքննելու: «Սառու» կը գործ նաեւ, որ ժամանակի ընթացքին, քննիչներուն ընթացքը դարձաւ գոհնի ու անընդունելի, յատկապէս՝ երբ սկսան անարգական ու վարկաբեկի կերպով խուզարկել կարգ մը մարդոց անձնական ինքնքրը, պայտուակները, օրագրերը: Քննիչներուն որդեգրած քայլերը կը բարկացնեն ու կ'ընդգեցնեն ռեժիմը, շեշտեց «Սառու», որուն կեցուածքին արձագանգեց նաեւ «Պապիլ» օրաթերթը, որ կոչ ուղղեց Պիլքսի եւ Պարատիի սանձելու իրենց քննիչները:

ՄԱԿ կը պահանջէ իրաքի սահմաններէն դուրս հարցաքննելու գիտնականները եւ հաւանական վայր կը նկատէ Կիպրոսը, որուն արտաքին գործոց նախարար Երանսքիս Քասուլիտէս ըսաւ, որ Նիկոսիա պիտի չմերժէ ՄԱԿի առաջարկը: Քասուլիտէս շեշտեց սակայն, որ Կիպրոս գիտնականները կ'ընդունին, պայմանաւ որ քաղաքական ապաստանելի իրաւունքի հարցեր չարժաբեկին եւ գիտնականներուն կեցութիւնը ըլլայ ժամանակաւոր:

Մինչ այդ, Սատտամ Հիւսէյն կը շարունակէ մարտահրահչները ուղղել Միացեալ Նահանգներուն, որոնք կ'ուզեն գիտնականներ գործողութեամբ մը վերջ տալ տագնապին եւ իշխանութեան հեռացնել Սատտամը: Բարձրաստիճան գիտնականներու հետ հանդիպումի մը ընթացքին, Սատտամ վերահաստատուած է, թէ պատերազմի մը պարագային՝ իրաք յաղթական դուրս պիտի գայ: Սատտամ շեշտած է, որ թշնամի ուժերը պարտութիւն մը պիտի կրեն յատկապէս ներխուժումի փորձի մը պարագային:

Միւս կողմէ, Ռուսիա երէկ զգուշացուց, որ Իրաքի դէմ ամերիկեան պատերազմ մը միջազգային ընտանիքը պիտի մասնակցէ կրօնական պատկանելիութեան հիման վրայ: Նախկին վարչապետ Ելեւնի Փրիմաքով դիտել տուաւ, որ Իրաքի հարցով արդէն իսկ երկփեղկուած միջազգային ընտանիքը աւելի մեծ բաժանումի մը պիտի ենթարկուի, եթէ պատերազմը յայտարարուի, որովհետեւ այդ պարագային աշխարհը պիտի մասնատուի ըստ կրօնի եւ քաղաքակրթութեան:

ԱՐԱՔՆԵՐԸ ԸՄԻՍՆՈՒԹԻՆ ՏՈՒՆ ԱՍՏԱԿԵԼՈՒ ԱՆԳԱՐԱՅԻ ԸՆԴԳԻՊՈՒՄԻՆ

Յորդանան, Փէնտագոն Արաբիա, Սուրիա եւ Եգիպտոս հաւանութիւն տուին մասնակցելու հանդիպումի մը, որ պիտի քննարկէ Իրաք — Միացեալ Նահանգներու ճակատումը խաղաղութեամբ աւարտելու կարելիութիւնները: Յորդանանի արտաքին գործոց նախարար Մուրաւա Մուաշշէր ըսաւ, որ ինչեւէ երկիրները յարմար նկատեցին հանդիպումի մասնակցելու արտաքին գործոց նախարարներու մակար-

ՀԱՎԱՍՏԱԿ ՈՒԱՇԻՆԿՈՅՆ ԿՈՂՄԵ ԲՈՒՌՆ ԸՆԴԳԻՊՈՒԹԵԱՆ

ԼԻՊԻԱ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ ՍԱԿԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ

ԺԸՆԵՒ, 20 (ԱՅՓ).— Լիպիա Երկուշաբթի օր ընտրուած է ՄԱԿի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովին նախագահը, հակառակ Մ. Նահանգներու սաստիկ ընդդիմութեան, որոնք Թրիփոլին կը նկատեն «անսանձ» երկիր մը՝ մարդկային իրաւանց չափազանց խոցելի մարդով մը:

Լիպիոյ ղեկավար Նափթ Հաֆթափի Յանձնաժողովին 53 անդամներուն 33ին զօրակցութիւնը ապահոված է, մինչ 3 երկիրներ անոր դէմ քուէարկուած են եւ 17 այլ երկիրներ ձեռնպահ մնացած՝ նախընթաց ստեղծող քուէարկութեամբ մը, որ պահանջուած էր Մ. Նահանգներու կողմէ:

Քուէարկութիւնը խոցում մըն էր համախոհութեան ճամբով նշանակումներու շուրջ համաձայնութիւն գոյացնելու սովորութեան: Անկիւ նաեւ նսեմացուցած է Թրիփոլիի թեկնածութեան դէմ ամերիկեան ընդդիմութեան կարեւորութիւնը:

«Լիպիոյ կառավարութիւնը կը շարունակէ մարդկային իրաւանց ծանրակշիռ բռնաբարոյններու ձեռնարկելը», ըսած է Մ. Նահանգներու ղեկավար Մոլի ժողովին ետք թղթակցներու, աւելցնելով, որ Լիպիա արժանի չէ «ՄԱԿի ղրութեան մէջ ղեկավար դիրք ստանձնելու»:

Ինքնին Ուաշինկթոն տակաւին նոր վերադարձած է ՄԱԿի Յանձնաժողովին՝ 2001ին իր աթոռը կորսնցրելէ ետք: Օրին այդ քայլը նկատուած էր Մ. Նահանգներու պատճելու միջոց մը՝ արտաքին քաղաքականութեան մէջ անց միակողմանի գործեղծեցին համար:

Թրիփոլի մէջ, արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Հասսունա Շաուշ ողջունած է քուէարկութեան արդիւնքները, գտնուելով «փայլուն յաղթանակ» նկատելով եւ աւելցնելով թէ անոնք ցոյց կու տան, որ Լիպիա «մաքուր էջ մը ունի ինչ կը վերաբերի մարդկային իրաւանց մարդին»:

Լիպիա, որ միակ թեկնածուն էր, առաջարկուած էր Հարաւային Աֆրիկէի կողմէ՝ Աֆրիկեան խմբակին անունով: Այդ խմբակին կարգին էր նշանակել թեկնածուն, համաձայն ղրութեան մը, ըստ որուն ամէն տարի աշխարհագրական գլխաւոր 5 շրջաններէն մէկուն կարգը կ'ըլլայ:

Յանձնաժողովին անդամ շեղող Իսրայէլի ղեկավար Եաթթու Լեւի դատապարտած է ընտրութիւնը երկիրի մը, որ հրահանգած է ճամբորդատար 2 օդանաւեր վար առնելու գործողութիւնները եւ Եւրոպայի մէջ «սիւսքոք»-ի մը ականահարումը:

Մ. Նահանգներու ղեկավար քուէարկութեան արդիւնքները «պարտութիւն» նկատուած է, յանձնաժողովին համար եւ յայտնած, թէ սակիւ առիթ մըն է Լիպիոյ համար «իսկական բարեխառնումներ» կատարելու մարդկային իրաւանց իր մարդին մէջ:

ՊԱՂՏԱՏ ԽՈՍՏԱՅԱՒ ԱՄԲՈՋԱԿԱՆ...

Ծարուակուած Ա. ԷջԳ

Քննիչները սկսան պատրաստել գիտնականներու ցանկեր, պահանջելով գանձու հարցաքննելու: «Սառու» կը գործ նաեւ, որ ժամանակի ընթացքին, քննիչներուն ընթացքը դարձաւ գոհնի ու անընդունելի, յատկապէս՝ երբ սկսան անարգական ու վարկաբեկի կերպով խուզարկել կարգ մը մարդոց անձնական ինքնքրը, պայտուակները, օրագրերը: Քննիչներուն որդեգրած քայլերը կը բարկացնեն ռեժիմը, շեշտեց «Սառու», որուն կեցուածքին արձագանգեց նաեւ «Պապիլ» օրաթերթը, որ կոչ ուղղեց Պիլքսի եւ Պարատիի սանձելու իրենց քննիչները:

ՄԱԿ կը պահանջէ իրաքի սահմաններէն դուրս հարցաքննելու գիտնականները եւ հաւանական վայր կը նկատէ Կիպրոսը, որուն արտաքին գործոց նախարար Երանսքիս Քասուլիտէս ըսաւ, որ Նիկոսիա պիտի չմերժէ ՄԱԿի առաջարկը: Քասուլիտէս շեշտեց սակայն, որ Կիպրոս գիտնականները կ'ընդունին, պայմանաւ որ քաղաքական ապաստանելի իրաւունքի հարցեր չարժաբեկին եւ գիտնականներուն կեցութիւնը ըլլայ ժամանակաւոր:

Մինչ այդ, Սատտամ Հիւսէյն կը շարունակէ մարտահրահչները ուղղել Միացեալ Նահանգներուն, որոնք կ'ուզեն գիտնականներ գործողութեամբ մը վերջ տալ տագնապին եւ իշխանութեան հեռացնել Սատտամը: Բարձրաստիճան գիտնականներու հետ հանդիպումի մը ընթացքին, Սատտամ վերահաստատուած է, թէ պատերազմի մը պարագային՝ իրաք յաղթական դուրս պիտի գայ: Սատտամ շեշտած է, որ թշնամի ուժերը պարտութիւն մը պիտի կրեն յատկապէս ներխուժումի փորձի մը պարագային:

Միւս կողմէ, Ռուսիա երէկ զգուշացուց, որ Իրաքի դէմ ամերիկեան պատերազմ մը միջազգային ընտանիքը պիտի մասնակցէ կրօնական պատկանելիութեան հիման վրայ: Նախկին վարչապետ Ելեւնի Փրիմաքով դիտել տուաւ, որ Իրաքի հարցով արդէն իսկ երկփեղկուած միջազգային ընտանիքը աւելի մեծ բաժանումի մը պիտի ենթարկուի, եթէ պատերազմը յայտարարուի, որովհետեւ այդ պարագային աշխարհը պիտի մասնատուի ըստ կրօնի եւ քաղաքակրթութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՐՈՒՆ...

Ծարուակուած Ա. ԷջԳ

Վճարովի քարոզչութեան իրաւունք՝ հանրային պատկերասփիւնին: Միւս կողմէ, ԵԱՀԿի ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդկային իրաւանց գրասենեակի կողմէ կազմուած դէտորու խումբը երէկ Երեւանի «Արմենիա» պանդոկին մէջ հաստատեց իր աշխատանքին եւ սկսաւ ղեկավարական իր առաքելութեան: Հայաստանի նախագահական ընտրութիւններուն հետեւող այս խումբին մաս կը կազմեն 16 երկիրներու 26 միջազգային փորձագէտներ՝ գլխաւորութեամբ Փիլթըր Այկերի: Կը նախատեսուի, որ ընտրութիւններուն նախօրեակին Հայաստան ժամանեն 250 դէտորու եւ, քուէարկութեան ու քուէներու հաշուումին հետեւելու եւ ընտրական ցուցակներու ստուգման համար: Անոնք նաեւ պիտի հետեւին այս ժամանակաշրջանին լրատվութիւններու կործնելու ծրագրին:



ԱՆՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆՆԵՐ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 2

ՅՈՒՆԻՍԿՈՒՄ 2003

ՆՈՐ ՏԱՐԻՆԻ ՆՈՐ ԹԱՓ, ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

2002 թուականը անցաւ իրեն հետ տանելով կարգ մը բաներ եւ Նոր Տարուան փոխանցելով ուրիշներ: Բնականաբար Նոր Տարուան գալուստով կեանքի ընթացքը կանգ չառաւ եւ ուրիշ մը չսկսաւ, այլ պարզապէս տարի մը եւս անցաւ պատմութեան գիրկը:

Կաղանդ, Նոր Տարի, տօնական մթնոլորտ. ասոնք բոլորը կարծէք նշաններ ըլլան վերակենդանանալու, վերաթարմանալու, որոշ ժամանակաշրջանի մը ծանրութիւնը թօթափելու եւ կայտառ ու աշխուժ ուրիշի մը սկսելու: Թէեւ խորքին մէջ ոչինչ կը փոխուի այդ փոխանցումով, եւ արեւը կը շարունակէ ծագիլ նոյն գեղեցկութեամբ, մարդիկ իրենց աշխատանքին կը վազեն նոյն կշռոյթով, դպրոցականները չեն դադարիր դպրոց երթալէ կամ դասեր սերտելէ, կեանքը չի փոխուի իր ուղին եւ մէկ օրէն միւսը նոր պայմաններ եւ առիթներ չ'ընծայեր մարդոց, սակայն լաւ սովորութիւն եւ բնապ դարձած է Նոր Տարուան գալուստով շրջանցում մը կատարել կեանքի մէջ:

1 Յունուար 2003ին արդէն մարդոց դէմքերուն վրայ Դեկտեմբերի վերջերուն ուրուագրուած յոգնածութեան արտայայտութիւնները կ'անհետանան, մեղմ, սակայն մնայուն ժպիտ մը կը յայտնուի անոնց մօտ, եւ ամբողջ մարդկութիւնը անխտիր կը մաղթէ, որ տարին ըլլայ բարեբեր, յաջող եւ խաղաղ:

Յունուարը տարուան մէջ կը յատկանշուի իբրեւ ծրագրաւորումի եւ նոր թափով նոր աշխատանքներ սկսելու ամիս: Նոր Տարուան հետ իւրաքանչիւր անձ կը սկսի մշակել տարուան ընթացքին իրագործելիք իր ծրագիրները եւ ճշդել նպատակակէտերը:

«Անահիտ»ը եւս ունի իր ծրագիրները, ուղեգիծը եւ նպատակը, որուն գլխաւորն է հասնիլ հայ օրիորդին եւ կնոջ ու լեցնել անոր աշխարհը:

Սակայն անոր ծրագիրներուն եւ յառաջիկային աշխատանքներուն մէջ հիմնական դեր կը կատարէ իւրաքանչիւր ընթերցող ու լիբանանահայ օրիորդ եւ կին, որովհետեւ կնոջական յաւելումով ուղղուած է անոնց: Կը հաւատանք, թէ անոնց մասնակցութիւնը այս աշխատանքներուն հիմնական դեր կը կատարէ մեր յաջողութեան երթին: Այդ իրողութենէն մեկնած՝ կը խնդրենք բոլոր մեր ընթերցողներէն, որ իրենց յօդուածները, առաջարկները, խոհագիրները եւ «Անահիտ»ի հետ կապ ունեցող որեւէ գրութիւն ուղարկեն մեզի՝ «Ապրակ»ի խմբագրատուն, եւ մենք մեր կարելիութեան սահմաններուն մէջ պիտի փորձենք տեղ տալ անոնց եւ կարելի եղած փոփոխութիւնները կատարել:

Ձեզի համար ստեղծուած այս յաւելումին յաջողութիւնը անպայման կախեալ է ձեր մասնակցութենէն:

ՀԱՅՈՒՔԻՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՆԵՐՇՆՉԱՐԱՆԸ



Յ. Այվազովսքի

ՄԵՂՍՈՒԹԻՒՆ

Այսօր եղիր քրոջ պէս -
Անչար, մաքուր եւ գթոտ,-
Գրկենք իրար ու նստինք,
Նստինք մինչեւ առաւօտ...

Այսօր եղիր որպէս մայր-
Բարի, քնքուշ, նրբապագ,-
Նստիր խաղաղ մահճիս մօտ,
Մութ գիշերին հետըս լաց...

Ամոքիր դու իմ ցաւած
Սիրտը սիրով քո անբիծ,-
Այս մոռացուած, մոռացուած
Հեքիաթները պատմիր ինձ...

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ

Գրեթէ բոլոր ժողովուրդներու պատմու-

թեան, գրականութեան եւ մշակութիւն մէջ իգական սեռի պատկանող անհատը ունեցած է իր ուղղակի կամ անուղղակի դերը եւ անոր ընդմէջէն իր դրոշմը ձգած է անոնց վրայ: Կինը ընտանիքին եւ ընկերութեան մէջ կարեւոր տարր ըլլալու կողքին, հարստացուցած է նաեւ գրականութիւնն ու արուեստը:

Նոյնն է պարագան հայ գրականութեան, որուն իւրաքանչիւր էջին վրայ եւս հայուհին եւ հայ կինը մնայուն ներկայութիւն կը հանդիսանան: Անիկա հինէն ի վեր եւ մինչեւ օրս եղած է հայ թէ օտար գրագէտներուն եւ արուեստագէտներուն ներշնչարանը: Հայ աղ-

ԿԻՆ ՄԸ, ԿԸ ՀԱՒՏԱՄ

Կին մը, կը հաւտամ, թէ կին մը նորէն կրնայ հասկնալ ու մեղքնալ զիս, Երբ ամէն, ամէն բան ըսեմ իրեն, Երբ որ մատներով շօշափէ հոգիս...

Քիչ մ'իրեն նման ըլլալու համար Իրմէ հեռացած ըլլալով հանդերձ, Գտնելուն համար ինձ հիւանդ, տկար, Հիւծած ծարաւէ՛ աղբիւրին ի մերձ:

Ո՛չ, երբեք չըսէ պիտի ան ինչպէ՞ս... Կամ ինչո՞ւ, ինչո՞ւ, կամ՝ գէշ ըրեր ես, Այլ՝ պիտի հօծէ, դժբախտ ... եւ նայի

Աչքիս մէջ այնպէս, ինչպէս վիրաւոր Եղբոր մը վէրքին, տառապած եղբոր, Եւ միայն բուժել զիս ուզէ պիտի...:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ

ջիկն ու կինը կեանքի մէջ ունեցած բոլոր դերերուն մէջ տպաւորած եւ գրաւած է հայ բանաստեղծներն ու արձակագիրները: Հայ օրիորդը բանաստեղծներուն տուած է սիրով արբեցումի, քնքուցութեան, գեղեցկութեան հանդէպ ակնածանքի, սիրոյ տառապանքի ու երջանկութեան զգացում, եւ այլն: Հայ քոյրը եղած է խնամողն ու հարազատը, իսկ հայ մայրը նկարագրուած է զանազան ու ամէնէն գեղեցիկ ձեւերով եւ ամէնէն գուրգուրոտ ու փափուկ յատկութիւններով:

Յունուար ամսուան յատուկ այս թիւով կու տանք Յունուարին ծնած հայ բանաստեղծութեան տիրական դէմքերէն վահան Թէքեանի եւ նոյն ամիս մահացած վահան Տէրեանի բանաստեղծութիւններէն նմուշներ, ուր հայ աղջիկն ու կինը ներկայացուած են անոնց գրիչով ու երեւակայութեամբ:

ملحق أزياتك

ԿԻՆ ՄԸ, ՈՐ ՓՈԽԵՑ ԻՐ ԷՈՒԹԻՒՆԸ

- Ամառնային դպրոց է հոս,- հարցնելով դռնեցիներս մտաւ վայելուչ կին մը:

- Հրամայեցէ՛ք, տիկին, հոս դպրոց չէ, այլ ԼՕԽԻ «Նարօտ Արտալեան» մանկապատանեկան գրադարանն է, ուր ընթերցումի գուգահեռ, մանուկներն ու պատանիները այլ գրադումներ կ'ունենան եւ հարուստ գիտելիքներ կ'ամբարեն:

- Ի՞նչ է ԼՕԽԻ,- տարակուսած հարցուց 25ամեայ կինը:

- Ներդուրիւն, ո՞ւր կը բնակիք եւ քանի՞ տարի է ի վեր հոս կ'ապրիք,- հարցումին հարցումով պատասխանեցի:

- Ե՛ս, ես լիբանանցի եմ, գանազան շրջաններու մէջ ապրած եմ,- յոգնած ձայնով ըսաւ ան:

«Գերյոգնած» կին մը, որ կարծես գուրկ էր անհատական հետաքրքրութիւններէ. ան ամէն առաւօտ ամուսինին գործի երթալէն ետք վերստին անկողին կը մտնէր եւ սպասուհին կ'ամբողջացներ տան աշխատանքները, խոհանոցային գործերը, նաշի պատրաստութիւնը: Քունէն կշտանալէ ետք ան կը գրադէր իր արդուգարդով, շարքով եւ գոհ կ'ըլլար, եթէ կէսօրին ամուսինը տուն չգար եւ զինք հանգիստ ձգէր: Յետմիջօրէին ան իր ժամանակը կ'անցընէր գնումներ ընելով, վարսայարդարին այցելելով, բարեկամներու հետ գրուցելով եւ այցելութիւններ տալով, իսկ իր գաւակին դաստիարակութիւնն ու խնամքը յանձնած էր ուսուցչուհի մը:

Ի՞նչ է այդ կնոջ դերը ընտանիքին մէջ եւ ի՞նչ կը սպասուի անկէ:

Հրաւիրեցի զինք նստելու եւ սկսայ անոր ծանօթացնել Լիբանանի Օգնութեան Խաչը, անոր պատմականը, 26 մասնաճիւղերու եւ այլ կառոյցներու գործունէութիւնը, անոր նպատակն ու տարած սրբազան նուիրեալ առաքելութիւնը:

Իր ընտանեկան ծանր եւ դժուար պայմաններու բերումով անիկա առիթ չէ ունեցած ԼՕԽԻն եւ անոր աշխատանքներուն մասին լսելու եւ գիտնալու:

Իրեն խորհուրդ տուի միանալու ԼՕԽԻն եւ ծառայելու այդ կառոյցին մէջ՝ յօգուտ իրեն եւ միութեան:

Փորձեցի իրեն ցոյց տալ, թէ ան իր կեանքը լեցունցած է անիմաստ եւ հոգի ու միտք չհարստացնող սին գրադումներով եւ մակերեսային հետաքրքրութիւններով: Անոր ըսի, թէ ԼՕԽԻ իր մասնաճիւղերուն եւ գործող կառոյցներուն մէջ կարիքը ունի ժպտուն դէմքերու, գուրգուրոտ ձեռքերու եւ ծառայասէր անձերու: Նշեցի, թէ ԼՕԽԻ կը փորձէ հասնիլ բոլոր առանձին եղողներուն, օգնութեան, նիւթական ու բարոյական նեցուկ խնդրողներու, ծերերու եւ մանուկներու՝ հետապնդելով գլխաւոր մէկ նպատակ՝ ժպիտ ու խաղաղութիւն տեսնել բոլորին դէմքին վրայ:

Քանի մը ամիս ետք նոյն կինը նոյն դռնէն ներս մտաւ նոյն արտաքինով, սակայն նոր հոգիով, նոր ներաշխարհով ու նոր մտածումներով: Ամբողջովին փոխուած էր կնոջ կեանքը ընտանիքին եւ իր ընկերային միջավայրին մէջ, ան եղած էր աւելի ինքնավստահ, խաղաղ ժպիտ մը կար դէմքին վրայ, ինքզինք եւ ուրիշները ուրախացնելու համար ոչինչ չխնայող եւ ուրախ: Ան իր ազատ ժամերը յատկացունցած է ԼՕԽԻն եւ անոր աշխատանքներուն, որոնց ընդմէջէն ան հարուստ ու հպարտ կը զգար:

ՌՈՒՉԱՆՆԱ ՌԻԼԻԿԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ ԼՕԽԻ «ԱՐԱՔՍԻ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՉ

ԼՕԽԻ «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին ու անոր մէջ տարած աշխատանքներուն մօտէն ծանօթանալու համար, 15 Յունուարին Լիբանանի Առաջին տիկին Անտրէ Լահուտ այցելեց կեդրոն:



Ան եղաւ կեդրոնին պատուոյ հիւրը՝ այցելելով անոր բաժանմունքները եւ ականատես ըլլալով տարուած աշխատանքին: Ան կեդրոնին նուիրեց հիւանդատար ինքնաշարժ մը:

Առաջին տիկինը եւ Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիան բացումը կատարեցին «Պուրճ Համուտի քաղաքապետութիւն» անունը կրող օտիոկրամի եւ թիմփանոկրամի գործիքներով օժտուած սենեակին: Քիթի, կոկորդի եւ ականջի ամէնէն թաքուն եւ ներքին մասերը մասնագիտական մանրակրկիտ քննութեան ենթարկող այս սարքերը կարելի եղած է գնել քաղաքապետութեան կողմէ կատարած նիւթական մեծ ներդրումով ու ԼՕԽԻ կարգ մը մասնաճիւղերու օժանդակութեամբ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՉԵՌՆԱՐԿ

Մանուկներու իրաւունքները ծանօթացնելու նպատակով ԼՕԽԻ Շրջանային վարչութեան հովանաւորութեամբ եւ քարոզչական յանձնախումբի կազմակերպութեամբ Ուրբաթ, 17 Յունուարին, «Յակօբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մանուկներու իրաւունքներու օր»-ուան նուիրուած ձեռնարկ մը: Ներկաներուն շարքին

Մանուկներու իրաւունքներէն մաս մը

- 1) Առողջութեան եւ առողջապահական խնամքներու իրաւունք:
- 2) Սննդառութեան իրաւունք:
- 3) Ուսման եւ կրթութեան իրաւունք:
- 4) Ազատօրէն մտածելու եւ արտայայտուելու իրաւունք:
- 5) Ազատութեան իրաւունք:
- 6) Ընտանեկան յարկի տակ ապրելու իրաւունք:
- 7) Ինքնութեան եւ քաղաքացիական իրաւունք:
- 8) Հանգիստի եւ ժամանցի իրաւունք:
- 9) Արդարութեան իրաւունք:
- 10) Հաւասարութեան իրաւունք:
- 11) Տնտեսական շահագործումներէ պաշտպանուելու իրաւունք:
- 12) Սեռային շահագործումներէ պաշտպանուելու իրաւունք:
- 13) Մտքով եւ մարմնով թերաճ մանուկներու հաւասարութեան իրաւունք:

էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպօ. Խաչերեան, երեսփոխան Նայլա Մուաուատ լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարաններու մեծ թիւով աշակերտներ: Յանձնախումբին անունով Անի կիտանեանի արտասանած բացման խօսքէն ետք երեսփոխան եւ խորհրդարանի մէջ մանուկներու իրաւանց յանձնախումբի նախագահ Նայլա Մուաուատ ներկայացուց մանուկներու իրաւունքներու հետապնդման հարցը Լիբանանի մէջ: Ան նշեց, թէ Լիբանան եղած է արաբական առաջին երկիրը, որուն խորհրդարանը

կազմած է մանուկներու իրաւանց յանձնախումբ: Առաջնորդ սրբազանը անդրադառնալէ ետք ընկերութեան մէջ մանուկներու ներկայացուցած կարեւորութեան, մանուկներու իրաւանց հարցը ներկայացուց քրիստոնէական դիտանկիւնէ մեկնած: Իր կարգին, մեթր իզապէլ Աբրահամեան մանրամասնութեամբ ներկայացուց մանուկներու իրաւունքները:

Չեռնարկին ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր (Թամար Իսկէնեան՝ շուրի նուագ, Անի Դարբինեան՝ ասմունք):

ԼՕԽԻ ՕՐԱՏԵՏՐ

Կազմակերպութեամբ ԼՕԽԻ Շրջ. վրչ. առողջապահական յանձնախումբի եւ «Ա. Պուլղուրճեան»ի նախագգուչական բաժանմունքին, տեղի կ'ունենայ ԼՕԽԻ կեդրոնին մէջ

- 22 Յունուար «Սեռային անտարբերութիւն զոյգերու մօտ»
- 29 Յունուար «Դաշտանադադար, Ոսկրափտութիւն»
- 5 Փետրուար «Անբացատրելի արիւնահոսութիւն իզական սեռի մօտ»
- 12 Փետրուար «Գեղձահիւթով դարմանում»
- 19 Փետրուար «Անբնական սաղմնային կազմութիւն»
- 28 Փետրուար ԼՕԽԻ «Ն. Արտալեան» գրադարանի յանձնախումբին կազմակերպութեամբ գրական հանդիպում - ճաշ

ՄԱՍՆԱՃԻՒՂԷ ՄԱՍՆԱՃԻՒՂ

«ԱՆԱՀԻՏ» ՄԱՍՆԱՃԻՒՂ (Մար Եուսէֆ - Պաուլըիէ)

1966ին հիմնադրուած, 75 անդամուհի հաշուող այս մասնաճիւղը, 24 Դեկտեմբերին ակումբին սրահին մէջ ունեցաւ ընկերային հանդիպում մը: Ձեռնարկին ընթացքին տեղի ունեցաւ մասնաճիւղի սաներուն կրթական նպաստ ապահովելու համար կազմակերպուած վիճակահանութեան վիճակաձգութիւնը: Հանդիպումը կայացաւ մտերմիկ եւ ջերմ մթնոլորտի մէջ եւ ընկերուհիները անցուցին հաճելի եւ ուրախ ժամեր:

Նշենք, թէ այս տարեշրջանին մասնաճիւղը ունի 14 սան եւ 7 ծեր, որոնց կ'օժանդակէ տարեկան եւ ամսական յատկացումներով եւ անհրաժեշտութեան պարագային ամէն ձեւով նեցուկ կը կանգնի անոնց:

«ՋԱԻՕ ՇԱՆԹ» ՄԱՍՆԱՃԻՒՂ (Ժըտէյտի)

ԼՕՆԻ «Ջալօ Շանթ» մասնաճիւղի ընկերուհիները, փափաքելով Նոր Տարւան մթնոլորտով լեցնել «Թռչնոց Բոյն»ի մանուկներուն սիրահերը, 27 Դեկտեմբերին այցելեցին անոնց եւ նուէրներով ուրախացուցին մանուկները:



1984ին հիմնադրուած եւ ներկայիս շուրջ 50 հոգի հաշուող մասնաճիւղը նոյն ամսուան ընթացքին ունեցաւ նաեւ հանդիպում - գրոյց մը, որուն ընթացքին բանախօսեց Անի Տէկիրմէնճեան: Ան մանրամասնօրէն խօսեցաւ սննդականոնին մասին, նշելով թէ պէտք է մնայուն կերպով հաւասարակչուած ուտել, խուսափել շատակերութենէ եւ ծայրայեղութիւններէ: Ապա ան պատասխանեց ներկաներուն հարցումներուն, որմէ ետք տեղի ունեցաւ նուիրատուութիւն եւ հիւրասիրութիւն:

«ՁՈՒԱՐԹՆՈՅ» ՄԱՍՆԱՃԻՒՂ (Հագմիէ)

85 ԼՕՆական հաշուող «Ձուարթնոց» մասնաճիւղի վարչութիւնը 4 Դեկտեմբերին Մխիթարեան վարժարանի սրահին մէջ կազմակերպեց տօնական մթնոլորտով աւանդական նախաճաշ:



Մխիթարեան հայրերէն Յովսէփ վրդ. Թօփալեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ գնահատեց անսակարկ նուիրումով, բարեսիրական նպատակներու համար ծառայող կիները:

Ապա խօսք առաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ Լիւսի Թօփալեան, վարչութեան աշխատանքները ներկայացնելով՝ ան ըսաւ, թէ օգնութեան կանչը կը լսուի ամէն կողմէ, եւ ԼՕՆ

իր կարելիութիւններու սահմաններուն մէջ կը փորձէ հասնիլ բոլորին, օժանդակութեան ձեռք երկարել ծերերուն, մանուկներուն եւ բոլոր անոնց, որոնք կարիքը ունին նիւթական եւ բարոյական աջակցութեան:

Ձեռնարկին ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, տեղի ունեցաւ վիճակահանութիւն, նուիրատուութիւն եւ ձեռագրի աշխատանքներու վաճառք:

«ՀՌԻՓՍԻՄԷ ՍԱՍՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃԻՒՂ (Ֆանար)

Ֆանարի հայաշատ շրջանին մէջ 1972 թուականէն ի վեր գործող եւ ներկայիս 144 անդամներ իր շուրջ համախմբած մասնաճիւղը 20 Նոյեմբերին

ունեցաւ ճաշի ձեռնարկ մը: Վարչութեան ատենապետ Սիրուն Սարեանի բացման խօսքին յաջորդեց երաժշտական ճոխ յայտագիր մը, որուն ընթացքին մեկնաբանուեցաւ ժողովրդական, գաւառական եւ Սայաթ Նովայէն երգեր: Տեղի ունեցաւ նաեւ վիճակաձգութիւն եւ նուիրատուութիւն:

ՀԱՅԱՇԵՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

19 Նոյեմբերին Հայաշէնի ժողովրդային տան «Սեդրակ Աճէմեան» սրահին մէջ տեղի ունեցաւ 123 անդամ ունեցող եւ 1937ին հիմնադրուած Հայաշէնի մասնաճիւղին նախաճաշ- դասախօսութիւնը:



Մասնաճիւղին ծրագիրները ներկայացուց ատենապետ Շաքէ Պաղտասարեան, որմէ ետք օրուան նիւթը՝ «Կուրծքի եւ արգանդի քաղցկեղը», ներկայացուց տղթ. Նազարէթ Արրահամեան: Ան ծանօթացուց այն հանգրուաններուն, որոնց պէտք է հետեւիլ հիւանդութեան յայտնաբերման եւ արագ բուժման դիմելու համար: Բժիշկը ներկայացուց հիւանդութեան տեսակները, յառաջացման պատճառները եւ այս մասին յաւելեալ տեղեկութիւններ տուաւ:

Ձեռնարկի աւարտին ան պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

«ԱՂԻՐԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂ (Սիւ)

1933ին Լիբանանի մէջ հիմնադրուած ԼՕՆԻ երկրորդ մասնաճիւղը, որ այսօր կը հաշուէ 340 անդամ, իր աշխատանքներու ծիրին մէջ Նոյեմբեր ամսուան ընթացքին ունեցաւ ընկերային հաւաքոյթ մը Ս. Սարգիս եկեղեցույ «Բակուր Աղասարգիսեան» սրահին մէջ:



Ներկաներուն բարի գալուստ մաղթեց ատենապետ Մարօ Մանճեան, որ ըսաւ, թէ ձեռնարկին նպատակն է ապահովուած նիւթականով օժանդակել կարիքաւորներուն:

Ձեռնարկին մթնոլորտը ճոխացաւ գեղարուեստական յայտագիրով, գաւառական, ազգային եւ ժողովրդական երգերով:

«ԱՂԱՆԻ ՓԱՓԱՉԵԱՆ» (Չալքա)

Նոյեմբեր ամսուան ընթացքին 1980ին հիմնադրուած եւ 140 անդամ ունեցող Աղանի Փափազեան մասնաճիւղը ունեցաւ հանդիպում մը «Գարեգին Նժդեհ» սրահին մէջ:

Անի Տեկիրմէնճեան ներկաներուն ծանօթացուց առողջ ապրելու եւ լաւ ձեւով ուտելու ձեւերուն:




Ան խօսեցաւ սննդականոնին, անոր անհրաժեշտութեան եւ լաւ արդիւնք ստանալու համար պէտք եղած ձեւերուն դիմելու մասին:

Ներկաները համտեսեցին ընկերուհիներուն պատրաստած անուշեղէնները:

ԳԵՂԵՑՎԱԳԻՏԱԿԱՆ

ՔԱԹՐԻՆ ՏԷՕՆԷՕՎ

«ԱՍԷՆ ԲԱՆ ՀԱԻԱՍԱՐԱԿՇՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ Է»



Ֆրանսական շարժապատկերի մեծագույն աստղերէն Քատրին Տէօնէօվ, հակառակ իր յառաջացած տարիքին, տակաւին կը ճառագայթէ իր վայելչութեամբ եւ գեղեցկութեամբ: Երբ նշանաւոր դերասանուհիին հարց կը տրուի, թ ի՞նչ է իր գեղեցկութեան գաղտնիքը, ան կ'ըսէ, թէ իր ասպարէզին ամբողջ տեւողութեան զգուշացած էր ծայրայեղութիւններէ, յատկապէս ինչ կը վերաբերի ուտելիքին, եւ ամէն անգամ որ «մեղանշած» է, յաջորդ օրը չուտելով փոր-

ձած է ծանրութիւնը հաւասարակշռել:

Տէօնէօվի կարծիքով ամէն բան հաւասարակշռութեան հարց է, չափազանցութիւնն ու ծայրայեղութիւնը կը ծերացնեն մարդը:

Ինչ կը վերաբերի հագուածքին եւ շպարին, Տէօնէօվ «Իվ Սէն Լօրան»ի հաւատարիմ յաճախորդուհին է. ան բոլորին ծանօթ է իր դասական ոճով, մեղմ շպարով եւ մազի շատ դասական յարդարանքով:

Վերջապէս, երբ հարց կը տրուի անոր, թէ ի՞նչպէս կը թօթափէ օրուան յոգնութիւնն ու սքրէսը ան կը պատասխանէ՝ «Քալելով, քալելը լաւագոյն դեղն է...»:

Եւ քանի որ գեղեցկութեան մասին կը խօսինք, ահաւասիկ՝ գեղեցկագիտական քանի մը հնարներ.

Դէմքին ծերութիւնը եւ կնճիռները կանխարգիլող լաւագոյն սնունդներէն մէկը թթիմորն է: Բաժակ մը խնձորի կամ խաղողի հիւթին մէջ ապուրի դգալ մը թթիմոր լուծեցէք եւ օրական բաժակ մը խմեցէք:

Դէմքի կնճիռներէն ձերբազատելու այլ միջոց մըն է մեղրով ծեփուկը: Ապուրի երկու դգալ մեղր աւելցուցէք ձեր դէմքի ամէնօրեայ սերին եւ այս խառնուրդով օրական մարմեցէք ձեր դէմքին կնճիռները, ապա ծեփուկը դէմքին վրայ կէս ժամ պահելէ ետք ցողուեցէք գաղջ ջուրով:

Աչքի շուրջի կնճիռները թեթեւցնելու համար ձեր դէմքի սերին խառնեցէք հաւկիթի ճերմկուց մը եւ այդ խառնուրդով ծեփեցէք ձեր աչքին շուրջը: Կէս ժամ ետք ցողուեցէք գաղջ ջուրով:

ԼՕԽԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
 Բեմադրիչ: **ՆԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ**
 Լիբանանի մէջ կը ներկայացնէ

«WELCOME TO GLENDALE»
 կատակերգութիւնը 2 արարով

Ուրբաթ 7 Փետրուար 2003, ԿԱԼԱ,
 Եարաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8.30ին,
 Կիրակի 9 Փետրուար 2003, ցերեկոյթ, կէսօրէ ետք ժամը 4.00ին,
 «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:
 Տոմսերը ստանալ
 Լ.Օ.Խ.ի Զեւարուեստի խանութքն, Զամազգայիցի Գրատունը,
 Anto Sport-էն, Longine Զաստատութիւն - Վաչէ Աղամեան -
 Ժայ Էլ Տիպ, Գրատուն Կոմիտաս - Չօքակ Էլ Եւոֆ,
 Լ.Օ.Խ.ի Երջանային Վարչութեան Գրասենեակէն:



Ո՞րք եւ ե՞րբ ծխել
 Ծխախոտը վառելէ առաջ կենցաղավարութեան տարրական օրէնքը կը պահանջէ, որ ստուգենք, թէ ձեր գտնուած վայրին մէջ ծխելը արտօնուած է: Եթէ այո, պէտք է նաեւ հաւանութիւնը առնենք մեր շուրջիմներուն:

Պատշաճութիւնը կը պահանջէ, որ կարգ մը վայրերու մէջ հրաժարիմք ծխելէ, այդ վայրերէն յիշենք՝ հիւանդանոցներ, երեխաների, գերեզմանատունը, եւ այլն...

Ծխելու ատեն ծխողը պէտք է գոյշանայ իր արտաշնչած ծուխը դիմացինին դէմքին փչելէ, վառած ծխախոտը մոխրամանին մէջ մխացնելէ եւ սենեակը ապականելէ կամ ճաշի պահուն ծխախոտի անախորժ մոխրն ու հոտը տարածելէ:

Ի՞նչպէս ծխել
 Ծխելն ալ իր վայելչութիւնը ունի. այդ թէ կին ծխախոտին տուփը պէտք է տեղաւորէ յատուկ ամանի մէջ եւ պայուսակին մէջ, եթէ կին է, իսկ գրպանը, եթէ տղամարդ է: Զգուշանալ ծխախոտին տուփը ձեռքը բռնած պտտելէ:

Ծխելէ առաջ կը բանանք տուփը, ծխախոտ մը կիսովին դուրս կը հանենք եւ նախ կը հրամցնենք շուրջիմներուն, ապա կը վերցնենք մերը:

Կին մը երբեք տղամարդուն ծխախոտը չի վառեր, այլ կը բաւարարի հրահանը կամ լուցկին առաջարկելով:

Կենցաղավարութիւնը կը պահանջէ, որ տղամարդ մը ի՛նք վառէ ծխող կնոջ մը ծխախոտը:

Հին նախապաշարումի մը համաձայն, նոյն լուցկիով պէտք չէ երեք ծխախոտ վառել...

Վերադառնալով ծխելու «արարողութեան» մշտնապէս, թէ վառած լուցկին մարելու համար գայն օդին մէջ աչ ու ձախ չենք շարժեր, այլ պարզապէս կը փչենք:

Երբ ուրիշին կրակ կ'առաջարկենք կամ կը խօսինք, ծխախոտը մեր շուրթերուն մէջ պահած չենք մնար:

Կենցաղավարութիւնը կը պահանջէ, որ ծխելով ճաշարան, ցուցարան կամ հիւանդանոց չմտնենք:

Ծխախոտը մինչեւ ծայր չենք ծխեր եւ կը մարենք մի միայն մոխրամանին մէջ, եւ ոչ թէ սուրճի գաւաթին, ճաշի պնակին կամ բոյսի թաղարին մէջ ճզմելով: Նոյնպէս անվայել եւ վտանգաւոր է ծխախոտը գետին մտնելն ու կօշիկով ճզմելը:

Եթէ ծխախոտին հոտն ու ծուխը իսկապէս կ'անհանգստացնէ մեզ, հեռանանք ծխողին մօտէն, բացատրելով, որ ծխախոտին ծուխը շունչի մեղմութիւնը կը պատճառէ ձեզի. եթէ ան իսկապէս փափկանկատ անձ մըն է, ահասկած պիտի մարէ իր ծխախոտը:

ԾՈՎԱՆՈՒՇ

(21 ՅՈՒՆՈՒԱՐԷՆ 19 ՓԵՏՐՈՒԱՐ)

Ծովանուշը ձմրան եղանակին պատկանող երկրորդ կենդանակերպի նշանն է. ան կը խորհրդանշէ օդին մէջ պարող ձիւնի փաթիլները:

2003 տարին ծովանուշին համար վերիվայրումներու, արկածախնդրութիւններու տարի մը պիտի ըլլայ, իսկ տարուան առաջին քանի մը ամիսներուն մեծ դժուարութիւններ պիտի դիմագրաւէ, բայց Իւրանոս մոլորակին ազդեցութեան տակ հարցերը քիչ-քիչ պիտի հարթուին:

ՍԻՐՈՅ մէջ բոլոր ամպերը պիտի չքանան, եւ երկինքը պիտի պայծառանայ, կարգ մը բարեկամութիւններ ամուսնութեամբ պիտի աւարտին: Ծովանուշին լաւապէս հասկցողները պիտի ըլլան՝ Խոյր, Կշիռքը եւ Այծեղջիւրը:


ԱՌՈՂՋԱԿԱՆ գետնի վրայ, Փետրուարէն Ապրիլի միջեւ շղային եւ դիւրագրգիռ պիտի ըլլաք, բայց Յուլիսի պայծառ արեւը լաւատեսութիւն պիտի բերէ: Տարուան մեծագոյն թշնամին կրիփը պիտի ըլլայ եւ գայն լաւ չղարմանելու՝ պարագային կրնաք «տապալի»...

ԳՈՐԾԻ մէջ տարուան կիսուն Ծովանուշը կարելոր պայմանագրութիւն մը կրնայ կնքել եւ մեծ շահեր ապահովել: Տարեվերջին ասականի յաւելում մը անհաւանական չէ:

Ծովանուշին յատկութիւններէն թուենք՝ խնայասիրութիւնը, բծախնդրութիւնը, համբերութիւնը, բայց նաեւ՝ անհաղորդականութիւնը, մեծամտութիւնը, կասկածամտութիւնը եւ հետաքրքրութիւնը:

Եղանակներու հետ կապուած իրադարձութիւններէն յիշենք, որ Գարնան գործի մէջ մրցակցութիւն մը տեղի պիտի ունենայ, ամրան ընտանիքին մէջ համերաշխութիւն պիտի տիրէ, աշնան նիւթական կայունութիւն պիտի ստեղծուի եւ, վերջապէս, ձմրան կարելոր պայմանագրութիւն մը կրնայ կնքուիլ:

Ծովանուշին մոլորակն է Իւրանոսը, իսկ քարն է մեղեխիկը (amethyste), որ կը խորհրդանշէ ներքին խաղաղութիւնը, խոնարհութիւնը, հետաքրքրութիւնը եւ այլասիրութիւնը:



ՆՆՋԱՍԵՆԵԱԿԸ

Ննջարանը ամէն բանէ առաջ սիրոյ բոյն եւ քնանալու տեղ է: Մասնագէտներու կարծիքով, անհկա շատ պարզ յարդարուած պէտք է ըլլայ եւ հոն ամբողջական ներդաշնակութիւն պէտք է տիրէ:

ՍԽԱԼՆԵՐ՝ ՈՐՈՆՑՄԷ ՊԵՏԷ Ե ԽՈՒՍԱՓՈՒ

Ննջասենեակը կարելի եղածին չափ հեռու պէտք է ըլլայ գլխաւոր պողոտայէն եւ աղմկալից ետուգեղէն:

Բաղնիքը պէտք չէ ննջասենեակին անմիջական քովը ըլլայ:

Երբեք պատկերասփիւռ պէտք չէ գետեղել ննջասենեակը:

Աքրուարիոս, ծովու տեսարանով նկարներ, ջուրով լեցուն խոշոր ծաղկամաններ հեռու պէտք է մնան ննջասենեակէն. չինացիներուն կարծիքով, ջուրը վտանգաւոր անհաւասարակշռութիւն ստեղծող տարր է:

Մահնակալին վրայ պահարան կամ դարաններ պէտք չէ հաստատել, անոնք գլխուցաւ կը պատճառեն եւ արեան շրջագայութեան արգելք կը հանդիսանան, ինչ որ բնականաբար անքնութեան դուռ կը բանայ:

Թելադրելի գոյներ

Որպէսզի ննջասենեակը իր նպատակին ծառայէ, նախ պէտք է խճողուած չըլլայ, ապա անոր գոյները խնամքով ընտրուած պէտք է ըլլան: Մասնագէտներու կարծիքով, թանձր եւ

մուօ գոյնի թաւշեայ վարագոյրները, զարդարուն եւ մեծ ջահերը, պատերը ծածկող նկարները եւ մուօ գոյնի կարասիներ ջղագրգիռ կը դարձնեն եւ անքնութիւն կու տան:

Ննջասենեակի մը գոյները պէտք է ըլլան մեղմ ու բաց, ինչպէս՝ մանիշակագոյն, վարդագոյն, կապույտ, պէժ, եւայլն...

Կահոյքը

Մահնակալը պէտք է ըլլայ գետնէն առնուազն 45 սմ. բարձր: Անոր տակ սնտուկներ, պալուսակներ պէտք չէ տեղաւորել:

Մահնակալին սնարին ետին պատուհան պէտք չէ ըլլայ, պատուհանը անապահովութիւն կը ստեղծէ եւ քունը կը խանգարէ: Գլխուն ետին ապահով գոց պատ մը ունենալը կ'օգնէ շատ արելի հանգիստ քնանալու:

Պահարանը թող ըլլայ պարզ, փեղկերը միշտ գոց, իսկ հայելին՝ ներսէն: Հայելին իր կարգին քունը խանգարող տարր է:

Գետնի պարագային, նախընտրել տախտակամածը (փարքէն) կամ շարժական թեթեւ կարպետ մը: Ամբողջովին հրաժարիլ ծայրէ ծայր տարածուած եւ գետնին փակած վատաւորող մոքէթներէն:

Լուսատրուսը իր կարգին պէտք է ըլլայ շատ մեղմ, իսկ կարդալ փափաքելու պարագային օգտագործել անկողինին կողքին գետեղուած լուսամփոփը:

Ահաւասիկ շատ պարզ եւ դիրքին միջոցներ՝ հաճելի ննջասենեակ մը ունենալու եւ խաղաղ ու հանգիստ քնանալու:

www.aztagdaily.com

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԷՃԻ ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ՝ ԴՊՐՈՑԻՆ ԳՈՒՐԳՈՒՐՈՏ ՄԱՅՐԸ



Իւրաքանչիւր տան մէջ հիմնական եւ անփոխարինելի տարր հանդիսացող մայրը իր հոգածութեամբ, սիրով, տնեցիներուն կեանքին մէջ խաղացած կարեւոր դերով, փափուկ ձեռքերով եւ ակնածանքով լեցուն աչքերով կը հանդիսանայ այդ կառույցին շունչ ու կեանք տուող էակը:

Նոյնն է պարագան մարդկութեան կեանքին եւ յատկապէս լիբանանահայ իրականութեան մէջ գրեթէ ամէն տեղ գտնուող եւ աշխուժ գործունէութիւն ծաւալող տիկնանց յանձնախումբերուն, որոնք փաստօրէն իրենց աշխատանքով կ'օժանդակեն այդ իրականութեան բարելաման եւ զարգացման գործընթացին:

Այդ իրողութենէն մեկնած՝ «Անահիտ»ին մէջ յատուկ բաժին պիտի տրամադրենք այդ յանձնախումբերուն, որոնց առաջինը կը հանդիսանայ Ազգային Եղիշէ Մանուկեան Քոլէճի անմիջական կարիքներուն իբրեւ գոհացում յառաջացած տիկնանց յանձնախումբը, որ կազմուած է աշակերտներու մայրերէ: Յանձնախումբը գոյութիւն ունեցած է Մարտիկեան վարժարանի օրերէն եւ իր աշխուժ գործունէութիւնը ունեցած է մնայուն կերպով: 4 - 5 տարի առաջ կարիքը զգացուած է գործող յանձնախումբին կողմէն յառաջացնելու ծնողներէ զատ, այլ կիներէ կազմուած տիկնանց օժանդակ յանձնախումբի մը եւ այդ երկու կազմերը սկսած են գործել միասնաբար՝ հաշուելով 16 անդամ:

Տնօրէնութեան եւ խնամակալութեան կողմէն գտնուող եւ անոնց հետ միասնաբար՝ աշխատանք տանող այս յանձնախումբը ունի իրեն յատուկ գործելաձեւ մը, տարեկան ծրագիրներ եւ յստակ նպատակներ:

Յանձնախումբին աշխատանքը ունի երկու



հիմնական ուղղութիւն՝ բարոյական քարոզչական եւ նիւթական:

Նկատի ունենալով, որ յանձնախումբին մեծ ա մ ա ս ն ու թ իւ ն ը դպրոցին ծնողներէն կազմուած է, անոնք ծնողական աչքով կը դիտեն հարցերը, կը մօտենան անոնց եւ տնօրէնութեան ուշադրութեան կը յանձնեն այն պարագաները, որոնց առաջը կարելի է առնել, եւ կամ՝ փոքր հարցեր եւ կացութիւններ,

որոնք աւելի դիւրին կրնան լուծուիլ եւ հարթուիլ յանձնախումբին ու տնօրէնութեան միացեալ աշխատանքով: Անոնք նաեւ իրազեկ կը դառնան դպրոցին դժուարութիւններուն, նպատակներուն, տարեկան ծրագիրին եւ երազներուն եւ ասկէ մեկնած՝ կը կողմնորոշուին ու կը գործեն: Յանձնախումբին անդամները նաեւ դպրոցին ու անոր աշակերտութեան վերաբերող հարցադրումներուն կրնան պատասխանել եւ այդ առնչութեամբ յաւելել ուղղութիւն եւ տեղեկութիւններ տալ, ըստ պարագայի: Իրենց այդ կողմնակի աշխատանքով անոնք ձեռով մը սատարած կ'ըլլան դպրոցի պատկերին ճշգրիտ ներկայացման եւ առկայ հարցերուն կամ դժուարութիւններուն շրջանցման: Անոնք այսպիսով կը կամրջեն տնօրէնութեան եւ ծնողներուն միջեւ:

Անոնք նաեւ կ'այցելեն այն ծնողներուն, որոնք հիւանդ պարագայ ունին, դժուար կացութիւններ կը դիմագրաւեն, մահ կամ դժբախտ իրողութիւններու դէմ յանդիման են: Անոնք ձեռով մը այս պարագաներուն կը ներկայացնեն վարժարանը եւ բարոյական նեցուկ կը կանգնին անոնց:

Բնականաբար տիկնանց յանձնախումբը իր նպաստը կը բերէ նիւթական կարիքներուն: Ան տարուան ընթացքին կը կազմակերպէ աւանդական նախաճաշի կամ ճաշի զոյգ ձեռնարկներ, որոնց ընթացքին տեղի կ'ունենան վիճակաձգութիւն, նուիրատուութիւն, որոնք բաւական կուրծիկ գումար մը կ'ապահովեն յանձնախումբին: Անոնք նաեւ կ'օժանդակեն վարժարանի զոյգ պազարներուն՝ կաղանդի եւ Զատիկուան:

Գիտակցելով մօր կարեւորութեան եւ անոր անփոխարինելի արժէքին՝ յանձնախումբը տարեկան դրութեամբ կը ձեռնարկէ մայրերու նուիրուած հանդիսութեան մը, որուն ներկայ կը գտնուին հիւրեր եւ ծնողներ:

Իրենց աշխատանքներէն գոյացած նիւթականը բերեմն, ըստ յանձնախումբի որոշումին, անմիջապէս կը փոխանցուի տնօրէնութեան՝ յատկացուելու համար դժուարութիւններ ունեցող աշակերտներու արձանագրութեան եւ զանազանքին: անոնք նաեւ դպրոցին նիւթական կարիքներէն մէկը կը փակեն շօշափելի գոյքեր գնելով դպրոցին, ինչպէս՝ վարագոյր, խաղալիք,

վառարան եւ այլն: Անդամուհիները կը դիմեն ազգայիններու՝ հովանաւորներ եւ նուիրատուներ ապահովելու համար, ինչպէս նաեւ կ'օժանդակեն վարժարանի զանազան ձեռնարկներու եւ հանդիսութիւններու տոմսերու վաճառքին:

Անոնք անպաշտօն կերպով տնօրէնութիւնը ամբողջացնող մարմին մը կը հանդիսանան վարժարանին մէջ:

Լիբանանեան ծանր տնտեսական եւ ընկերային վատ պայմաններուն պատճառով վերջին 3 տարիներուն յանձնախումբը նաեւ իր ուսերուն առած է տարեկան շուրջ 40 ծնուղքի ուստեսադէնով օժանդակութիւնը: Տարին նուազագոյնը 2 անգամ՝ կաղանդին եւ Զատիկին յատուկ ծրարներ կը տրամադրեն վարժարանի այն ընտանիքներուն, որոնք վատ պայմաններու մէջ կ'ապրին: Կայ նաեւ մնայուն կերպով, ընկերային ծառայողին հետ համադրաբար, ըստ կարիքի, հագուստներու ապահովում:

Ուսուցչաց տօնին առիթով, խնամակալութեան հետ գործակցաբար, յանձնախումբը տարուան ընթացքին նուիրեալ աշխատանք տանող ուսուցիչները գնահատելու եւ անոնց շնորհակալութիւն յայտնելու նպատակով զանոնք ճաշի կը հրաւիրէ:

Յանձնախումբը նաեւ կը կազմակերպէ դասասուսական 4 - 5 ձեռնարկներ գեղազիտական, մանկավարժական, հոգեբանական բնոյթով՝ վարժարանի ծնողներուն եւ այլ կիներու եւ օրիորդներու համար:



Յառաջիկայ աշխատանքներուն կարգին յանձնախումբը ունի նախաճաշի ձեռնարկ, Զատիկուան ճաշի պազար, ինչպէս նաեւ ամառը՝ դաշտագնացութեան ծրագիր:

Կաղանդի պազարը յանձնախումբին տարած վերջին աշխատանքն էր, որ տեղի ունեցաւ 14-էն 24 Դեկտեմբերին, վարժարանին մեծ սրահին մէջ, ուր ծախուեցան կաղանդի զարդարանքներու կամ նուէրի վերաբերեալ առարկաներ: Հոն կային նաեւ ձեռագին աշխատանքներ, ջրաներկ նկարներ, մշակութային արժէք ունեցող կտորներ եւ այլն: Պազարը ունեցաւ առնուազն 2 հազար այցելող:

Անոնք նաեւ անմիջական կապի մէջ են աշակերտներուն հետ եւ կ'օժանդակեն դպրոցի կրպակի աշխատանքներուն՝ մարզական օրերուն կամ այլ աշակերտական հանդիսութիւններու անմիջական օժանդակութիւն ցուցաբերելով:

Փաստօրէն կարելի է ըսել, թէ յանձնախումբը իր գործունէութեամբ եւ վարժարանին մէջ տարած աշխատանքով կը հանդիսանայ անոր հոգատար եւ անսակարկ նուիրուած գործող մայրը:

ՍՈՐՎԻԼԸ ԱՐԴԻՒՆԱՒԵՏ ԵՒ ՀԱՃԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ...

Դպրոցական տարեշրջանը գրեթե իր կիսուն հասած է եւ շատեր կը պատրաստուին կիսամեայ քննութիւններու: Աշակերտ, ուսուցիչ թէ ծնողք բնականաբար մտահոգ են եւ՝ իրարանցումի մէջ: Մանուկին կամ պատանիին կրթական կեանքին մէջ անմիջական եւ գլխաւոր դերակատարութիւն ունի տան մթնոլորտը եւ մայրը յատկապէս: Ան այն անձն է, որ անմիջական ներկայութիւն է զաւակին կեանքին մէջ, իւրաքանչիւր վայրկեան եւ հանգրուան: Մայրը իր վարուելակերպով եւ տուած ուղղութիւններով իր դրոշմը կը դնէ երեխային ապագայի կերտման կամ... քանդումին վրայ: Այդ իրողութենէն մեկնած՝ այս բաժինով պիտի փորձենք կարգ մը թելադրանքներ եւ ուղղութիւններ տալ, որպէսզի քննութեան շրջանին եւ անոր նախօրեակին, երբ աշակերտները արդէն իսկ ծանրաբեռնուած եւ ճնշուած կը զգան, ծնողները աւելի եւս չբարդացնեն կացութիւնը, այլ օգնեն խաղաղ եւ հանդարտ մթնոլորտ ստեղծելով իրենց զաւակներուն համար:



Բացարձակ իրողութիւն է, որ կեանքի մէջ ընդհանրապէս եւ կրթական մարզին մէջ յատկապէս քննութենէն քանի մը օր առաջ իրերանցումը եւ կուտակուած դասերը սորվելու եւ իւրացնելու փորձերը շատ յաճախ ձախողութեամբ կը պսակուին: Հետեւողական աշխատանքը, իրարայարող հանգրուաններով կատարուած սերտողութիւնը եւ տարուան ընթացքին մանուկին եւ պատանիին շուրջ ստեղծուած հանդարտ ու հանգիստ մթնոլորտը մեծապէս կը նպաստեն անոր յաջողութեան: Ասկէ մեկնած՝ կը շեշտենք, թէ քննութիւններու յաջողութեան գրաւակները կը սկսի դպրոցական տարեշրջանի առաջին օրէն եւ կը հասնի մինչեւ աւարտ:

Տարուան ընթացքին եւ քննութիւններու նախօրեակին աշակերտին ուղղակի եւ անուղղակի ձեւով նեցուկ կանգնելու համար պէտք է նկատի ունենանք հետեւեալ կէտերը.

- Երբեք արհամարհական խօսքեր չուղղենք մեր զաւակներուն եւ չգործածենք «Մոյլ ես, անհոգ ու անպէտք ես» բառերը, որովհետեւ մանուկը, երբ մնայուն կերպով կը լսէ այս արտայայտութիւնները, կը սկսի համոզուիլ, թէ

ինք իրապէս ծոյլ եւ անկարող է: Այս պարագային մենք անուղղակի ձեւով կրնանք քանդել մեր զաւակին ապագան, որովհետեւ շարունակ նոյն արտայայտութիւնները լսելով, երբ ան համոզուի, թէ ինք ծոյլ է, ինքնաբերաբար կը դադրի սորվելէ կամ աւելի լաւ ըլլալու փորձ ընելէ, այն տրամաբանութեամբ, թէ անոնք ապարդիւն են, եւ թէ ինք արդէն անկարող է:

- Անհրաժեշտ է, որ քաջածանօթ ըլլանք մեր զաւակներուն դրական եւ ժխտական կողմերուն եւ անոնց վրայ հիմնուելով ակնկալութիւններ եւ պահանջներ ունենանք անոնցմէ: Բնաւ պէտք չէ երեւակայական ակնկալութիւններով ապրիլ եւ մանուկէն պահանջել, որ զանոնք իրականացնէ, որովհետեւ մօր պահանջին ընդառաջելով եւ աւելի լաւ ընելու փորձին ընթացքին ան կրնայ զգալ, թէ ինք դժուարութիւններու դիմաց է եւ կրնայ յուսահատիլ ու իրեն համար կարելին նոյնիսկ անկարելի սեպել:

- Չանոնք մղենք գիտնալու իրենց յարմար սորվելու ձեւերը եւ յարգենք զանոնք, անշուշտ՝ տրամաբանական սահմաններու մէջ, օրինակ՝ քանի մը վայրկեան հանգիստ, դպրոցէն ետք որոշ ժամանակ մը հանգիստ, ապա

դաս, բարձր ձայնով կարդալ եւ այլն:

- Տունը հանդարտ ու լուռ պահենք, խուսափինք սերտողութեան ժամերուն հիւր ընդունելէ, բարձր խօսելէ, հեռատեսիլին ձայնը բարձրացնելէ, աղմուկ աշխատանքներէ:

- Դպրոցական կամ սերտողութեան ժամերուն երեխան չխանգարենք բժշկական կամ այլ ժամադրութիւններով եւ փորձենք միշտ տունը ներկայ ըլլալ անոր հետ:

- Մղենք մեր զաւակները թիրախներ ունենալու եւ անոնց համար ծրագիրներ մշակելու: Սորվեցնենք անոնց, թէ պէտք է հետեւիլ անոնց իրագործման եւ հսկել ծրագրի իրականացման համար դրուած գործելաձեւի յաջողութեան: Ծրագիր ունեցող եւ անոր իրականացման համար աշխատող անձը ինքնավստահ կ'ըլլայ:

- Անոնց սորվեցնենք, թէ իւրաքանչիւր ձախողութիւն ինքնին նոր առիթ է յաջողութեան:

- Վարժեցնենք, թէ փոխանակ մնայուն կերպով ուրիշներու հարցնելու, իրենք պրպտեն եւ գտնեն իրենց հարցումներուն պատասխանները, անշուշտ՝ կարելիութեան սահմաններուն մէջ:


- Սովորութեան վերածենք օրական տրուած նիւթերը պատրաստել, վերաբաղ ընել, որովհետեւ որեւէ նիւթ, որ մանուկները կը սորվին, կրնան 24 ժամուան ընթացքին մոռնալ, եթէ վերաբաղ չընեն:

- Անհրաժեշտ է, որ մանուկները անդրադառնան, որ երբ օրին պէտք եղած ժամանակը չեն տրամադրեր ճշդուած դասին, յառաջիկային նոյն նիւթը սորվելու համար յաւելեալ ժամ եւ ճիգ պէտք է տրամադրեն:

- Պէտք չէ ճնշենք երեխան եւ ըսենք, թէ որոշ ժամանակի մէջ պէտք է տրուած նիւթը իւրացնէ եւ անցնի յաջորդին:

- Առանց ոստիկանի վերածուելու, ընկերաբար պէտք է հետեւիլ անոր դասերուն, ունեցած դժուարութիւններուն եւ հսկել, որ անիկա սորվի բոլոր դասերը եւ ամբողջացնէ պարտականութիւնները:

Եթէ վերոյիշեալ կէտերը բնական եւ մնայուն կերպով կիրարկուին, սորվողը համեմատաբար աւելի արդիւնաւէտ եւ հաճելի կը դառնայ, իսկ քննութիւնները՝ պարզապէս ինքզինք վերատեսուութեան ենթարկելու եւ սորվածները կրկին սերտելու եւ վերաբաղ մը ընելու առիթ:



Ո՞՞ ՄԵՆԳՎԱՐԱՐ ՃԱՇԵՐՆ ՈՒ ՄԵՐ ՉԱՒԱԿՆԵՐԸ

ղուծիլն կու տան, մինչ շաքարներն ու իւղոտ անուշեղէնները անոնց մօտ թուլուծիլն եւ քուն կը յառաջացնեն, որովհետեւ զանոնք մարսելու համար մարմինը մեծ համեմատութեամբ ուժանիւթ կը սպառէ եւ յոգնածութեան զգացում կը յառաջացնէ մանուկին մօտ: Այս պատճառով մասնագէտները խորհուրդ կու տան ծնողներուն իրենց զաւակներու ուտելիքին ուշադիր ըլլալու եւ այսպիսով օգնելու, որ անոնք աւելի արթուն, աշխուժ եւ կեդրոնացող ըլլան:

Աշակերտներուն մարմնական կարիքները կը տարբերին դասարաններու եւ հանգրուաններու համեմատ: Մանկապարտէզին մէջ մանուկները պէտք ունին տեսակաւոր ուտելիքի, ինչպէս՝ պտուղներ, բանջարեղէններ եւ կենսանիւթ, մինչ նախակրթարանին մէջ պէտք է ուշադիր ըլլալ, որ պատանիները սպառեն բանջարեղէններ ու պտուղներ, սակայն՝ կարելի եղածին չափ քիչ իւղոտ ճաշեր (առաւելագոյնը շաքար երեք անգամ), որովհետեւ այդ շրջանին անոնց մարմինը հակում կ'ունենայ իւղեր կուտակելու: Միջնակարգի աշակերտները պէտք ունին շաքար երեք անգամ կարմիր միս ուտելու, մէկ անգամ ձուկ եւ առատ կաթ կամ կաթնեղէն, որովհետեւ մարմինը այդ շրջանին պէտք կ'ունենայ երկաթի եւ քալսիումի: Այս շրջանին անոնք կը սկսին իրենց կերածին ուշադիր ըլլալ չգիրնալու համար: նախընտրելի է, որ օրական երեք գլխաւոր սնունդի ժամերը պահել եւ խուսափիլ իւղերէ եւ տուրմերէ՝ անոնց առողջութեան շնորհիւ համար:

Բոլոր հանգրուաններուն ալ անհրաժեշտ են հացն ու ջուրը, որոնք ոչինչով կը փոխարինուին:

Գրեթէ բոլոր ծնողներուն մտահոգութիւններուն մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէ իրենց զաւակներուն սննդականոնի հարցը, որովհետեւ անոնք ընդհանրապէս կը խուսափին ճաշ ուտելէ եւ կը նախընտրեն տուրմը, տապկուած գետնախնձորը եւ ֆասթ - ֆուտը: Խորքին մէջ մանուկներուն ու պատանիներուն համար կարեւորն ու քաջողականը իրենց կերածներուն համը է եւ ոչ անոնց տուած սնունդը, որովհետեւ անոնք այդ տարիքին չեն գիտակցիր, թէ ինչը անհրաժեշտ է իրենց աճման եւ առողջութեան համար:


Այս հարցը խորքին մէջ ծնունդ առած է Միացեալ Նահանգներէն, ուր լայն տարածում գտած է ֆասթ - ֆուտը: Վերջին ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ այս երեւոյթը սկսած է հասնիլ ամէն տեղ, եւ արձանագրուած թիւերը մօտեցած են վտանգաւոր եւ ահազանգային սահմաններու:

Այս երեւոյթին ի տես՝ ծնողները կը գտնուին իսկական հարցի մը դէմ յանդիման, որովհետեւ մանաւանդ մանկութեան եւ պատանեկութեան տարիներուն երեխաները պէտք ունին որոշ սնունդի, որպէսզի իրենց մարմինը բնական եւ առողջ ձեւով աճի: Տուրմի, տապկուած գետնախնձորի եւ այլ այս տեսակի ուտելիքներու սպառումով մանուկները իւղ եւ անպէտք նիւթեր կը կուտակեն իրենց մարմիններուն մէջ եւ կ'ունենան առողջապահական զանազան հարցեր, որոնք կը պատճառեն մարմնական եւ մտային թերութիւններ եւ նոյնիսկ կանխահաս մահ:

Մանուկը իր կազմաւորման առաջին շրջանին կարիքը ունի մեծ համեմատութեամբ բնաթելի (փրոթէին), որ յատկապէս կը գտնենք միսին, հաւուն եւ ձուկին, ինչպէս նաեւ ընդեղէններու (ոսպ, լուբիա, եւ այլն) մէջ: Երեխան պէտք ունի նաեւ բանջարեղէններուն եւ պտուղներուն հայթայթած զանազան տեսակի կենսանիւթերուն (վիթամին):

Ուսումնասիրութիւններն ու աշխատասիրութիւնները ցոյց տուած են, թէ սննդարար ճաշեր ուտող եւ օրուան ընթացքին կանոնաւոր ժամերու երեք անգամ սնունդ ստացող աշակերտները աւելի լաւ կ'ըլլան իրենց դասերուն մէջ եւ աւելի կը յառաջդիմեն:

Ըստ անոնց, խորքին մէջ քարպոհայտրէյթը եւ կենսանիւթերը կուշտ կը պահեն մանուկը եւ անոր յաւելեալ աշխուժութիւն եւ կեդրոնանալու կարո-



ՉԻՆՎԻԿՈ ՄԵՆԳՎԱՐԱՐ ՃԱՇԵՐ ԶՈՒՅԵՐ ... ԻՆՉ ԸՆԵՄ

- Ծնողքին պարտականութիւնն է փոքր տարիքին մանուկին վարժեցընել, թէ տան մէջ պատրաստուած ճաշը ուտելը ձեւով մը ստիպողական է եւ մաս կը կազմէ կարգապահութեան:

- Երբ մեր զաւակը տակաւին չի գիտեր տուրմին եւ տապկուած գետնախնձորին համը, ան պիտի չփափաքի անոնք ուտել, ուրեմն կարելի եղածին չափ ուշ տուրմ տալ փոքրիկին եւ միշտ սահմանափակել անոր սպառումը (շաքար անգամ մը):

- Դպրոց երթալէն ետք բնաւ չմտածել փոքրիկը զրկել իր ստացած չնչին գումարէն, որպէսզի ան իր հացերն ու պտուղները ուտէ, որովհետեւ ասիկա կրնայ աւելի գէշ հետեւանքներ ունենալ, այլ պէտք է անոր խոստումներ տալ եւ համոզել, թէ տան ճաշը աւելի լաւ է, եւ թէ ան պիտի օգնէ իր մարմնի կառուցման եւ զօրացման:

- Մանուկը մեզի հետ խոհանոց տանինք եւ զայն քաջալերենք, որ պտուղի աղցան պատրաստէ մեզի հետ, որովհետեւ ան բնականաբար պիտի ուզէ համտեսել իր պատրաստած աղցանը եւ կամ այդ դիւրին ճաշերը, որոնց եփելուն մէջ ան կրնայ դեր ունենալ: Կրնաք նաեւ ճաշերուն տալ հետաքրքրական եւ գեղեցիկ ձեւեր, որոնք աւելի եւս պիտի գրաւեն մանուկը:

- Զգուշ ըլլալ, որ երեխաները անպայման լաւ նախաճաշ ընեն, կաթ խմեն, տան մէջ պատրաստուած պտուղի անուշ ուտեն, որովհետեւ նախաճաշը կը նկատուի օրուան գլխաւոր սնունդը, որ աշխուժութիւն եւ սնունդ կու տայ ամբողջ օրուան ընթացքին: Կաթը չսիրելու պարագային յանձնարարելի է, որ զայն տաք այլ կաթնեղէններու ճամբով:

- Մանուկը կամ պատանին ծանօթացնել պտուղներուն եւ բանջարեղէններուն եւ խօսիլ անոնց առաւելութիւններուն եւ շաքարեղէններուն ու տապկուած գետնախնձորի թերութիւններուն եւ վնասներուն մասին: Անուշեղէնիօրէն այս բաները քանի մը անգամ կրկնելով՝ մանուկը կրնայ համոզուիլ:

- Եթէ տունէն դուրս չկարենանք հետեւիլ անոր ուտելիքին, տան մէջ պէտք է անպայման հսկել, ընկերանալ անոր ճաշած ատեն եւ զբաղեցնելով մղել ուտելու, որպէսզի մանուկները առողջապահական հարցեր չունենան: